

1952

84

7-68

18 85

20 03

1016. - Բ. Ժողով. Տեղեկանք, Տեղեկություն
Բանասիր. Խմբի.

Հրատարակ. «Մեզու Հայաստանի» լրագրի.

Ա. ԴՕԴԷ

ԱՆՏՈՒՆ ԱՆՏԻՐ

(Բ Է Գ)

Թարգ. օր. Թ. Տէր-Գրիգորիանց.

Յ Փ Խ Ի Ս

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Մ. Թ Օ Տ Ի Ն Ե Ա Ն Ց

1885

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



84

7-68

100

1016
արմ
1016^a

1016^a

Հրատարակչի «Մեղու Հայաստանի» Լրագրի

84

Ա. ԴՕԴԷ

Դ-68

ԱՆՏՈՒՆ ԱՆՏԻՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

(վ է Գ)

Թարգմանեց օր. Թ. Տէր-Գրիգորեանց.

Տփլիս.

Ի ՏՊԱՐԱՆԻ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑ.

1885



ՅԱՌԱՋԱԲՈՆ

«Մեղուի» մէջ հրատարակեցինք Ա. Դօդէի «Անտուն Անտէր» (Ջեկ) վեպի թարգմանութիւնն, որ և առանձին զընթացով ահա հրատարակվեցաւ: Վիպասաններ վերջին տարիները մեր մէջ բաւական թուով երեւցան. բայց նոցա մեծամասնութիւնն աւելի ստուեր են վիպասանների, քան իսկական վիպասաններ, և այդ շատ բնական է, քանի որ ոչ այն գիտութիւնն ունին, թափանցելու համար կեանքն, որից նորա նիւթ են առնում և ոչ էլ նոյն իսկ գրութեան արհեստին են հմուտ: Մենք ներկայ բէաւկան ուղղութիւնը ներկայացնող Ա. Դօդէի՝ երեւելի վիպասանի վերոյիշեալ վեպը աննշան համառօտութեամբ թարգմանելով և տպելով նպատակ ունեցել ենք մեր վիպասանների և ընթերցողների առջև դնել մի օրինակ, որին նորա արագացող ծախսաբանաց ժամանակ հետեւել կարողանային: Իսկ թարգմանութեան ոճին և ձևերին ընթերցողք պէտք է ներողամիտ գտանվին, քանի որ նա նախ թարգմանութիւն է և երկրորդ, որ դեռ ևս նորաբողբջ աշխատողի երկասիրութեան պտուղ է:

Дозволено цензурою Тифлисѣ.
13-го Іюня 1885 года.

50568-ահ



36202-66

9-

... 1) Գեղեցկությունը էլ մե... 2) Գեղեցկությունը... 3) Գեղեցկությունը... 4) Գեղեցկությունը... 5) Գեղեցկությունը... 6) Գեղեցկությունը... 7) Գեղեցկությունը... 8) Գեղեցկությունը... 9) Գեղեցկությունը... 10) Գեղեցկությունը... 11) Գեղեցկությունը... 12) Գեղեցկությունը... 13) Գեղեցկությունը... 14) Գեղեցկությունը... 15) Գեղեցկությունը... 16) Գեղեցկությունը... 17) Գեղեցկությունը... 18) Գեղեցկությունը... 19) Գեղեցկությունը... 20) Գեղեցկությունը... 21) Գեղեցկությունը... 22) Գեղեցկությունը... 23) Գեղեցկությունը... 24) Գեղեցկությունը... 25) Գեղեցկությունը... 26) Գեղեցկությունը... 27) Գեղեցկությունը... 28) Գեղեցկությունը... 29) Գեղեցկությունը... 30) Գեղեցկությունը... 31) Գեղեցկությունը... 32) Գեղեցկությունը... 33) Գեղեցկությունը... 34) Գեղեցկությունը... 35) Գեղեցկությունը... 36) Գեղեցկությունը... 37) Գեղեցկությունը... 38) Գեղեցկությունը... 39) Գեղեցկությունը... 40) Գեղեցկությունը... 41) Գեղեցկությունը... 42) Գեղեցկությունը... 43) Գեղեցկությունը... 44) Գեղեցկությունը... 45) Գեղեցկությունը... 46) Գեղեցկությունը... 47) Գեղեցկությունը... 48) Գեղեցկությունը... 49) Գեղեցկությունը... 50) Գեղեցկությունը... 51) Գեղեցկությունը... 52) Գեղեցկությունը... 53) Գեղեցկությունը... 54) Գեղեցկությունը... 55) Գեղեցկությունը... 56) Գեղեցկությունը... 57) Գեղեցկությունը... 58) Գեղեցկությունը... 59) Գեղեցկությունը... 60) Գեղեցկությունը... 61) Գեղեցկությունը... 62) Գեղեցկությունը... 63) Գեղեցկությունը... 64) Գեղեցկությունը... 65) Գեղեցկությունը... 66) Գեղեցկությունը... 67) Գեղեցկությունը... 68) Գեղեցկությունը... 69) Գեղեցկությունը... 70) Գեղեցկությունը... 71) Գեղեցկությունը... 72) Գեղեցկությունը... 73) Գեղեցկությունը... 74) Գեղեցկությունը... 75) Գեղեցկությունը... 76) Գեղեցկությունը... 77) Գեղեցկությունը... 78) Գեղեցկությունը... 79) Գեղեցկությունը... 80) Գեղեցկությունը... 81) Գեղեցկությունը... 82) Գեղեցկությունը... 83) Գեղեցկությունը... 84) Գեղեցկությունը... 85) Գեղեցկությունը... 86) Գեղեցկությունը... 87) Գեղեցկությունը... 88) Գեղեցկությունը... 89) Գեղեցկությունը... 90) Գեղեցկությունը... 91) Գեղեցկությունը... 92) Գեղեցկությունը... 93) Գեղեցկությունը... 94) Գեղեցկությունը... 95) Գեղեցկությունը... 96) Գեղեցկությունը... 97) Գեղեցկությունը... 98) Գեղեցկությունը... 99) Գեղեցկությունը... 100) Գեղեցկությունը...

Ա. ԴՕԴԷ

ԱՆՏՈՒՆ ԱՆՏԻՐ

(Չ Է Պ)

I

— Զեկ, այժ, այժ Զեկ, — պատասխա-
նեց իդան քահանային, — անունը դըր-
վում է և արտասանվում է Անդիա-
կան ձևով... Իմ որդու կնքահայրը անդ-
լիացի էր, լօրդ Պեմբոկը, գեներալ մա-
յօր հնդկական բանակի Դուք, կարելի
է, նրան ճանաչում էիք: Նա պատկա-
նում էր ամենաբարձր, ո՛հ, այժ, հայր
աբբայ, ամենաբարձր արխտոսկրատիա-
յին... Եւ ինչպէս նա ապրում էր... Նա
մեռաւ զարհուրելի մահով Սինգափո-
րումը, մի քանի տարի առաջ, որսի
ժամանակ, որը սարքել էր նրա համար
ռաջաներից մէկը... Այդ ռաջաները իս-
կապէս փոքր թագաւորներ են. լօրդ
Պեմբոկին անուանում էին... ո՛հ, Աս-
տուած իմ, անունը լեզուիս ծայրին է,
Ռամա, Ռապայ...

— Խնդրեմ ներողութիւն, տիկին,—
ընդմիջեց նրան տեսուչը, ակամայ ժըպ-
տալով այդ խօսքերի վերայ: Իսկ Զեկ
անունից յետոյ— ինչ կը հրամայէք գրել:

Թեք ընկնելով սեղանի վերայ, որի
վերայ նա գրում էր փոքր ինչ զլխա-
կոր, քահանան աչքի ծայրով նայում էր
նրա առաջ նստած երիտասարդ տիկնոջ
վերայ, որի մօտ կանգնած էր նրա Զե-
կը:

Նա էր իսկապէս հոյակապ, նոր ձե-
ւով և տարվայ եղանակին համեմատ
հագնուած անձն, (այս պատահեցաւ
դեկտեմբեր ամսին 1858 թուականին):
Նրա հագուստի ճոխութիւնը վկայ էր
տիկնոջ մեծ հարստութեան, նա ունէր
իւր կառքը: Նա ունէր շատ փոքրիկ
գլուխ, շատ դեղեցիկ, շարժուն, ժպտող
երես, պարզ, մաքուր աչքեր և սպիտակ
ատամներ, որոնք ամեն բոլորէ երևում
էին: Մի բան այս շարժուն դէմքի վե-
րայ, այն է, թէ ներքին հաստ չլիւծեքը
և թէ նեղ ճակատը ցոյց էին տալիս
մտածողութեան սահմանափակութիւն:

Երեսնան, եօթ կամ ութ տարեկան
բարձրահասակ մանուկ, հագնուած էր
անգլիական ձեւով, ինչպէս պահանջում
էր նրա անունը,—տիկնոր ոտներով: Հա-
գուստը համեմատ էր տարիքին, բայց
ներդաշնակ չէր նրա երկար հասակին և
հաստ վզին, և կարծես նեղացնում էր
նրան: Դէմքով նա նմանում էր մօրը,
բայց աւելի քնքոյշ էր և ճոխ: Հայեաց-
քը խորն էր, ճակատը լայն, բերանի
արտայայտութիւնը աւելի ծանր: Նա
կանգնած էր, կպած մօրը և ժամանակ
առ ժամանակ գցում էր քահանայի և
բոլոր շրջապատող առարկաների վերայ
հետաքրքիր ու երկչոտ հայեացք: Նա,
կարծես, խոստացել էր չը լալ:

Երբ քահանան պնդեց իմանալ երե-
խայի մականունը, մայրը վրդովեցաւ
և շտապով ասաց.

— Բայց ինչ եմ անում. ես ամենին
մոռացայ ասել իմ անունս. նա հանեց
գրպանից և տուեց քահանային իւր այ-
ցետոմսը, Իդա-դէ-Բարանսի վերնագրով:
Տեսուչը ժպտաց:

Նոյն մականունը կրում է և ձեր որդին:

Նա պատասխանեց հաստատապէս, և կրկին սկսեց ճկճկալ:

Տեսուչը վերջապէս համոզվեց, որ այդ տիկինը կարող է միայն արատաւորել իւր ուսումնարանը, և առաջարկելով նրան անկատարելի պայմաններ, ազատվեց վտանգից:

Իդան յուսահատութեամբ վերադառնում է տուն, բայց նոր դարդարանքը տալիս է ուրիշ «ւղղութիւն» նրա մտքին, նա հագնւում է և գնում է խնջոյք, իսկ Զեկը մնում է առաջվայ մանկավարժական հանգամանքների — ծառաների ընկերութեան մէջ: Այս անգամ աղախինը ձիապանի հետ խորհրդակցութեան ժամանակ վերջնականապէս վրձուեց Զեկի ամբողջ կեանքի վրձակը:

— Սպասեցէք — ընդմիջեց ձիապան Օգիւտը աղախինին, որն խօսում էր քահանայի բացասութեան մասին. — ես իմանում եմ մէկ ուսումնարան, ո՛հ, ինչպէս է... գիմնազիա Մի... Մորոնվալ, —

այո՛, այսպէս է: Նս կարծեմ ունէի և յայտարարութիւն դրա մասին:

Նա կոխեց ձեռքը զրպան և մի լըրազրի կեղտոտած կտոր հանեց:

Կոնստանսը կարդաց բարձր ձայնով.

«Գիմնազիա Մորոնվալ, 25, Մոնտէնի փողոց. Փարիզի ամենալաւ մասումը: Ընտանեկան դաստիարակութիւն: Մեծ պարտէզ: Ուսանողների թիւը սահմանափակ է: Կրթութիւնը Մորոնվալ — Դէկորստեր» մեթոդով և այլն և այլն:

Կարդալն շարունակվում էր, բայց Զեկը, որ ներկայ էր, ոչինչ չէր լսում, նա քնեցաւ և մինչդեռ նրա ապագան քննվում էր ամեն կողմանէ ձիապանի, խոհարարուհու և աղախինի միջնորդութեամբ, և մայրը զուարճանում էր, յայտնի չէ ուր, — նա տեսաւ երազումը քահանային, և լսում էր այն խօսքերն որով քահանան նրանց ձանապարհ զրցեց. «խեղճ երեխայ»:

Մոնտենի փողոցը, ուր տեղաւորվում էր Մորոնվալի գիմնազիան, ձիշգ Փարիզի ամենալաւ թաղումն էր, Ելիսեան

դաշտերի կենդրոնումը, բայց և ինչպէս ամեն նոր չինած չը վերջացրած փողոց ունէր մի քիչ խառնիխուռն կերպարանք. ճոխ հիւրանոցների մօտ երեւում են արհեստաւորների բնակարաններ, խրճիթներ, որոնց պատուհաններից լըսւ վում են մուրճի ձայներ. 1858 թուականին, Մոնտէն փողոցին կից էին մի քանի կեղտոտ նուրբ փողոցներ, որոնք կազմում էին հակապատկերը նրանց չըջապատող ճոխութեան, այդ նուրբ փողոցներից մինը սկսվում էր № 25 տան մօտից:

Ահադին վերնագիրը դրան գլխին իւր ոսկէ տառերով ցոյց էր տալիս, որ այստեղ տեղաւորվում է Մորոնվալի գիմնադիան, բայց ով մտնում էր այդ դըռները, խրվում էր սև, հօտած, երբէք չը ցամաքող ցեխի մէջ, այն ցեխի, որ ամեն ժամանակ չըջապատում է նոր չինուածքները: Նրբափողոցի միջով անցնում էր առուակ, այստեղ և այնտեղ երեւում էին խեղճ հիւրանոցներ, չինած հին տախտակից, — այդ բոլորը միասին

վերառած, երևակայութիւնը յետ էր տանում մեզ քառասուն տարի առաջ: Չէր կարելի իրան հարց չը տալ, ինչպէս այս փոքր տարածութեան վերայ տեղաւորվում է այսպիսի բազմադոյն ժողովուրդ: Այստեղ, ինչ կը կամենայիք, կար—անգլիական ձևով հադնված սենեկապաններ, և սոցա հետ զանազան ցնցոտիք, ամեն երեկոյ, արեգակի մայր մտնելից յետոյ, այստեղ յետ էին դառնում չնավաճառներ, կրկէսի գաճաճներ իրանց փոքրիկ ձիաներով, աղքատներ ամեն տեսակ, մէկ խօսքով ամեն կերպի սինլքոր:

Մորոնվալի գիմնադիան այստեղ ճիշդ իւր տեղն էր: Որը մի քանի անգամ մի բարձրահասակ և չորացած մարդ, երկար մազերով, լայնածոպ գլխարկով, շտապ քայլերով անցնում էր նրբափողոցը, նրա հտեից վազում էին վեց հատ երեխայք, որոնց երեսները զանազան գոյնի էին սկսած բաց պղնձէ գոյնից մինչև սևը: Գոքա բոլորն էլ հագած էին հին շորեր, որոնք շատ ներ-

դաշնակ էին իրանց չրջապատող հանգամանքին: Այդ մարդն էր ինքը Մորոնովալ, գիմնադիայի տեսուչը, իսկ զանազան գոյնի երեխայքը — նրա աշակերտները: Իդա-դէ-Բարանսին աֆսպէս վերդոված էր իւր առաջվայ անյաջողութիւնից, որ չը վճռեց ինքն տանել իւր որդուն այդ գիմնադիան, այլ յանձնեց աղախնին տանել նրան աֆստեղ:

Մէկ ցուրտ, տխուր, ձիւնային առաւօտ, ոսկէ տառերով վերնադիր ունեցող դրան մօտ կանդնեցաւ կառքը, որից դուրս եկաւ Կոնստանսը, Ջեկի ձեռքը բռնած, և ուժով սկսեց զանգահարել. սկզբումը ոչ ոք չ'երևեցաւ, յետոյ այցելուների վերայ ուղղուեցան հետաքրքիր հայեացքներ փոքր պատուհանից, որ շինված էր դրան վերայ: Կոնստանսը սկսում էր կորցնել համբերութիւնը, երբ որ յանկարծ դռները բացուեցան և նրա մէջ երևեցաւ ինքն պ. Մորոնովալ: Նա տուեց ձեռքը օր. Կոնստանսին, և տարաւ նրան մեծ պարտէզի միջով, որ չըրջապատում էին հին ոճով շինուած զա-

նազան շինուածքներ, որն և հասկանալի է, եթէ ուշադրութիւն դարձնենք, որ պ. Մորոնովալի ճարտարամտութիւնը ձիւնների լուսանկարի սենեակը դարձրել էր ուսումնարան: Մառուղիներից մէկումը նոցա պատահեցաւ փոքրիկ նեզրն, աւելով և գործելով, նա երկիւղածութեամբ ճանապարհ տուեց, իսկ պ. Մորովալ անցնելիս բղաւեց նրան.

— Վառարանը վառի՞ր հիւրասենեակում:

Նախադգուցութիւն — որն աւելորդ չէր, որովհետեւ ընդարձակ սենեակում սաստիկ ցուրտ էր: Պ. Մորոնովալը առաջարկեց օր. Կոնստանսին աթոռ, նրա կինը, փոքրիկ կինարմատ, երկար երեսով, ներքս մտաւ այցելուների ետևից. փայփայեց Ջեկին, և իսկոյն սկսեցին խօսակցութիւնը: Մորոնովալ իսկոյն պահանջեց երեք հազար ֆրանկ, բացի նախապատրաստութիւնից:

Ասելով թոշակի չափը, նա սկսեց, այդպիսիսի դէպքերին յարմար իւր երգը:

Երեք հազար ֆրանկ, մի քանիսին, կարելի է, շատ թուայ,—այո՛, այո, նա ինքն էլ դրա հետ համաձայն է։ Բայց Մորոնվալի գիմնազիան ոչինչ հասարակաց չունի ուրիշ ուսումնարանների հետ. այստեղ ոչ թէ միայն հոգս են տանում աշակերտների կրթութեան մասին, այլ և ծանոթացնում են նրանց փարիզի կեանքի հետ, նոքա գնում են թատրոն, գնում են հասարակութիւն, ներկայ են մատենադրական վիճաբանութեանց ճեմարանումը, նոցա մէջ աշխատում են դարդացնել մարդկային զգացմունքներ, նոցա ծանոթացնում են ընտանեկան կեանքի հետ, կրթութիւնը սրանից չէ փնտրում, ընդհակառակն, շատ ուսումնականներ, դեղարուեստականներ մասնակցեցան այդ մարդասիրական գործին, իբրև ուսուցչապետներ զանազան գիտութեանց, պատմութեան, երաժշտութեան, մատենագրութեան։ Տեսչի այդ երկար ճառը ամենևին ասպեցրեց Կոստանսին, նա շտապեց յայտնել, որ գնի հարցը ոչինչ չէ նշանակում նրա և նրա

տիրուհու աչքերումը, նրանք միայն ցանկանում են տալ երեխային արիստոկրատիկական կրթութիւն, որի վերայ Մորոնվալ նկատեց, որ նրան յանձնված է նորին կայսերական մեծութեան Դահոմէի թագաժառանգի կրթութիւնն ևս, և նա, առանց պարծենալու կարող է ասել, որ այդ երեխայից ամենալաւ մարդ է կրթել։ Այստեղ աղախինի յափշտակութիւնը անսահման էր, նա շուտով առաջարկեց առաջին քառամսեայ վարձը։ Զեկը շատ տխուր էր։

Այս Մորոնվալը չար պէտք է լինի։ Բացի սրանից, այս անսովոր ուսումնարանումը երեխան զգում էր իրան հեռու, շատ հեռու իւր մօրից... Սեղանի մօտ, տիկին Մորոնվալը և Կոնստանսը հծծում էին, նրան վերայ նայելով, նա շատ լաւ լսեց, ինչպէս փոքրիկ կինարմատը երկու անգամ հծծեց, խեղճ երեխայ։—Վերջապէս Կոնստանսը հանեց քսակից և դարսեց սեղանի վերայ բանկայի տոմսակներ, ոսկի... Պարզ է, որ նա մնում է։

Այս րոպէին սենեակը ներս մտաւ հաստ, կարճահաս պարոն, կարճ կտրած մազերով և երկճեղք մօրուքով:

— Հիւրասենեակումը վառարանը վառվում է, — րացականչեց նա երգիծական դարմանքով, — այ շուայլութիւն: Անշուշտ էլի մէկ նորին ևնք որսացել: Տեսնելով օտար կինարմատին, երեսային, փողերի կոյտը, նա կանգնեցաւ, իսկ Մորոնվալը դարձաւ դէպի աղախինը. Պարոն լաբասենդր, կայսերական երաժշտական ճեմարանի ուսուցչապետը, երգեցողութեան մեր ուսուցիչը:

Լաբասենդրը հէնց կարողացաւ գլուխ տալ, երբ դռները կրկին բացուեցան, և սենեակ ներս մտան էլի երկու պարոններ: Առաջինը, շատ տղեղ էր, սպիտակ մազերով, անմօրուք, հագած հին, մինչև վերև կոճկած բաճկոն, ակնոցներով, որն վկայ էր նրա կարճատեսութեանը, էր բժիշկ Հիրշը, թուարանութեան և բնական գիտութեան ուսուցչապետը: Երկրորդը — շատ զանազանվում էր իւր ընկերից, դա էր բաւական չնորհալի երի-

տասարդ, մաքուր հագնված, սպիտակ ձեռնոցներով, յետ դցած մազերով, որը աւելի մեծացնում էր նրա անսահման ճակատը, ցրված, արհամարհող հայեացքով, թաւ շեկ բեխերով, լայն և հիւանդոտ երեսով: Նրա վերայ ցոյց տալով, Մորոնվալ ասաց.

— Մեր մեծ բանաստեղծը, մատենագրութեան ուսուցչապետ պ. Ամօրի դ'Առժանտօն:

Առանց գիտնալու պատճառն, այդ մարդու մէջ Ձեկը իսկոյն գուշակեց իւր ապագայ «թշնամուն» և չ'սխալվեց:

Խօսակցութիւնը կոնստանսի և Մորոնվալի մէջ վերջացաւ, նա ասաց «մնաս բարև», Ձեկը լալիս էր և թղաչում էր նրան որ խնդրէ մօրը նրան այցելելու: Նրա արտասուները կարող էին դուր չը գալ պ. Մորոնվալին, բայց բարեբաղդաբար պ. տեսուչը մտածեց ճանապարհ գցել օր. կոնստանսին մինչև ի կառքը, որովհետև կառքը խիստ տպաւորութիւն արեց նրա վերայ և ստիպեց աւելի ներողամտաբար նայել նորեկի վշտի վերայ: Խեղճ նորեկ:

Էվարիստ Մորոնվալ, փաստաբան և մատենագիր, եկաւ Փարիզ, 1848 թուականին իբրեւ քարտուղար Գվադէլուպայի պատգամաւորի հետ: Գա էր 25 տարեկան երիտասարդ, լի փառասիրութիւնով և ախորժակով, բայց կրթված և խելօք: Նա հաշտվել էր իւր կախեալ դժբութեան հետ, ցանկանալով ձրի հասնել Փարիզ:

Իսկոյն գալուց յետոյ նա թողեց իւր պատգամաւորին, գտաւ մի քանի ծանօթներ և վճռեց սկսել փաստաբանութիւն, բայց շուտով երևեցաւ, որ նրան էլ ինչպէս ամեն կրէօնների վատ արտասանութիւնը կազմում է անյաղթելի արգելք յաջողութեան համար այս ասպարիզում: Նա փորձեց գրել, երևեցաւ որ Փարիզումը այնպէս էլ հեշտ չէ գըռնել մատենագրական համբաւ, բացի սորանից նա հպարտ էր, ոչ մի խմբագրատան չէր կարող հաշտ մնալ: Այն ժամանակ սկսվեցաւ նրա համար զարհուրելի կեանք, նա կերակրվում էր միայն հացով, որն և ուտում էր փողոցներում

Թաքուն տաքանում էր կրակների մօտ եկեղեցիներումը և դրադարաններումը: Նա ուսուցիչ դարձաւ ամեն առարկայի, գրում էր մարդասիրական տետրներ, յօդուածներ էնցիկլոպէդիաների համար տողը կէս սանտիմով, գըրեց միջին դարերի պատմութիւնը երկու հատորում, իւրաքանչիւրը 25 ֆրանկով... Նա աշխատում էր ամբողջ երեք տարի, վերջապէս կորցնելով վերջին երազած յոյսերն և փչացնելով իւր ստամոքսը. պատահմամբ մտաւ իբրեւ ուսուցիչ անգլիական լեզուի, Գեկոստը քոյրերի ուսումնարանը, որոնցից մեծերն անցել էին քառասուն տարին, իսկ կրտսերը երեսունի մօտ էր, սրան էլ սպառնում էր մշտական կուսութիւնը:

Մորոնվալ առաջարկութիւն արաւ, նա համաձայնվեցաւ: Սկզբումը նորապսակները ապրում էին մեծ քոյրերի հետ, բայց շուտով փեսայի անտանելի բնաւորութիւնը ստիպեց նրանց բաժանել իրանցից քրոջը, նոքա տուին նրան 30,000 ֆրանկ:

Ինչ անէր այս փողերը: Մորոնվալը ընկաւ մտածմանց մէջ, նա գիտէր, որ ամենահեռաւոր երկիրներէն — Պարսկաստանից, Ճապոնիայից, Հնդկաստանից, — փարիզ ուղարկում են երեխայք կըրթվելու նշանաւոր գումարով: Նա հասկացաւ ձեռնարկութեան օգուտն և բաց արաւ իւր երեկելի գիմնադիւան: Սկզբում աւագ աշակերտները լսում էին դասախօսութիւններ ձեմարաններից մէկում, յետոյ Մորոնվալը տեսաւ, որ աւելի լաւ է դարձնել իւր դպրոցը մասնաւոր ուսուցիչների գիմնադիւան, և հաւաքեց իւր շուրջը բոլոր հիւրանոցների իւր վաղուցվայ ծանօթներին, բժշկին առանց դիպլոմի, բանաստեղծին առանց հրատարակչի, երգչին առանց բեմի...

Մորոնվալն ինչպէս և քահանան, շուտով հասկացան թէ ինչ անձն է Զեկի մայրը, և սկսեց առաջին օրերից մտածել թէ ինչպէս գրաւէ իդա-դէ-Բարանսիին, կամ կոմսուհուն, ինչպէս նա սովորաբար նրան անուանում էր: Վճռված էր ի պատիւ նրան կազմել մատեն-

նագրական երեկոյ, որպիսին դեռ եղած չէր Մորոնվալ-Գէկոստերի գիմնադիւանում: Դուռը լուսաւորված է լապտերով, հիւրասենեակում վառված էին երեսուներեք աւելի մոմեր: Մորոնվալը խնայողութիւն չարաւ հրաւէրների վերաբերութեամբ և երբ որ մթնեցաւ հիւրերը ըսկսան հաւաքվել: Ծիծաղելի էր նայել այս աղքատների վերայ, իրանց անմիտ պահանջներով, իրանց հպարտութիւնով, անսովոր դիրքով, բայց միւս կողմից, մաշուած զգեստի վերայ զրօշմած էր այնպիսի դառն կարիք, որ դուք ակամայ կը ժպտայիք տեսնելով այս փայլուն աչքերը, այն երեսները, որոնց վերայ դեռ չէին հանդել յոյսերի վերջին ճառագայթները: Այս պարոններից շատերը եկել էին իրանց կանանց հետ: Բացի սրանից, այստեղ կային մի քանի մատենագրական հնութիւններ, մի քանի անորոշ անձինք, մէկ մշտաշուտ պարոն, որին համարում էին շատ ուռեալ, որովհետեւ նա կարդացել էր

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

36202-66



ամբողջ Պրուդոնն, միւսը Հիրշի ներկայացրածը, իբրեւ Բուրցեկիոսի եղբոր որդի էր, վերջապէս իրանք ուսուցչականները, Լաբաստենդրը, Լաւ հազնված, ժամանակ առ ժամանակ երգելով իւր երգն, որն չատ սիրում էր, և դ'Արժանտոնը, դանդրամազ, օծած, ծանրաբարոյ և փառահեղ: Կոմսուհին դեռ չը կայ:

Դ'Արժանտոնը, Մորոնվալի խնդիրքով վճռեց արտասանել իւր բանաստեղծութիւնը, «Հաւատոյ սիրավիր Հանգանակը» վերնադրով: Կանգնած վառարանի մօտ, յետ գցած մազերով, բարձր բռնած գլխով բանաստեղծը կարդում էր իւր ոտանաւորները:

Նա ներս մտաւ...

Դ'Արժանտոնը, հայեացքը գցած առաստաղի վերայ, չը նկատեց նրան, բայց նա, թշուառը, տեսաւ նրան, և այս րոպէից ամեն ինչ նրա համար վերջացած էր:

Մինչև այսօր նա նրան տեսնում էր պալտոյով և գլխարկով, նա չէր ապչեցնում նրան, այստեղ—դեղնած, սև ֆը-

րակով, ձգած ձեռքերով, ոլորած բեխերով, մէջ տեղից ճեղքած մազերով, սա ազդու տպաւորութիւն արեց կոմսուհու վերայ: Նա համապատասխան էր սրա մտածմունքների յիմար զգայականութեանը, որ նրա բնաւորութեան հիմքն էր, յարմար էր նրա ինքալի ծարաւին, իբրեւ այնպիսի կեանքի վարձատրութիւն, որպիսին վարում են նրա նըման կանայք, համեմատ իրանց խաւար ձգտումներին, մի խօսքով նրան բողբոջին գրաւեց:

Տիկինն ոչինչ չէր տեսնում, ոչ Ջեկին, որն ուղարկում էր նրան օգային համբոյրներ, ոչ Մորոնվալի ղոյղը, որոնք խոնարհել էին մինչև դետին, մինչև անգամ և ոչ հետաքրքիր հայեացքները, գցած թարմ, հոյակապ տիկնոջ վերայ, թաւշեայ զգեստով, ճոխ թեթեւ գլխարկով:

Նա, միայն նա, էլ ոչինչ նրա համար չը կար:

— Ինչպէս տեսնում էք, կոմսուհի,— նկատեց Մորոնվալը,— մենք պատրաստ-

վեցանք ձեզ մնալու: Վիկինտ Մօրի դ'Արժանտոնը կարդաց իւր հիանալի բանաստեղծութիւնը. «Հաւատոյ սիրալիր Հանգանակը»:

Նա երկիւղածութեամբ դարձաւ դէպի նա:

— Շարունակեցէք, աղաչում եմ ձեզ...

Բայց դ'Արժանտոնը, բարկացած կոմսունու վերայ, որն իւր գալով գրաւեց ամենքի ուշադրութիւնն և ջլատեց նրա բանաստեղծութեան ամենալաւ կտորի տպաւորութիւնը, սառնութեամբ պատասխանեց.

— Ես վերջացրի, — և նա խառնուեցաւ ժողովի մէջ չը դարձնելով ոչ մի ուշադրութիւն կոմսունու վերայ:

Երեկոյթն շարունակվում էր: Տիկին Մորոնվալ կարդաց իւր մարդու մի գիտնական յօդուածը, արտասանելով խօսքերըն այնպիսի ճշգրտութեամբ, որպէս կը պատկանէր արտասանել երեւելի մեզոտի հնարողին, որ ուղղում էր ամեն անկանոն արտասանութիւններ:

Բոլորեքեան տրտմում էին, ոչ ոք չէր լսում: Յետոյ դ'Արժանտոնը կարդաց իւր ռոմանտորները, լաբաստենդրի ներդաշնակցութեամբ: Իդան լսում էր, առանց շունչ քաշելու, ընկղմած հիացման մէջ:

— Ներկայացրէք ինձ պ. դ'Արժանտոնին, խնդրեց նա իսկոյն կարդալուց յետոյ: Խօսելով նրա հետ, Իդան կակազում էր վզովմունքից, իսկ դ'Արժանտոնը թեթեւ գլուխ էր տալիս, և ամենին անտարբեր էր:

Տիկինն ի միջի այլոց, հարցրեց. որտեղ կարելի է ստանալ նրա ռոմանտորները:

— Ոչ մէկ տեղ նոցա չի կարելի ըստանալ, — հանդիսաւոր կերպով և վըրդովմունքով պատասխանեց բանաստեղծը:

Մորոնվալը շտապեց օգուտ քաղել այդ դէպքից:

— Այո, տեսէք մինչև որտեղն է հասել մեր մատենագրութիւնը: Տաղանդ, հանձար մնում են անյայտութեան մէջ: Ո՛րքան կարևոր է, որ ունենայինք ամսագիր...

— Այն, պէտք է ունենանք:

— Բայց միջոցներ:

— Միջոցները կը գտնուին, չէ կարելի թոյլ տալ, որ այդպիսի երկասիրութիւնները մնան անյայտութեան մէջ:

Բանաստեղծը հեռացաւ իդայից, բայց սա պահեց իւր մօտ Մորոնիլային և ամբողջ գիշերը խօսեցաւ նրա հետ զ'Արժանդոնի մասին, որին խորամանկ կրէօլը կարողացաւ չըջապատել Բանաստեղծական փայլով:

Բայց նա, իդայի հերոսը, կողքին կանգնած, վսեմ գիրք բռնած, ատենաբանում էր: Նա խօսում էր ժամանակակից հասարակութեան դէմ, Ֆրանսիայի դէմ, որի ապագային չէր հաւատում, արտայայտում էր անհրաժեշտ դիտաւորութիւն դադթելու Ամերիկա և վերջացրեց Փիլիպպիկայով Ֆրանսիական կանանց դէմ, նրանց թեթևամտութեան, նրանց անբարոյականութեան, նոցա կեղծ ժպիտների, նոցա վաճառվող սիրոյ դէմ:

«Ո՛հ, նա գիտէ— ով եմ ես» զարհուրանքով մտածեց իդան:

Ամեն կողմից լավում էին ուրախալի աղաղակներ:

Վերջացած է— վիճակը զցած է, իդան սիրեց:

Ամօրի դ'Արժանտոնը պատկանում էր հին, բայց երեք սերունդ առաջ աղքատացած ընտանիքի, նրա մանկութիւնը անցկացաւ աղքատութեան և մշտական դրամական հոգսերի մէջ, խաւարի և տրտմութեան մէջ, նա երբէք չէր խաղացել, երբէք չէր ժպտում: Louis le Grand ճեմարանի թոշակը, որն տուեց նրան միջոց դիտութեան բոլոր դասընթացքը վերջացնելու, նրա համար ուրախութիւն չէր, որովհետեւ դրեց նրան կախեալ վիճակի մէջ: Արձակուրդի ժամանակ նա գնում էր մօրաբրոջ մօտ, հիանալի կլինարմատի, որն ունէր վարձով տալու սենեակներ Մարէնում, և որը տալիս էր նրան ժամանակ առ ժամանակ ձեռնոցների համար փող: Տխուր մանկութիւնը թողնում է իրանից յետոյ դառն հետեանքներ: 27 տարեկան զ'Արժանտոնը դեռ ոչինչ չէր արել, ոչ-

ինչ նշանաւոր դործ չէր գրել, հրատարակեց միայն մի տետր մարդասիրական հոգով գրած ոտանաւորների, կերակրվելով վեց ամիս հացով և ջրով, որ կարողանայ հրատարակել ոչ ոքից չը նկատված ժողովածուն: Նա շատ էր աշխատում, բայց բանաստեղծութեան պէտքէն թեւեր, որոնք նա չունէր: Ապրում էր նա դասերով, բացի սրանից, մօրքոյրը, որն տեղափոխուել էր գաւառ, օգնում էր նրան: Հպարտ և սառն իբնէ, բանաստեղծը հեռու էր բռնում իրան սիրոյ ամենածանր կապերից, կանանց վերայ նայում էր իբրեւ խոչընդոտի, իբրեւ ժամանակ կորցնելու վերայ, նա բաւականանում էր միայն նըրանց ողջունելով: Իդա դէ-Բարանսին առաջինն էր, որ խիստ տպաւորութիւն արեց նրա վերայ: Յաճախ մատենադրական դասի ժամանակը, նա կանչում էր իւր մօտ Ջեկին և հարց ու փորձ էր անում մօր մասին, երեսան սիրով էր պատասխանում, բայց ամեն ժամանակ իւր պատմութեան մէջ աւելացնում էր

Bon Ami (Բօն-Ամի) անունը (ինչպէս նա անուանում էր մօր առաջվայ բարեկամին), նա տեսնում էր ինչպէս դ'Արժանտոնին նեղացնում էր այդ անունը, ուստի և գիտութեամբ բարկացնում էր նըրան. — Ջեկը այժմ աւելի քան թէ առաջ ատում էր բանաստեղծին: Առաջվայ արհամարանքին վերայ աւելացաւ երեսայական նախանձը, մայրը շատ էր զբաղված այդ մարդով: Իւրաքանչիւր հինգշաբթի Ջեկը զալիս էր ճաշի իւր մօր մօտ, յաճախ երկուսով, յաճախ Bon Ami-ի ընկերակցութեամբ: Երեկոյեան գնում էին թատրոն, այդ հինգշաբթիներից մէկի ժամանակ, տուն գալով նշանակած ժամին, երեսան նկատեց, որ երեք հոգու պատրաստութիւն է տեսած սեղանի վերայ: Ինչ բաղդաւորութիւն է, մտածեց նա Bon Ami-ն այստեղ է:

Մայրը հանդիպեց նրան, զարդարված, գեղեցիկ, սպիտակ յասմիկով մազերի մէջ:

— Գուշակիր, ով է այստեղ:

— Գուշակում եմ արդէն, գուշակում եմ, — Bon Ami?

Հիւրը դ'Արժանդոնն էր։ Այս օրը տխուր օր էր փոքր Զեկի համար, նա ինքն ծաղրալի էր, և զգում էր, որ նեղացնում է և միւսներին, մայրը անում էր հիւրի հետ ընդմիջվող խօսակցութիւն, և կարծես ոչինչ չը նշանակող խօսքեր արտասանում ու շատ էին ծիծաղում։ Երեկոյեան դ'Արժանդոնը նստած վառարանի մօտ, պատմում էր Իդային բոլոր իւր կեանքը, իսկ Զեկը թերթում էր յիշատակագիրը — նա շատ ծանր էր զգում իրան։ Սովորութիւնից վաղ նրան հրամայեցին գնալ ուսումնարան։ Մօրը մնաց բարեաւ ասելուց յետոյ, նա մօտեցաւ հիւրին, դ'Արժանդոնը թեքվեցաւ, կարծես ուղեհալով համբուրել, բայց յանկարծ բռնեց և բացականչեց. — Հեմ կարող, հեմ կարող, և դալկացած ընկաւ բաղմոցի վերայ։ Այդ բացականչութեան ինչպէս և դ'Արժանդոնի ամեն խօսքերի մէջ կար շատ կեղծաւորութիւն, բայց կար և իս-

կական զղացմունք. նա նախանձում էր երեսային ինչպէս և երեսան նախանձում էր նրան։ Այս օրից սկսած Զեկին ուշ ուշ էին բերում տուն, Իդան՝ աւելի և աւելի էր ընկնում դ'Արժանդոնի ազդեցութեան տակ, նա պատրաստ էր նրա առաջին ակնարկով թողնել Bon Ami-ին, բայց դ'Արժանդոնը, չը նայելով իւր կեղծ յափշտակութեան, խրատում էր նրան սպասել, մինչև որ ինքը կը հարստանայ, նրա մօրաքոյրը շատ պառաւ է, իսկ ինքը միայնակ ժառանգն է, իսկոյն նրա մահից յետոյ նոքա կը միանան, կը տեղաւորվին գեղումը, փոքրիկ տնակի մէջ, նա կ'սկսէ աշխատել աղատ, կը գրէ այն գիրքը, որի մասին երազում է մի քանի տարի։

Այսպէս անցնում էին շաբաթներ և ամիսներ... Մէկ առաւօտ Զեկը, որ այժմ հաղիւ էր թողնում ուսումնարանը, տխուր նայում էր դարնանային, կապոյտ, լախատարած երկ'քին, որ զարթեցնում էր նրա սրտումը աղատութեան և զբօսանքների երազներ։ Արե-

զակը արդէն այրում էր, յամբիկի ճիւղերը սկսում էին կանաչիլ:

Այդ ժամանակ լսվեցաւ զանգակի ձայն, ներս մտաւ մայրը, զարգարված, փայլուն, բայց չատ վրդոված:

— Ես եկել եմ քեզ տանելու, գընում ենք նախաճաշելու Բուլոնեանան տառը:

Պէտք է թոյլտուութիւն ուզէին տեսչից, բայց տիկին դէ-Բարանսին բերել էր իւր հետ քառամսեայ վարձը, ուստի և ոչ մի արգելք չը պատահեցաւ: Զեկը վազեց հագնվելու: Ճանապարհին նրան պատահեցաւ Դահոմէի թագաժառանգը Մոդուն, դեղնած, տխուր, որն կարծես չէր նկատում, որ եղանակը տաք է, օդն անուշահոտ է:

— Մայրիկ, տանէնք Մոդուն մեզ հետ:

Մայրը իսկոյն համաձայնուեցաւ: Տիկին Մորոնվալը տուեց փոքր Նեգրին արձակուրդ: Ուրախութիւնից խելագարված Մոդուն շուտով հագցրին, Զեկը մօր հետ նստեցաւ կառքը, իսկ Մոդուն Օդիւստ կառապանի մօտ:

Նոցա ճանապարհը անցնում էր լայն և գեղեցիկ Avenue de L'Imperatrice փողոցով: այնտեղ արդէն ամեն ինչ կենդանութեան և շարժողութեան մէջ էր, երևում էին գրօսնոց երեխաների խմբեր, երևում էին ձիաւորներ և ամազոններ:

Զեկը երջանիկ էր, համբուրում էր մօրը, քաշում էր Մոդուն շորերը, ստիպելով նրան էլ ուրախանալ չըջակայքով: Բուլոնեան անտառը տեղ տեղ արդէն ծաղկում և կանաչում էր: Մի քանի ծառուղիներում ծառերի կատարները ծածկած էին նորածիլ կանաչով որ և արեգակով լուսաւորված ճիւղերին տալիս էր ամենեւին օդային կերպարանք:

Ծառերի կանաչն արտացոլացնում էր բոլոր գոյները, սկսած ամենաքնքրոյից, — նորածիլ ճիւղերի վերայ, մինչև ամենամոյգը — ձմերային բոյսերի վերայ:

Կառքը կանգնեցաւ հիւրանոցի առաջ, տիկին դէ-Բարանսին նախաճաշիկ պատուիրեց և մինչև որ կը պատրաստէին,

առաջարկեց երեխանց գնալ լճի մօտ։

Այս առաւօտուայ ժամին լիճը դեռ չէր ներկայացնում հայելի, որի մէջ արտափայլում էին Փարիզի նորաձեւութիւնք և սնափառութիւնը, նրա վերայ լողում էին կարասներ, նրա մէջ արտափայլում էին կանաչի ձողերը ջուրը, կարծես, զարթեցաւ. ստուէր, խաղաղութիւն, միայնութիւն տալիս էին նրան կենդանի ջրի կերպարանքը, մակերևոյթի վերայ երևում էին թեթև ալիք, դուրս էին գալիս պարզ պղպջակներ, թռչունները անցնում էին նրա վերայ, ձկները իրանց քմուխտներով նրան շարժում էին, ուռիները լողացնում էին նրա մէջ իրանց երկար ճիւղերը։

— Գնանք կենդանաբանական այգին — առաջարկեց մայրը. կենդանաբանական այգիումը ներկայացան նոր ուրախութիւններ։ Մոգուն մոռանում էր իրան ուրախութիւնից, տեսնելով իւր սրտին սիրելի թռչուններին և զաղաններին արեաղարձի երկիրներից, բայց երբ որ նրան թոյլ տուին զբօսնել փիղի

վերայ նստած, նրա բաղդաւորութիւնն անսահման էր։ Բայց արդէն ուշանում է, ժամանակ էր յետ դառնալու, արեգակը մայր մտաւ, վերկացաւ սուր, ցուրտ հողմ, վերադարձը տխուր էր, Զեկի սիրտը ճմլվում էր, և ոչ ի դուրս։

— Զեկ, — ասաց մայրը, — ես պէտք է հաղորդեմ քեզ տխուր նորութիւն, ես գնում եմ, մի լար, հողիս, մենք շուտով կը տեսնուինք, ես քեզ նամակներ կը գրեմ։

Նա կարող էր խօսել ուրբան ուզում էր, Զեկը նրան չէր լսում, նա լալիս էր, կուչ եկած անկիւնումը, և բոլոր առարկաներն երևում էին նրան ամենեւին ուրիշ կերպով քան թէ առաւօտը, որովհետև նա նայում էր նոցա վերայ այն երեխայի աչքերով, որ կորցրել էր իւր մօրը։ Մի քանի օրից յետոյ Մորոնվալը ստացաւ դ'Արժանդոնից նամակ։ Բանաստեղծը յայտնում էր նրա մէջ, որ իւր ազգականի մահուան պատճառով նրա հանգամանքները փոխվել են դէպի լաւը, ուստի և հրաժար-

վում է գիմնագիայի դասերից, յետոյ, Գ. Գ. մէջ, շատ պարզ կերպով հաղորդում էր, որ տիկին դէ-Բարանսին, ըստիպւած լինելով թողնել Փարիզը, յանձնում է իւր փոքր Զեկին Մորոնիւլի ծնողական հոգսերին:

Այս օրից սկսած Զեկի համար սկսեց վեցաւ կեանքի նոր չրջան, տեսուչը տեղեկութիւնք հաւաքեց և իմացաւ, որ տիկին դէ-Բարանսին թողեց BonAmi-ին. նրա սիրտը զգում էր, որ շուտով Զեկին վերկառնեն գիմնագիայից, կամ, աւելի վատը, կը դադարեն վարձ տալ նրա համար: Խղճաւ երեսային, նշանակում է, աւելորդ է, և ահա, խեղճ ամենին անմեղ երեսայի վերայ թափվեցան թունաւոր ծաղրեր, անէծք, Զեկը ծեծերի համն էլ տեսաւ: Զեկին մէկ անգամ պատահեցաւ լսել Հիրշի և Լաբասենդրի խօսակցութիւնը: Երգիչը հաղորդում էր, որ մօտերումս պատահեցաւ փողոցումը Իդա դէ-Բարանսինի: — Իսկ նա. — հարցրեց Հիրշը: — Յայտնի բան է, որ վերադարձան միասին:

Զեկը այս օրից սկսած, վճռեց փախչել մօր նախկին բնակարանը, և շատ շուտ կատարեց իւր դիտաւորութիւնը:

Յարմար միջոց գտնելով, Գահոմէից մահ տանջված, դժբաղդ թագաժառանգին թաղման ժամանակը, Զեկը անհետացաւ...

Հեռուից տեսնելով իրանց բնակարանը, նա շտապով վազեց, բայց յանկարծ նախասենեակում նրան ապշեցրեց անկարգութիւնը. բեռնակիրները դուրս էին տանում կարասիք, զուգված տիկիները բարձրանում էին սանդուխի վերայ, միւսները իջնում էին նոցա հանդէպ, կարասիքը դրած էր փողոցումը, ապշած Զեկը գնաց ժողովրդի ետեւից: Հիւրասենեակից լսվում էին մուրճի ձայներ, լսվում էր ձայն, որն աշխատութեամբ բայականչում էր: «Երեխայի ոսկեզօծ անկողնակալ»:

Երեխան ամենին ապշած էր: Յանկարծ ուլ որ բռնեց նրա ձեռքից, — նա յետ դարձաւ. նրա առաջ կանգնած էր կոնստանտը:

— Ո՞ւր է մայրս:

— Ձեր մայրը այստեղ չէ, իմ խեղճ երեխայ:

— Բայց ո՞ւր է, ինչ է պատահել: Ինչո՞ւ համար է այստեղ այսքան ժողովուրդ:

— Որովհետև վաճառումն է. գնանք խոհանոցը: Ձեզը խոհանոցումը պատահեցաւ նրան ծանօթ հասարակութեանը: Երեխայի յայտնուիլը գործեց զօրեղ աղպաւորութիւն, նրան չըջապատեցին, գուրդուրում էին: Սկզբումը Կոնստանսը կարծես տատանվում էր ասելու ճշմարտութիւնը, բայց չը համբերեց, և հաղորդեց երեխային, որ նրա մայրը տեղափոխվել է Փարիզի շրջակայքը, էտիօզ գիւղը:

Երեխան մի քանի անգամ կրկնեց էտիօզ խօսքը կարծես ուղենալով լաւ յիշել, յետոյ հարցրեց պարզ կերպով.

— Բայց հեռո՞ւ է այդ գիւղը:

— Մօտ ութ մղոն կը լինի, — պատասխանեց կառապանը:

Բացվեցաւ վէճ. մինը ասում էր ա-

ւելի մօտիկ է, միւսը աւելի հեռու, բայց վերջ ի վերջոյ, Ձեզը խօսակցութիւնից իմացաւ, որ պէտք է անցնի Բերսին, Շարանտոնը, Վիլնիվ-Սէն-Ժորժը, յետոյ գնայ աջ, Սենայի ափով, Սենարեան անտառի մօտով ճիշտ մինչև էտիօզ:

— Այդպէս է, այդպէս է, — կրկնում էր Կոնստանսը, — աղջիկ պարոնը կենում է անտառի ծայրին, գեղեցիկ տնակի մէջ, Լատինական գրուածքով դրան վերայ:

Ձեզը չէր վախում հեռաւորութիւնից. «Ինչ արած, — մտածում էր նա, — կերթամ ամբողջ գիշերը, թեպէտև փոքրիկ ոտքեր ունիմ, բայց կարող եմ անցնել ութը մղոն»:

— Ժամանակ է ուսումնարան երթալու, մնա՛ք բարև:

Բերսի: Ձեզը այստեղ եղած էր մէկ անգամ Մորոնվալի հետ, դա հեռու է, շատ հեռու: Իւրաքանչիւր բոպէն նրան թվում էր զարհուրելի, նա ակամայ շտապեցնում էր քայլերը. ինկվիզիտորական հայեացքները քաղաքական ուս-

տիկաններն յարուցանում էին նրա մէջ
զարհուրանք: Կառքերի ձայների, անց-
ւորականների խօսակցութեան, այս միծ
քաղաքի աղմուկի մէջ լսվում էին կար-
ծեալ ձայներ. բռնիք, բռնիք դռրան: Նա
սկսաւ վազել Սենայի ափով: Երեկոյա-
նում էր: Անձրեններից սղտորված ջուրը
խուլ խփում էր կամրջի սիւններին: Ա-
փերի բնութիւնը փոփոխվում էր ամեն
քայլումը: Յանկարծ նա սև էր, և եր-
կայն, ճկուն տախտակները միացնում
էին նրան ահագին նաւերի հետ, բեռ-
նաւորված քարածխով կամ ոտքերը սահ-
վում էին ափի վերայ ընկած պտուղնե-
րի կեղևից, կանաչի թարմ հոտը խառ-
նվում էր տղմի հոտի հետ, կամ երե-
ւում էին զանազան ապրանքների կոյ
տեր, շոգենաւեր կարճ ծխնելուզով,
ծիւթի, քարածխի հոտ էր զալիս և ճա-
նապարհորդութեան նշան երևում: Կա-
րելի էր մտածել, թէ գտնվում ես
քսան մղոն Փարիզից հեռու:
Գիշերանում էր: Կամրջների սիւնների
տակը երևում էին սև անդունդներ, ա-

փը աւելի և աւելի ամայանում էր:
Յանկարծ Զեկը երեւցաւ գետեզրի
վերայ, լուսաւորված զաղով, ուր չա-
րուած էին տախտակներ, դինու-մբուրի և
թաց տախտակների հոտ էր բուրդում:

Սա Բերսին է, այս, բայց քամաղ-
դութիւն, դիչերը վրայ հասաւ, իսկ Զե-
կը չը նկատեց, որ նրան չըջապատում է
խաւարը: Աղաղակները, որ լսվում էին
գետեզրի վերայ, ստիպում էին նրան
մոռանալ օրվայ ուշ ժամը, և, բացի սը-
րանից, երկտատողի երևակայութիւնը
վախեցնում էր նրան. նա կարծում էր
որ քաղաքային գռները փակած են, որ
բոլորեքեան զիանն նրա փախուստը, որ
նրան որսնում են:

Բայց երբ որ նա անարգել անցաւ
գռները, և մտաւ երկայն փողոցը, տեղ
տեղ լուսաւորված լապտերով, ցուրտն
և խաւարը ստիպեցին նրան դողդողալ:
այնտեղ, ժողովրդի մէջ, նա վախենում
էր որ բռնեն նրան, այնտեղ նա զգում
էր անդիտակից զարհուրանք այս լուռ
թեան և միայնութեան մէջ: Փողոցի եր-

կըսէր. կողմն էլ չարած էին տներ, որոնց միջանկիալ տարածութիւնը աւելի և աւելի մեծանում էր: Պէտքը թիւ անցորդականներն անցնում էին անձայն թաց գետնի վրայով և պատերի վերայ երեւում էին խորհրդաւոր ստուերներ, ու ժամանակ առ ժամանակ լսվում էր չընդհանրի հաջողութիւնը, և իւրաքանչիւր քայլի հետ նրան աւելի և աւելի էր չընդապատում լռութիւնը: Այդ ժամանակ նա անցնում էր վերջին խրճիթի մօտով, — այն էր ճանապարհի դեռ լուսաւորված գինեւունը, որի պատուհաններից լոյս ընկնում էր ճանապարհի վերայ, և որ թըվում էր երեսային կենդանի աշխարհի սահմանը:

«Արդեօք ներս մտնեմ, խնդրեմ, որ ցոյց տան ճանապարհը», մտածում էր Զեկը, ներս նայելով սենեակը, ուր բազմոցի վերայ քնած էր տան տէրը, իսկ ոտը կոտրած սեղանի մօտ նստած էին երկու տղամարդ և մէկ կին արմատ, նոքա խմում էին, խօսում էին կիսա-

ձայն. լսելով դրան ճոճոցը, նոքա ցետնայեցին: Նոցա երեսները զարհուրելի էին, մանաւանդ կինարմատինը: —

— Սա էլ ինչ է ուղում, — խապոտ ձայնով հարցրեց տղամարդոց մինը և վերկացաւ տեղից, բայց Զեկը, ցմահ վախեցած, դուրս վազեց և թողեց իւր հաւ վերջին լոյսի գիծը, և դուռը փակվեցաւ:

Այլ և ձախ ձգվում էին դաշտեր: Երեխան կանգնած էր բոլորովին լքած Առաւօտեանից նա ոչ խմել էր և ոչ էլ կերել, նա ծարաւ էր, նա մտածեց պարկեղ ճանապարհին մի փոսի մէջ և քնել մինչև լոյսը, բայց այս բոլորին նա լսեց ծանր շնչառութիւն, — մի քանի քայլ առաջ պարկած էր մի մարդ, գլուխը դրած քարերի կոյտի վերայ:

Զեկի ոտքերը դողացին, լոյսը և խօսելու ձայները զարթեցրին նրան թըմբութիւնից, մի երիտասարդ սպայ վերադառնում էր իւր պաշտօնատեղից, նրան աղեկից էր մի վիճակ լապտերով: Զեկը հանդիպեցաւ սպային հեղու-

թեամբ և վրդովմունքից զողորջուն
ձայնով։

— Յարմար ժամ չէք ընտրել ձեր
ճանապարհորդութեան համար, որդեակ,
— նկատեց սպան։ — Հեռո՞ւ պէտք է դը-
նաք։

— Ո՛չ, այստեղ մօտիկ է, — պատաս-
խանեց Ջեկը, — չուզենալով երկարացնել
խօսակցութիւնը։

— Ուրեմն ճանապարհի մասը անց-
նենք միասին։

Մօտ մի ժամ երեխան հանդստու-
թեամբ անցաւ այս երկու զուգակիցների
ընկերակցութեամբ, բարեբար լանպտերի
լուսով։

— Ահա, մենք տանն ենք, — ասաց ըն-
պան կանգնելով, — մնաս բարեւ։ Միւս
անգամ այսպէս ուշ մի մանդալ։

Ջեկը սկսում է վազել ճանապարհի
վերայ։ Այս ո՞վ է նրան սպանում ճա-
նապարհների միանալու տեղում։ Նոքա
երկու, երեք են, — բայց դոքա ծառեր
են, բարձր կաղամախեր, նոքա խշխշում
են իրանց բոլոր տերեւներով, չը կռաց-

նելով իրանց կատարները, և Ջեկը դը-
նում է առաջ և առաջ, չըջապատած
գարնանային գիշերի խորհրդաւորու-
թեամբ, այն գիշերներից մէկի, որի լը-
ռութեան մէջ լսվում է ինչպէս կանա-
չը աճում է և ինչպէս կոկոնները բաց-
վում են։ Այս խառն ի խուռն ձայները
նրան ոչինչ չեն ազդում, բացի զարհու-
րանքից։

«Երգ երգեմ, որ քաջալերվիմ» մտա-
ծում է նա և լռութեան մէջ լսվում է
երգն, որով նրա մայրը նրան վաղ քը-
նեցնում էր։

Բայց սա ինչէ, ինչ է սա։ Չայներ
հաչոց, խուլ հարուածներ, ուղիւ Ջեկի
վերայ գալիս է եզների հօտ, նա զգում
է նոցա շնչառութեան խօնառութիւնը,
հարուածները նոցա զօրեղ պոչերի,
զգում է ախոռի հոտը։ Հօտն անցաւ
փոթորիկի նման, թռչնելով իւր ետեւից
վախից խելագարված երեխային, նա էլ
չէ համարձակվում առաջ գնալ, նա լա-
լիս է, նա ցանկանում է մեռնել։ Մօ-
տեցող կառքի ձայնը նրան մէջ դար-

թեցնում է յայտ, նա ժողովում է վերջին ոյժերը, նա բղաւում է... կառքը կանգնում է, նրա միջից երևում է գըլխարկով ծածկած գլուխ:

— Ես չափ յողմած եմ, թոյլ տուէ՛ք ինձ որ նստեմ ձեզ հետ կառքը: Գըլխարկը տատանւում է, բայց կառքի միջից լսվում է կինարմատի ձայն:

— Ա՛հ, խեղճ երեխայ, նստեցրո՛ւ նրան:

— Գուք ո՛ր պէտք է գնաք, հարցնում է աղամարդը:

— Վիլնեվ-Սէն-Ժօրժ, — պատահամբ պատասխանում է Ջեկը:

— Նստեցէ՛ք:

Վերջապէս նա կարող է աղատ չնչել այս երկու հաստլիկները, մարդ և կին, շատ բարի են: Նոքա նստեցրին նրան, տուին նրան ճանապարհորդական վերմակ, որի մէջ նա փաթած վեցաւ: Ջեկը շատ է ուղիւժ պատմել բոլոր ճշմարտութիւնը, բայց նրան հալածում է միտքը Մորոնվալի և գիմնադիտի մասին և նա հնարում է ամբողջ պատմու-

թիւն: Իբրեւ թէ մայրը հիւանդացել է գիւղումը, իւր ծանօթներին մօտ, նրան իմաց են աբել և նա խսկոյն ճանապարհ է ընկել, որովհետեւ երկաթուղու գնացքին պէտք է սպասել էր մինչև առաւօտը: Նոքա նրան մխիթարում են, հանգստացնում են, դուրգործում են, բայց նրա դրութիւնը անխիթար է դառնում, երբ որ նա խօսակցութիւնից իմանում է, որ նրա բարեբարները բնակւում են մի քանի քայլ հեռու Լաիօլից: Արդեօք չը խոստովանի որ սուտ խօսեց, այն ժամանակ նոքա կը տանեն նրան մինչև մօր դուռը: Ո՛չ, ամօթ է:

Մինչև որ նա ընկնում էր այդ մտածմունքների մէջ, կառքը մտաւ վիլնեվ և խեղճ երեխան կամայ թէ ախամայ պէտք է հեռացել էր իւր պատահական պաշտպաններից:

— Մնաս բարեւ — աղաղակում էին երկուսն էլ, իսկ նա ընդմիջվող արտասուակից ձայնով պատասխանեց:

— Մնաք բարեւ:

Կառքը անցաւ լայն, ծառերով չըջապատած փողոցով, նա վազեց նրանք ետեւից, բայց մի քանի քայլից յետոյ պէտք է կանգնել էր, և լալով ընկաւ գետնի վերայ: Յուրտ է և սառը, — մի և նոյն է: Ջեկը բոլորովին յոգնեցաւ, նորա աչքերը փակվում են...

Բայց ուր է նա: Ժամը քանին է: Ի՞նչքան ժամանակ նա քնած էր: Նա դողում է ցրտից, նրա բոլոր անդամները սառեցան, սիրտը ճնշվում է: Ջեկը տեսաւ երազում, իբրեւ թէ նա պառկած է գերեզմանատանը, Մոտուի հետ, նա պարզ տեսաւ իւր մեռած ընկերի երեսը, զգում է նրա սառած մարմնի չօշափումը, աշխատութեամբ և ցաւ զգալով բոլոր անդամների մէջ նա վեր է կենում, գնում է, ոտքերը աշրվում են, զլուխը պտուտ է դալիս, նա էլի գնում է: Տանջուած նա ժամանակ առ ժամանակ հարցնում է հանդիպող անցորդականներին. «Արդեօք հեռու է մինչև Էտիօլը»: Նրան պատասխանում են անորոշ մանչիւնով: Բայց ո՞հ բաղդաւորու-

թիւն, նրան հետ վերջապէս միանում է ուրախ և զուարթ ուղեկիցը — դա արեգակն է: Սկզբումը հորիզոնի վերայ երևում է լոյսի գիծ, որ փոքր առ փոքր լայնանում է, և ահա, տարածվում է ամբողջ երկնքում: Նրա առաջ լուսաւորուած ճանապարհը այլ ևս չէ վախեցնում փոքրիկ ճանապարհորդին և ինչ կայ վախենալու: Այս լայն, գեղեցիկ ճանապարհ, որին երկու կողմն էլ երևում են հոյակապ ամարանոցներ, ծաղկալից դաշտերով, օձապտոյտ ծառուղիներով և լայն սրահներով:

— Հեռու է մինչև Էտիօլը, — հարցնում է Ջեկը հանդիպող գնտափորներին:

— Ո՛չ, չատ մօտիկ է, գնացէ՛ք ուղիղ անտառով:

Անտառը զարթում է, թռչունների երգից կենդանացած, երեխան դժուարութեամբ շարժում է ոտքերը, հեռուից երևում է զանգակատունը, էլի մէկ քանք, — հօ պէտք է հասնել: Ո՞ժը նրան թողնում է, նա վայր է ընկնում, վեր է

կենում զժողովրդեամբ, և թնայէս վեր
չը կենայ այժմ, երբ որ նա տեսաւ
փոքրիկ տնակը, փաթաթուած որթերով
և բաղեղաման վարդենիներով զբան վե-
րայ, յատկիկն ստուերի տակ, իւր ոսկէ
տառերով արեգակի տակ փայլում է
տան վերնագիրը. «Parva domns, magna
quies» (փոքրիկ տնակ, մեծ անդորրու-
թիւն): Տնակի միջից լսվում է երգ, այն
երգն, որն Զեկը երգում էր զիշերը,
թարմ և երիտասարդ է ձայնը: Աս-
տուած իմ Արդեօք երազ չէ: Պատու-
հանը բացվում է, մի երիտասարդ կին,
սպիտակ չորերում, անուշադրութեամբ
սանդրած մաղերով երևում է նրան մէջ:

— Մայրիկ, մայրիկ, — կանչում է Զե-
կը թոյլ ձայնով:

Կինարմատը նայում է իւր չորջ, ա-
րեգակից չափած և լացով աղաղակում
է. «Զեկ»: Մի ակնթարթումը նա այս-
տեղ է, նրա մօտ, տաքացնում է մայ-
րական դրկի մէջ անցկացրած զիշեր-
վայ զարհուրելի տպաւորութիւնից կի-
տակենդան երեխային...

— Ո՛չ, Զեկ, ո՛չ, իմ խեղճ երեխայ,
մի վախիւր, դու չես վերադառնալ այն
անիծեալ գիմնադիան... Դեժէլ իմ երե-
խային: Լաւ արիւր, որ փախար: Այսպէս
խօսում էր Խդա դէ-Բարանսիին, պար-
կեցնելով փոքրիկ փախստականին լո-
ղացնելից և մսաջուր խմցնելից յետ
անկողնում, և ուրախանալով, որ այդ
ժամանակը դ'Արժանդոսը բացակայ էր...
Զեկը չը կարողացաւ քնել. նա նայում
էր իւր շուրջ բաւականութեամբ. նա
պառկած էր ընդարձակ սենեակումը,
զարդարուած Լիւդովիկոս XVI-ի ոճի
կարասիքով, սպիտակը խառն մոխրա-
գոյնով, առանց ոսկեղօծի, պատերը
ծածկուած էին բաց չթով: Տնից դուրս
թաղաւորում էր խկապէս զիւղական
լուծիւն, երբեմն, երբեմն ճիւղը խը-
փում էր պատուհանի ապակիին և ա-
ղանիները ճկճկում էին տանիքի վե-
րայ: Երեխան բաղդաւոր էր: Միայն մի
բան էր նրան վրդովում. ուղիղ նրա
անկողնի հանդէպը պատի վերայ կախ
է արած դ'Արժանդոնի լուսանկարը: Բա-

նաստեղծը նկարած էր պահանջող զիր-
քով. աջ ձեռքը դրած էր կիսաբաց
զրբի վերայ, դեղնած և չար աչքերը,
կարծես, նայում էին նրա վերայ: Այս
հայեացքը նրան նեղացնում էր, նա
վերկացաւ և գնաց պտրելու մօրը: Նա,
ճոխ անձարարիկութեամբ, կերակրում էր
իւր վառիկներուն, իսկ պառաւ Արշամ-
բօն, անտառապահ կինը, ծիծաղելով
նայում էր նրա վերայ:

— Տէր Յիսուս, ձեր երեսան ինչպէս
գեղեցիկ է եղել, — աղաղակեց գիւղացի
կինը, տեսնելով Ջեկին:

— Արդեօք ուղիղ չէ: Ես ձեզ հօ ա-
սում էի. ուրեմն, Ջեկ, եթէ քնել չես
ուզում — գնանք տնտղենք տունը, — ասաց
մայրը, որին ամեն ինչ չուտով ձանձ-
րացնում էր:

Գլխաւոր շինուածքը բաղկանում էր
հին որսորդական սրահից, որ երբեմն
պատկանում էր հին ամրոցներից մէկին
Նուդովիկոս XV-ի ոճով, որպիսիք շատ
են այն երկրում: Նրա մօտ կալած էր
նոր շինուած աշտարակն, աղանեստով և

հողմացոյցով: Մայր և որդին այցելեցին
ախոռն և ծածկոցը, նայեցին և պտղա-
տու այգին, որն ձգվում էր մինչև Սե-
նարեան անտառը: Կալուածքների տընտ-
ղելը վերջացրին աշտարակի այցելու-
թեամբ: Պտուտականման սանդուղը՝ լու-
սաւորուած գոյնզգոյն ապակիների մեծ
պատուհաններով, տանում էր ընդար-
ձակ բլրորակ սենեակը, չորս պատու-
հաններով, որի կարասիքն էին բլրորակ
բազմոց, ծածկած ալժիրեան գործուած-
քով: Բացի սրանից, այստեղ հաւաք-
ուած էին բաւական շատ հնութիւններ.
պահարաններ հին կաղնիից, վենետի-
կեան հայելի, հին պատի թղթեր և
վերջապէս բարձր ամբիոն, փորագրած
տախտակից, Հենրիկոս II-ի ոճով, որն
դրած էր աթոռի տեղ աշխատանաց
մեծ սեղանի առաջ, ծածկած թղթերով:
Տեսարանը պատուհանից դէպի անտա-
ռը, հովիտն և գետը, ղմայլիչ էր:

— Այստեղ նա աշխատում է, — ասաց
մայրը, կանգնելով չէմբումը:

Ջեկը չը հարցրեց թի է այդ հո-ն:

— Նա այժմ այստեղ չէ, նա կը վերադառնայ մի քանի օրից յետոյ: Ես նամակ կը գրեմ նրան, որ դու եկել ես, նա չաա ուրախ կը լինի: Նա մարդիկ-ներից ամենալաւն է, նա քեզ շատ է սիրում, և դուն էլ պէտք է նրան սիրես, ապա թէ ոչ ինձ շատ ծանր կը լինի: Խոստացիր ինձ, Ջեկ, որ դու կը սիրես նրան:

Երեխան զլսակոր եղաւ, և աշխատելով ասաց.

— Խոստանում եմ:

Յետոյ երկուսն էլ իջան սանդուղից:

Երեկոյեան նոցա մօտ հիւրեր էին, Արշամբօն եկաւ կնոջ ետեից, ինչպէս նա անում էր իւրաքանչիւր երեկոյ, որովհետեւ նոքա ապրում էին շատ հեռու, անտառի խորքում: Այս չեկ, արեգակից այրուած հսկային առաջարկեցին խմել մի բաժակ գինի: Ջեկի առողջութեան համար: Բժիշկ Ռիվալսն եկաւ այցելելու իւր փոքրիկ հիւանդին:

— Ես հօ ձեզ ասում էի, որ ծանր

ոչինչ չը կայ: Ողջոյն քեզ, որդեակ, ասաց մտնելով սենեակը, այս փոքրիկ, կուզիկ ծերուկը, գզգզած մազերով և տատանվող քայլերով, որն սովորութիւն էր դառել նրան քսան տարի նաւատորմի վերայ պաշտօն կատարելու ժամանակը: Երեխային նա խնայեց դուր եկաւ: Ինչ բարեսիրտ մարդ է — մտածեց նա — այստեղ առհասարակ բոլորն էլ լաւ մարդիկ են:

Բժշկի գնալուց յետոյ, Ջեկը պառկեցաւ քնելու, իսկ մայրը նամակ գրեց դ'Արժանդօնին: Երկու օրից յետոյ նորանից ստացվեցաւ պատասխան, որն այնպէս խիստ չէր, ինչպէս պէտք է ըստ պատել էին: Նա խոստովանում էր, որ Մորոնի վաղի գիմնադրան ամենին ընկել է և թեթեւ կերպով դատապարտում էր Ջեկի արածը, խոստանում էր հօգս քշել նրա ապագայի վերայ:

Երբէք, իւր ապագայ կեանքումը, Ջեկը այսպէս բաղդաւոր չէր, ինչպէս այս չաբաթվայ ընթացքումը — նրա երջանկութիւնը վերջացաւ դ'Արժանդոնից նա-

մակ ստանալուց յետոյ. վաղը նա կը վերադառնայ: Մայրը թոյլ չը տուեց Ջեկին հանդիպելու բանաստեղծին սորա տուն մտնելիս, խոստանալով կանչել, երբ որ հարկաւոր կը համարէ: Նա ըս- պատում էր պարտեղումը, դողալով եր- կիւղից և վրդովմունքից: Բայց, ահա, աշտարակի պատուհանը բացուեցաւ:

— Ջեկ, եկ այստեղ. — դա մօր ձայնն էր, — պէտք էր զնալ: Նա ներս մտաւ և երկիւղով կանգնեցաւ դրան մէջ: Բա- նաստեղծը ասաց աղղու, բայց կարճ ձառ:

— Ջեկ, ասաց նա, վերջի վերջոյ — պէտք է աշխատել, կեանքը վէպ չէ: Ես սիրով հաւատում եմ քո զղջմանը: Եթէ դու խոհեմ կը լինիս, ի հարկէ, ես կը սիրեմ քեզ, և մենք երեքս էլ միասին բաղդաւոր կը լինենք: Յետոյ առաջարկում եմ քեզ հետեւալը: Իւրաքանչիւր օրը ես կը նուիրեմ մէկ կամ երկու ժամ քո կրթութեան, խելով այդ ժամանակը իմ պարապմունքներից և եթէ դու կը կամենաս աշխատել, ես կ'անեմ քեզ:

անից, թեթեամբ և անհնազանդ երե- խայիցդ, ինձ նման մարդ, պատրաստ պա- տերազմի համար:

— Լսում ես, Ջեկ, — ասաց մայրը, որին որդու լռութիւնը շատ նեղացնում էր, — արդեօք հասկանում ես դու, ինչ պիտի զոհ է բերում քեզ մեր բարե- կամը:

— Այո, մայրիկ, — շնչաց Ջեկը:

— Սպասիր, — ընդմիջեց Իգային Դ'Ար- ժանդոնը, — առաջ պէտք է իմանալ, թէ հաւանում է նա իմ առաջարկութիւնը. ես ոչ ոքին չեմ ստիպում: Երեխան յամառութեամբ լռում էր, մայրը բռնեց նրան Դ'Արժանդոնի գիր- կը, իսկ վերջինը վարձատրեց երեխային լսելի և սառը իսկ թաթրոնական համ- բոյրով:

Իսկն ասեմ, Ջեկի գալուստը շատ ու- րախացրեց Դ'Արժանդոնին, սա էր մի փոքրիկ զուարճութիւն, իսկ միայն Իգայի հետ լինելը նրան ծանր էր — Իգայի հետ, որին նա մկրտեց «Շարլոտայ» ա- նունով ի պատիւ Գէօթէի զլուցազնու-

հու, և բացի դրանից ցանկանալով ըստիպել իրան մոռանալու նրա անցեալը:

Իդան պաշտում էր նրան, համաձայնում էր բոլոր նրա կարծիքների հետ, նրա հետ վիճել էլ չէր կարելի, իսկ դ'Արժանդոնը սիրում էր վէճեր, — այժմ կայ անձն, ում ղեկավարէ, ում և խորատներ տայ:

Բայց դիմադրութիւնը Ջեկի կողմանէ աւելի յամառ էր քան որքան ուզում էր դ'Արժանդոնը:

— Այս երեխան ապուշ է, — տնտամբերութեամբ յայտնեց նա իւր Շարլոտային, — և վերջապէս հրաժարուեցաւ նրանից: Ազատուելով դատարանից, Ջեկը գտաւ իրան բարեկամ անտառապահ Արչամբոյին, բոլոր իւր ժամանակը երեխան անց էր կացնում նրա ընկերութեան մէջ, դալիս էր իւր բարեկամի մօտ առաւօտը և ամեն ժամանակ գրտնում էր նրան նախաճաշելիս, յետոյ նոքա միտովն գնում էին չնէր տնտղելու, որոնց Արչամբօն կրթում էր մեծ արհեստով, և յետոյ գնում էին անտառը:

Ջեկը ուրախ գնում էր իւր բարեկամի հետ, ոչ առանց հպարտութեան խոստովանելով, որ այդ մարդուց — որին ուսին դրած հրացանը տալիս էր ամենեկին զինուորի կերպարանք — բոլորեքեան վախենում են: Գալով նրա հետ նա տեսնում էր ամենեկին ուրիշ անտառ, կենդանի, բնակուած, իմաստակներին անձանօթ: Ջեկը չէր նկատում ոչ տերեւների չխշխկոց, ոչ խուլ ձայն խոտի մէջ, իսկ տեսնում էր զազաններ, հանդարտութեամբ աշխատելիս, վայելելիս իրանց բաւականութիւնը: Նա տեսաւ փասեաներին որոնք փորփորում էին մրջինների բները և բրում էին սպիտակ մարգարիտի մեծութեան ձուաններ, տեսաւ այծեամներին, վազվզելիս ճանապարհի վերայ, առաջ ձգած թաթերով, զարմացող հայեացքով, որ արտայայտում էր աւելի ուրախութիւն քան թէ երկիւղ, տեսաւ նապաստակներին անտառի ծայրին, ճաղարներին և կազաններին վարած գետնի վերայ: Անտառապահը նալում էր ամեն բանին, ոչնչացնում էր

վնասակար կենդանիներուն. իժներին,
կաշաղակներին, կուզերին, դաշտային
մկներին, խլուրդներին, նա տանում էր
նրանց կորբէլ քաղաքի վարչութեան,
և ստանում էր վարձ ամեն մէկի հա-
մար: Յաւալի էր, որ սա չէր կարող նոյն
կերպիւ ոչնչացնել և գող որսորդներին
— մարդոց, որոնք գողանում էին փայտ,
փչացնում էին ծառերը: Արշամբօն ծա-
ռերը աւելի էր սիրում քան թէ կեն-
դանիներին, այծեամին կարելի է փոխ-
արինել, մէկ փասեան սպանցիր, աեղն
էլի հաղարն է բազմանում: Իսկ ծառը —
սպասիր, մինչև կ'աճի. դրա համար էլ նա
չատ հոգս էր անում նոցա վերայ, սի-
րով պատերազմում էր նոցա վնասող
որդերին դէմ:

Ձրօսնելիս անտառապահը և երեխան
լուում էին, նրանց յափշտակում էր ան-
տառային ներդաշնակութիւնը: Բարեկա-
մութիւնից Արշամբօն հետ երեխան ճա-
րեց շատ թշնամիներ գող որսորդները
մէջ, որոնք ատում էին անտառապահին:
Նոցա մէջ աւելի նշանաւորն էր պառաւ

Սալէն, որ միշտ գողանում էր խալւ,
նա իւր կանոնաւոր, բայց կնճռոտ երե-
սով կարմիր կաշուով և բարակ շըր-
թունքներով, հալածում էր Ջեկին մին-
չև անգամ երազումը: Իսկ արթուն ժա-
մանակ, ամեն հանդիպելիս երբ որ Ջե-
կը, թողնելով Արշամբօնին, մինակ վերա-
դառնում էր տուն, համարում էր պար-
տականութիւն վախեցնելու երեխային:
Առհասարակ նա թողնում էր անցնելու
իւր մօտով լուիկ, իսկ յետոյ յանկարծ
բղաւում էր բոլոր ուժով նրա ետեից՝

— Ինչո՞ւ ես փախչում: Տեսայ, ես
քեզ տեսայ, սպասիր ես քեզ կը բռն-
ենմ... և վազում էր նրա ետեից...
Ջեկը վազում էր մօր մօտ հաղիւ շունչ
քաշելով վրդովմունքից: Յաճախ երե-
խան ուղում էր հաղորդել մօրն իւր օր-
վայ տպաւորութիւնները, բայց բերանը
բացում էր թէ ոչ, մայրը ձեռքով էր
անում:

— Կամանց, կամանց, մի խանդարիր,
նա աշխատում է: Իսկ նա ի միջի այլոց չէր կարող

աշխատել, նա միայն մտածում էր իւր «Ֆաուստի աղջկայ վերայ», բայց չը գէրեց ոչ մի տող: Նա ունէր բոլորն, ինչու մասին նա երբեմն երազում էր. ազատութիւն, գիւղ, միայնութիւն, աշխատանաց ճոխ գրասենեակ, բնութիւն, հիանալի տեսարաններ, անտառի մօտաւորութիւն և գետի զովութիւն. — Տէր Աստուած, ինչ լաւ է այստեղ աշխատել, — բացականչում էր բանաստեղծը, նա առնում էր գրիչը, բաց էր անում թանաքամանը, բայց ոչինչ, ոչ մի տող, թուղթը մնում էր սպիտակ: Նրա շուրջը լի էր բանաստեղծականով, նա խեղդվում էր այդ իդէալական մթնոլորտի մէջ — ոչ գեղեցիկ սիրուհին, ոչ Դալմի սպիտակ այծեամբ, ոչ նրան չըջապատող գեղեցկութիւնը, — ոչինչ չէր ոգևորում չարաբաղդ կարկատան բանաստեղծին: Նա ամբողջ ժամերով ընկած էր բաղմոցի վերայ, նայում էր պատուհանի մէջ և արթում էր... Երբ որ Շարլոտան հետաքրքրվում էր իմանալ նրա գործքերի մասին, նա միայն չարանում էր,

— ոչ որ նրան չէ խղճում, ոչ որ նրան չէ հասկանում — արտամութիւն:

Պէտք է տեսել էիք, որպիսի ջղաճրգութեամբ իւրաքանչիւր առաւօտ նա կարդում էր լրագիրները: Այն, ուրիշները բաղդաւոր են, նոցա դրուածքները ներկայացնում են, նոցա գրքերի մասին խօսում են. անհ Ծիւնն գրեց նոր գրուածք, որի հիմնաւոր գաղափարն իմն է. և այսպէս միշտ և միշտ: Նա տանջվում էր նախանձից, խեղդվում էր չարութիւնից, լսելով ուրիշի յաջողութիւնը, մոռանալով որ միւսները աշխատել են, մինչև որ նա մտածում էր գրելու մի գերբնական գործ: Շարլոտան մխիթարում էր նրան, բայց դ'Արժանտոնի սըրտումը օրից օր աւելանում էր ատելութիւն դէպի անմեղ Զեկը, ատելութիւն, որ սպասում էր օրիցէ մի դէպքի բուրբիւր ուժով երևան գալու համար:

Մէկ անգամ ճաշից յետոյ Շարլոտան դ'Արժանտոնի հետ գնացին Արորէլ Զեկը մնաց տանը պառաւ Արշամբոյի հետ, անտառը չէր կարելի գնալ, որովհետեւ

երկինքը ծածկվում էր ամպերով: Անտառապահի կինը խղճաց տրտմող երեխայի վերայ, վերջապես գտաւ նրա համար պարապմունք. «Ինչ կը լինի, պ. Զեկ, նկատեց բարեսիրտ կինարմատը, — որ գնաք իմ ճագարների համար խոտ քաղէք, կը համէք մինչև անձեի գալը: Ուրախացած երեխան առաւ կողովը, վազեց ճանապարհով որ տանում էր դէպի մեծ ճանապարհը Կորբէիլի, իջաւ փոսն և սիրով սկսեց խւր գործը: Նրա առաջ ձգվող մեծ տարածութեան վերայ ճանապարհը ամենեւին դատարկ էր, բայց ինչքան էր նրա զարմանքը, երբ որ Զեկը իրանից երկու քայլ հեռու լսեց միակերպ ձայն, որն բղաւում էր.

— Գլխարկներ, գլխարկներ, գլխարկներ:

Սա էր ճանապարհորդող վաճառականը, կռնակի վերայ երգեհոնի նման, բարձրանում էր ահագին կողով լճացում յարդենայ գլխարկներով: Նա քայլում էր յամբողջ եամբ, տանջանքով,

կարծես վիրաւորված լինէր: Գաղաւթիով բղաւել, նա նստաւ քարի կոյտի վերայ, և սրբեց ճակատը թեղանիքով, նրա երեսը տգեղ և տխուր, տգեղ բերանով, չեկ մօրուքով և սուր ցանցառ ատամներով, հասակը չէր արտայայտում:

Նկատելով Զեկին, որն նայում էր նրա վերայ անհանգստութեամբ, նա ժպտաց, որով և բերանի շուրջն ու աչքերի անկիւններումը կաղմկեցան միլլիոնաւոր կնճիռներ, որ անում էին նրան, եթէ կարելի էր, աւելի տգեղ, բայց տալիս էին նրան այնպիսի բարեսիրտ կերպարանք, որ Զեկը խփոյն հանգստացաւ.

Որոտման զօրեղ հարուածը չարժեց ամբողջ հովիտը, թողը ճանապարհի վերայ բարձրացաւ սիւնի նման: Ճանապարհորդը բարձրացաւ, նայեց երկնքին և, դառնալով դէպի Զեկը, հարցրեց.

— Արդեօք հեռու է մինչև առաջին գիւղը:

— Մի քառորդ ժամվայ ճանապարհ կը լինի:

— Չեմ կարող հասնել մինչև անձ-
րեր: Բոլոր իմ գլխարկները կը թրջեմ:
Ջեկը խղճաց թշուառին:

— Սպասեցէք, — բղաւեց նա նրան, —
մեր տունը այստեղից մօտիկ է, ներս
մտէք մինչև անձրևի անցնիլն:

Առաջարկութիւնը ընդունվեցաւ չը
նորհակալութեամբ և երկունս էլ ընկան
ճանապարհ գրեթէ վազելով:

Օտարականը աշխատում էր շուտ զը-
նալ, բայց իւրաքանչիւր քայլափոխում
ոտքերը շարժում էր, կարծես գետինը,
որի վերայ նա քայլում էր, կրակոտ էր:

— Ցաւ էք զգո՞ւմ, հարցրեց Ջեկը:

— Այո՛, ինչպէս առ հասարակ, իմ
ոտնամաններս ինձ տանջում են: Ոտքե-
րըս մեծ են, յարմար ոտնաման չեմ
կարողանում գտնել: Բայց կը հարստա-
նամ թէ ոչ, իսկոյն կը պատուիրեմ ոտ-
նաման ոտներիս չափով:

Հասան մինչև Օլնէտը, վաճառականը
դրեց իւր կողովը նախասենեակում և
ուզում էր ինքն էլ այնտեղ մնալ, բայց
Ջեկը ստիպեց նրան ներս մտնել սեղա-
նատունը:

— Նստեցէք, ձեզ հարկաւոր է խը-
մել և նախաճաշել: Նա թոյլ կերպով
հրաժարվում էր:

Անտառապահի կինը, որն ատում էր
թափառականներին, ինչպէս և առհա-
սարակ բոլոր գիւղացի կինարմատները,
կնճռտովեցաւ, բայց դրեց սեղանի վե-
րայ մի կտոր հաց և մի բաժակ գինի:

— Բերէք և՛ խոզի ապուխտ, — վըճ-
ռական ձայնով հրամայեց Ջեկը:

— Բայց դուք գիտէք, որ նա չէ սի-
րում, երբ ձեռն են տալիս ապխտին:

— Լաւ, լաւ է, բերէք, — կրկնում էր
Ջեկը, շատ գոհ, որ կարող էր կատա-
րել տանուտիրոջ դերը: Պառաւը հնա-
զանդեցաւ, բայց յետոյ իբրև բողոք հե-
ռացաւ խոհանոցը:

Հիւրը ուտում էր մեծ ախորժակով,
Ջեկը նայում էր նրա վերայ ուրախու-
թեամբ:

— Համեղ է: — Գձ ԲՅՈՒ ԳՈՒՍԱՅԵՐՈՒ

— Շատ... ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐԿԵՐԻ ԿԵՄ ԽՍՏԱԿԵՐՈՒ

Երեխայի Բեկդերի հետ խօսակցու-
թիւնը ընդմիջվեցաւ մօր և դ'Արժանդո-

նի անակնկալ երեւումիւ Այս տեսարանի հետեանքը հեշտ էր գուշակել, դ'Արժանգոնը կատաղութեամբ արտաքսեց վաճառականին և յարձակվեցաւ իդայի վերայ: Դժբաղդ մայրը զժուարութեամբ կարողացաւ հանգստացնել իւր բռնաւորին, որի մեկամաղձութիւնը հետզհետէ աւելի և աւելի զօրանում էր: Բըժըշկի խորհրդակցութեամբ հրաւիրվեցան մինչև անգամ Մորոնվալի մանկավարժները: Զեկին թողին իւր բաղդին և միայն պատահական հանգամանքը վճռողապէս ներգործեց Զեկի ապագայ կեանքի վիճակի վերայ...

Չէր հաւատալ իդա դէ-Բարանսին, եթէ մէկը մի տարի առաջ նրան գուշակէր, որ նա վիկոնտեսսա դ'Արժանգոն անունով նստած կը լինի աղօթագիրը ձեռքին և ցած գցած աչքերով գիւղի եկեղեցում, բայց այսպէս պատահեցաւ: Օգոստոսի 15-ն էր — Անտուանձանայ վերափոխման օր էր: Էտիօլ գիւղի եկեղեցին լուսաւորված էր և զարդարուած ծաղիկներով, երգիչները նոր սպիտակ

շապիկներով, անտառապահները հանդիսական շորերով, որսորդական դանակները զօտիկ կախած և ժողովրդի բազմութիւնը կազմում էին գեղեցիկ յատակը պատկերի, որի միջից ճիւս երևում էր զարդարուած Շարլոտան, Զեկի հետ, որ հագած է այս դէպքի համար լօրդ Պեմբոկի սիրած թէպէտ և՛ կտոր գցած, բայց էլի շատ կարճ զգեստը: Վերջապէս գալիս է լուպէն, երբ պէտք է հաւաքեն ողորմութիւն խեղճերի համար: Զեկը պէտք է գնայ առաջից մօմը ձեռքին, իսկ թաւիչեայ քսակը պէտք է բռնէ աղջիկը: Շարլոտան նայում էր իւր շուրջը, չը գիտենալով ում ընտրէ: Նորա աչքին ընկաւ Բժիշկ Ռիվալի թոռը, Սեսիլը, բոլորովին որբ, որը կորցրել էր ծնողներին իւր ծննդեան առաջին տարին: Նա նստած էր եկեղեցու մի կողմում մի հասակաւոր սեռզգեստ կին արմատի մօտ, և Շարլոտան ցոյց տուեց Զեկին այս սիրուն աղջկայ վերայ: Հանդիսաւոր կերպով անցնում էր Զեկը երկու ձեռքով բռնած հաստ կերոնը զար-

դարուած ծաղիկներով, նրա ետեւից անմեղ և աղատօրէն գնում էր գեղեցիկ Սեսիլը ուսերի վերայ ծածանվող ծամբորով, դեղնած երեսով և բաց մոխրագոյն աչքերով, աղջիկը ժպտում էր, բայց նրա ուղեկիցը ծանր էր: Արդեօք չէր գուշակում Ջեկը, որ նա, որի ձեռքը բռնած ունէր, աղբիւր կը լինի բոլոր ուրախութեանց, որ նա պէտք է ճաշակէր երկրիս վերայ: Պատարագը վերջանալուց յետոյ տիկին Ռիվալսը, Սեսիլի մեծ մայրը, մերձեցաւ Շարլոտային և խնդրեց թողնել Ջեկին ամբողջ օրով իրանց մօտ—խաղալու Սեսիլի հետ: Շարլոտան կարմրեցաւ ուրախութիւնից, յայտնելով իւր համաձայնութիւնը, իսկ երեխայքը ձեռք ձեռքի տուած, ուրախ առաջ վազեցին: Մեծ մայրը հազիւ կարողանում էր նոցա հասնել:

Այս օրից սկսած, երբ որ Ջեկը տանը չէր, հարցմունքին թէ ո՞ւր է նա, միշտ պատասխանում էին. Ռիվալսի մօտ է:

Բժիշկը բնակում էր Օլնէտից բաւա-

կան հեռու, միայարկ տնակի մէջ, որն զանազանվում էր միւս գիւղական տներից պղնձեայ տախտակով դրան վերայ. տան պատերը սևացել էին, պարտիզի ճանապարհները ծածկվել էին կանաչով — մէկ խօսքով բոլոր շուրջն ունէր տըխուր տեսարան, բայց կարելի էր նկատել, որ այստեղ երբեմն երազում էին բարեփոխութիւնների վերայ, մուտքի վերայ երևում էր մարկիզի նշան, բագում չը վերջացրած հովանոց, յայտնապէս տեսնվում էր որ այս մարդոցքամբաղդութիւն հասել էր հէնց բարեփոխութիւնների ժամանակը, և բոլորն այն ժամանակից մնացել էր տխուր սկզբանական ձևով, ամեն ինչ կարծես հարցնում էր. ինչո՞ւ է այսպէս: Այն ժամանակից անցել էր ութ տարի, բայց տան վերայ կարծես առաջվայ պէս հովանի էր սև ամպը: Տիկին Ռիվալսը սևազգեստ էր իւր աղջկայ համար, Սեսիլի երեխայական դէմքի վերայ արտափայլում էր տխրութիւն: Միայն բժիշկը իւր մշտական աշխատանքի շնորհիւ ապրում էր

աւելի հեշտ, պատահում էր, որ խաղա-
լիս թոռնիկի հետ նա յանկարծ սկսում
էր երգել մի ուրախ երգ, բայց իսկոյն
լռում էր, հանդիպելով իւր կնոջ յան-
դիմանող հայեացքին և զլխակոթ, լռիկ,
խաղում էր Սեսիլի հոպոպիկների հետ:

Տխուր էր խեղճ երեխայի կեանքը,
տանից նա հազիւ էր դուրս գնում,
զրեթէ իւր բոլոր ժամանակը անց
էր կացնում պարտիզում կամ գեղա-
տանը, ընդարձակ սենեակումը, լի խո-
տերով և զանազան դեղերով, որի փա-
կած դուռը տանում էր Սեսիլի մօր՝ Ե-
րիտասարդ կնոջ սենեակը, կնոջ, որին
այժմ նոքա ողբում էին: Նա երբեմն
այստեղ բնակում էր, այս պատերի մէջ
հաւաքուած էին նրա շորերը, նրա գըր-
քերն և նրա բոլոր իրերը, ոչ ոք, բացի
մօրից, այնտեղ չէր ներս մտնում: Յա-
ճախ կանգնում էր Սեսիլը այս դրան
առաջ, նա չատ էր մտածում, ուսումնա-
րան նրան չէին ուղարկում, վախենալով
միւս երեխաների ընկերութիւնից իսկ
մշտական միայնութիւնը նրան փեռս էր:

— Երեխային պէտք է զուարճացնել,
— ասում էր պ. Ռիվալսը իւր կնոջը —
ահա փոքրիկ Դ'Արթանդոնը, հիանալի
երեխայ է, հասակակից և բարբառնջեւ
չը զրտէ:

— Այո՛, բայց դժբա ինչ մարդիկ են,
որտեղիցն են, ոչ ոք նոցա չէ ճանա-
չում, — ասում էր չը հաւատացող տիկին
Ռիվալսը:

— Հիանալի մարդիկ են, իմ սիրելիս,
մարդը ճշմարիտ է տարօրինակ է, բայց
բանաստեղծ է: Կինը մի փոքր ցանցառ
է, բայց և այնպէս բարի, իսկ նոցա պա-
տուականութեան մասին ես երաշխաւոր
եմ:

Կինը զլուխը չարժ էր տալիս, նա չէր
հաւատում իւր մարդու սրտեւութեանը:
Բայց թոռնիկի տխուր կերպարանքն ա-
մեն ապացուցութիւններից աւելի էր
ներգործում մեծ մօր սրտի վերայ: Պա-
ռաւը հնազանդեցաւ, Ձեկը դառաւ Սե-
սիլի ընկեր: Սա էր նոր շրջան երեխա-
յի կեանքում: Բարեսիրտ բժիշկը յա-
ճախ տանում էր իւր հետ երեխանե-

րին, երբ դնում էր այցելելու հիւանդ-
ներին: Լաւ էին զոլում նոքա երեքն էլ
իրանց լայն կառքում. այս երկու երե-
խաների ընկերակցութեամբ ծերունին
ինքն էլ դառնում էր երեսայ: Ամեն
տեղ, ուր նոքա այցելում էին, Զեկին
և Սեսիլին հանդիպում էին սիրով: Ժո-
ղովուրդը, ինչպէս յայտնի է, ունի ա-
մենեւին առանձին հայեացք հիւանդու-
թեանց վերայ. գիւղացիների համար
հիւանդը — դա է վիրաւորված պատերազ-
մում, նրան պէտք է տանել որեւիցէ մի
առանձին տեղ, թեկը դնել ծառի մօտ
և առանց նրա շարունակել պատերազմը:

Գետինը չի կարող սպասել, տաւարը
պահանջում է հոգացողութիւն. ուստի և
ամեն ինչ էլ դնում է իւր կարգով, կար-
ծես ոչինչ առանձին բան չէ պատահել:
Եւ այդ պատճառաւ էլ ամեն տներում,
ուր նոցա տանում էր բժիշկը, երեսայ-
քը չէին նկատում տխրութեան հետե-
ւանքներ: Ամբողջ ժամերով նոքա նայում
էին, ինչպէս կլթում են կովերին, ինչպէս
վերցնում են հացը հնոցից, դնում էին

և ջրաղաց, ամեն տեղ հանդիպելով սի-
րոյ և գուրգուրանքի: Բժշկին բոլորե-
քեան սիրում էին, որ չէր խանգարում
խորամանկ ժողովրդին անխճմտանքօրէն
հարստահարելու բարեսիրտ ծերունուն,
ստիպելով յաճախ տալ նոցա ճրի խոր-
հուրդներ, նրա կառքը բոլորովին պա-
շարում էին:

Ռիվալսը չէր բաւականանում միայն
գրօսանքներով Զեկի հետ. նա հաւանե-
ցաւ նրա ըմբռնողութիւնը, նրա խելքը, և
նա պարապեցաւ երեսայի կրթութեամբ
էլ: Զեկի յառաջագիմութիւնները այն-
պէս ապշեցրին ծերունուն, որ նա առա-
ջին դէպքումն զովեց Շարլոտայի և
դ'Արժանդոսի առաջ իւր աչակերտին և
խորհուրդ տուեց նոցա, տալ իրանց որ-
դուն ճեմարան:

— Ա՛յ տղայ, եկ այստեղ, — կանչեց
բժշկի և բանաստեղծի խօսակցութիւ-
նից մի քանի օրից յետոյ Լաբասենդ-
ը, որն զբոսնում էր պարտիզումը Հիր-
չի և դ'Արժանդոսի հետ: — Ո՞վ չիւնեց
այս թակարդը ճագարների համար, որ
դրած է թիւի ծառի տակը:

Ջեկը դեղնեցաւ, գուշակելով յիշոց,
— բայց որովհետեւ չէր սովոր սուտ խօսելու, ուղիղ պատասխանեց.

— Ե՛ս:

Սեսիլը ցանկանում էր ունենալ կենդանի ճագար և նա նրան դուր գալու համար շինել էր նահապետական ձևով թակարդը:

— Դու շինեցիր մենակ առանց կաղապարի:

— Այո՛, առանց կաղապարի:

— Հիանալի է, հիանալի, — կրկնում էր հաստիկը, դառնալով դէպի իւր խօսակիցները: — Այս երեխան ծնուած է մեքենագործ: Շնորհք, բնազդում երեւում են — ինչ պէտք է անել: Յետոյ երեքըն էլ միասին չը դարձնելով ուշադրութիւն երեխայի վերայ շարունակեցին իրանց զբօսանքը:

— Այո՛, կոմսուհի: — ասում էր այն երեկոյեան սրահի վերայ նստած Լաբասենդը Շարլոտային, կարծես շարունակելով առաջվայ խօսակցութիւնը: Արհեստաւորն այժմ մեծ նշանակութիւն

ունի հասարակութեան մէջ: Մի արհամարհէք նրա չորացած ձեռքերը, նրա սուրբ շապիկը, նա ժողովրդին շատ մեծ օգուտ է տալիս:

Վերջ ի վերջոյ բանաստեղծը համոզելու համար, խօսեց իւր մասին հատապնդելով որ նա իրան երբէք այնպէս բաղդաւոր չէ դգացել, ինչպէս այն երջանկութեան ժամանակ, երբ որ բանում էր Լնդրէի գործրանումը և անուանվում էր Ռուդիկ:

Նա ստացաւ Լաբասենդը անունը միայն այն ժամանակը. երբ որ մտաւ գեղարուեստական շրջանը, այդ նոր առած անունը նորա գիւղի անուն էր, ուր որ նա ծնուել էր, մեծ գիւղի, որ գտնվում էր Լուարի ափում:

— Այդ այդպէս է, — երկիւղածութեամբ ասում էր Շարլոտան, բայց դիմանալու համար այդպիսի կեանքին պէտք է ոյծ: Գործը ծանր է, դուք իրանքդ էլ խոստովանում էք:

— Մանր է թոյլ կազմուածքի համար, բայց ում մասին էլ որ մենք խօսում

ենք ունի ամենեին առողջ կազմուածք:

— Ամենին առողջ, — շարունակեց Հիրշը, — դրա մասին ես երաշխաւոր եմ:

Դ'Արժանդոնը վերկացաւ կատաղած:

— Բոլոր կանայք միակերպ են, — բըղաւեց նա կոպտութեամբ — սա աղաչում է ինձ հոգս քաշել երեխայի մասին, ես աշխատում եմ, թէպէտ այստեղ և ուրախ ոչինչ չը կայ, խնդրում եմ իմ ընկերներին, իսկ այժմ ինձ ասում են, որ ես աւելորդ եմ:

— Ես ամենեին այդ չեմ ուզում ասել — նկատեց Շարլոտան և լաց եղաւ:

Սրանից յետոյ մի քանի օր անցաւ առաջվայ պէս, միայն Ջեկը նկատում էր, որ մայրը նրան աւելի ուժով է համբուրում ինչպէս համբուրում են այն մարդոց, որոնցից շուտով պէտք է բաժանուեն:

— Բժիշկ, ասում էր Ռիվալսին դ'Արժանդոնը ժպտալով, — մենք պարապեցանք ձեր աշակերտով, շուտով դուք կը լսէք նորութիւն, յոյս ունիմ, որ բաւական կը մնաք:

Բժիշկը վերադարձաւ տուն ամենեին յափշտակուած:

— Տեսնում ես, — ասում էր նա իւր կնոջը, — ես նոցա աչքերը բաց արի:

— Ձը գիտեմ, — ասում էր կինը, — իմ կարծիքով աւելի լաւ է եթէ թշնամիք ոչինչ չեն գործում, քան թէ հոգս են քաշում մեզ վերայ:

Ջեկը նոյն կարծիքն ունէր:

Վախճանը շուտով պարզվեցաւ: Ռիվալսը խօսեց բանաստեղծի հետ, բայց չը կարողացաւ նրա միտքը փոխել Ջեկին Էնդրէի դործարանը տալու մասին, որ Լաբատենդրի խորհուրդն էր. այնտեղ գտնվում էր և նրա եղբայր Ռուդիկը:

Դժուար էր համոզել երեխային, բայց նա էլ համաձայնուեցաւ տեսնելով մօր արտասուները:

— Կատարիւր այդ ինձ համար, Ջեկ, ո՞վ գիտէ, կարելի է ժամանակով ես կը ճարեմ քո մէջ միայնակ բարեկամս:

Ջեկը բոլորովին յաղթվեցաւ:

Բայց երդուիւր ինձ, ասաց Ջեկը, որ

կը սիրես ինձ առաջվայ պէս և չես ա-
մաչիլ ինձանից, երբ ես կ'ունենամ սե-
ձեռքեր: Դժբաղդ մայրը պատասխանի
փոխարէն գուրգուրեց և համբուրեց Ջե-
կին:

II

— Նայիր, — բացականչեց Լարասեն-
դը, թատրոնական շարժուածքով ցոյց
տալով Ջեկին Լուարա գետն, որը նոքա
անցնում էին նաւակով Լնդրէի ճանա-
պարհին, արդեօք գեղեցիկ չէ:

Եւ յիրաւի կար գուարճանալիք: Յու-
լիսեան փայլող արեգակը արտափայ-
լում էր ալիքների մէջ, օդը պարզ էր,
գետի վերայ կենդանութիւն էր. երե-
ւում էին հարթայատակ նաւեր լցուած
փայլուն աղով, շոգենաւեր, մեծ եռա-
կայմ նաւեր, որոնք վերադառնում էին
հեռու ճանապարհորդութիւնից, ամենից
յետ անցնում էին առաջատարութեան
ւերը: Չը նայելով յուլիսեան շոքին ծո-
վից հողմ էր փչում, որն վկայ էր ան-
սահման ովկիանոսի կանաչ ալիքների,
փոթորկի և վատ եղանակի մօտկու-
թեան:

— Բայց ո՞ր է Էնդրէն, հարցրեց Ջեկը:

— Ահա այն կղզում, որ դիմացն է:

Արծաթափայլ մառախուղի մէջ, որ շրջապատում էր կղզին, Ջեկը աղօտ կերպով նկատում էր բարձր կաղամախների և երկայն ծխնելոյզների շարքը, որ արձակում էին սև և թանձր ծուխ: Նրա ականջին հասնում էր խլացուցիչ ձայն: Ափի վերայ կանդնած էր մի մարդ և նայում էր մօտեցող նաւակին:

— Դա Ռուդիկն է, նկատեց երգիչը և բղաւեց «կեցցէ»:

— Եղբայր, այդ դ՞ու էս, լսուեցաւ ափիցը:

— Ի հարկէ, ես եմ:

Նաւակը մօտեցաւ ափին, եղբայրները ընկան միմեանց գիւրկը: Արհեստաւորը երգչիցը մեծ էր: Նրա կոշտ և արեակէզ երեսը լուսաւորվում էր փոքրիկ, բայց շատ խորամանկ աչքերով:

— Դէ՛ լաւ, ինչպէս են ձերայինք: — հարցրեց Լաբասսենդրը — բոլորեքեան առողջ են:

— Փառք Աստուծոյ, բոլորեքեանը: Բայց ահա և նոր աշակերտը, կարծեմ թոյլ է:

— Զօրեղ է ինչպէս եղն, փարիզի ամենալաւ բժիշկների վկայութեամբ:

— Աւելի լաւ, մեր գործը թեթեւ գործ չէ: Բայց այժմ, եթէ կամենում էք, դնանք կառավարչի մօտ:

Լայն ծառուղին դուրս բերեց նրանց փողոցն, ուր երկու կողմն էլ երևում էին փոքրիկ, սպիտակ, մաքուր և ամենևին միայնակ տնակներ: Այստեղ բնակվում էին դործարանի զլխաւոր գործաւորները և աւագ արհեստաւորները, մնացածները բնակում էին միւս ափի վերայ:

Բոլորի շուրջը տիրում էր լռութիւն, ամբողջ կեսնքը կենդրոնանում էր այս ժամին դործարանի պատերի մէջ:

— Բայց դրօշակը ցած է գցած, — բացակացէց երգիչը, համնելով դործարանի դրան մօտ...

Անիծածը ինձ շատ վախեցրեց:

Եւ նա բացատրեց Ջեկին, որ արհեստաւորների գալուց հինգ բոպէից յետոյ

դրօշակը ցած են գցում և զործարանի դռները փակում են:

Ով որ կուշանայ, նրան նշանակում են բացակայ և երրորդ անգամ բացակայութիւնից յետ արտաքսում են:

Մինչև որ նա տալիս էր այս բացատրութիւնները նորեկին, նրա եղբայրը զռնապահին աչքով արաւ և նոքա ներս մտան զործարանի բակը:

Անթիւ զործարաններից լսվում էր զարհուրելի շառաչող և սուլող ձայն: Նա էր երկաթէ քաղաք, քայլերն արձագանք էին տալիս, պղնձեայ տախտակների շնորհիւ, որոց վերայ նոքա քայլում էին: Մեր ճանապարհորդները անցնում էին երկաթեայ ձողերի, ձոյլ պղնձի կոյտերի, երկար, հին, ժանգոտուած թնդանօթների միջով, որոնք նշանակած էին հալելու համար:

Ռուդիկը վեր ի վերոյ անուանում էր զանազան բաժինները: — «Այս ընդհանուր արհեստանոցն է, — ասում էր նա, — իսկ այնտեղ — կաթսայի, այս մեծ, և այն փոքր ճախարակադործի դարբնոցներ, ձուլարան-

ներ »: Նա բղաւում էր աղժուկի պատճառաւ: Գործարանների բաց դռներից դալիս էր ծուխի և այրուած երկաթի հոտ, օդն և զետինը կարծես անհասկանալի տատանման մէջ էին:

— Ահա և վարչութիւնը, — ասաց Ռուդիկը: — Նոքա կանգնեցան լիզայի ժամանակներից մնացած մի տխրատեսիլ ամբոցի առաջ, Դու ներս կը մտնես, աւելացրեց նա, դառնալով դէպի եղբայրը.

— Ի հարկէ, ևս ուզում եմ տեսնուիլ կապկի հետ նոքա անցան մի քանի փոքրիկ սենեակներ: Ա՛յ երջինումը զրաւեղանի առաջ նստած էր մի մարդ խիստ և սառը դէմքով:

— Բարե ձեզ, պարոն Ռուդիկ, ասաց նա — և ահա սա է այն փոքրիկ հրաշքը, քարե քեզ, որդեակ. ասում են, որ դու ունիս զարմանալի ընդունակութիւն դէպի մեքենադործութիւն, — չատ լաւ է, չատ լաւ է: Բայց, Ռուդիկ, — աւելացրեց նա, խորամանկութեամբ նայելով

երեխայի վերայ, — նա կարծեմ առողջ կազմուածքի տէր չի երևում: Արդեօք տկար չէ:

Ո՛չ, պարոն կառավարիչ, ինձ հաւատացնում են ընդհակառակն, որ նա շատ զօրեղ է:

— Եւ ինչպէս, — շարունակեց Լաբասենդըրը, ու նկատելով կառավարչի զարմացող հայեացքը, հարկաւոր համարեց նրան յիշեցնել թէ ով է ինքը:

— Ես ձեզ շատ լաւ եմ յիշում, — սառնութեամբ պատասխանեց կառավարիչն և իսկոյն վերկացաւ:

— Դէ լաւ Ռուդիկ, տարէք ձեր աշակերտին և աշխատեցէք զրանից լաւ արհեստաւոր դուրս բերել, ես յոյս ունիմ ձեզ վերայ:

Ջեկը և Լաբասենդըրը դուրս գնացին, Ռուդիկը յետ մնաց և խօսեց էլի մի քանի խօսք կառավարչի հետ: Երբ որ նա հասաւ իւր ընկերներին, նրա երեսի վերայ արտափայլում էր հողս:

— Ինչո՞ւ մասին էր նա խօսում քեզ հետ, հարցրեց Լաբասենդըրը:

— Իմ խեղճ քրոջ որդու Շարլոյի մասին, նա շուայլացաւ իւր մօր մահից յետոյ, խաղում է, խմում է, և պարտքեր է անում: Հաւատա՞ չեմ իմանում ինչ անեմ նրա հետ: Նկարչական արհեստանոցումը լաւ փող է աշխատում, ամբողջ Լնդէնումը չը կայ դրա նման նրկարիչ, բայց թղթախաղը բոլորը կլանում է: Մտածում էինք հեռացնել այստեղից, կարելի է թողնի վատ ծանօթներին: Այժմ կառավարիչը դաւաւ նրա համար տեղ, Գերինիէում, բայց վախեւում եմ, որ չ'երթայ: Ի՞նչ կը վնի, որ դու խօսես նրա հետ:

— Եւ խօսեմ, անպատճառ կը խօսեմ:

Այսպէս խօսելով նոքա չը նկատելով հասան մինչև տուն: Ռուդիկի տան շէմքումը կանգնած էր մի երիտասարդ գեղեցիկ և սիրուն կազմուած կինարմատ: Նա կանգնած էր գլխակոր, կարծես նրա ճախ մազերը ծանրացնում էին նրա գլուխը և ուշադրութեամբ լսում էր բարձրահասակ երիտասարդին, որ պատ-

մում էր մի բան մեծ ոգևորութեամբ:
— Նայիր—ասաց Ռուդիկը — կինս
խրատներ է տալիս քեռորդուն:

Միայն այժմ յիշեց Զեկը, ինչոր լա-
բասէնդրը պատմել էր նրան ճանապար-
հին, որ նրա եղբայր Ռուդիկը ամուսնա-
ցաւ երկրորդ անգամ մի քանի տարի
առաջ: Հիւրերի զաւուց յետոյ սկսվե-
ցան սովորական ողջոյնները, տանտիկ-
նոջ ծանօթացրին Զեկին, նա վարուե-
ցաւ նրա հետ սիրալիր կերպով, բայց
Շարլոն գցեց նրա վերայ արհամարհա-
կան հայեացք:

Պարտեզումը տան առաջ պատրաստած
էր սեղանը: Նստեցան ճաշելու:

— Բայց ուր է Զինայիգան, հարցրեց
Լաբասսենդրը:

— Նա այս բոպէլիս կը վերադառ-
նայ, — պատասխանեցին նրան, — նա զը-
նում է ամրոցն օրով բանելու:

— Ի՞նչպէս, այ սէր, գործ ունենալու
կապիլի հետ, — և Լաբասսենդրը սկսեց
նախատել կառավարչին ինչքան կարող
էր: Շարլոն նրան օգնում էր, Ռուդիկը

եռանդով պաշտպանում էր իւր կառա-
վարչին, որին շատ սիրում էր, նրան
օգնութեան հասու Զինայիգան, փոքրիկ
հաստիկ, և սգեղ, հօր նման օրիորդը,
քաջութեամբ բռնեց սա թոյլի կողմը և
հօր հետ միասին հաստատում էր, որ
կառավարիչը հիանալի մարդ է: Նրբ որ
նա դառնում էր դէպի հօրաքրոջ որ-
դին, նրա ձայնի մէջ լսվում էր մի զար-
մանալի զայրոյթ:

— Լսիր, Շարլօ, — վերջապէս ասաց
Ռուդիկը, — սա քեզ ապացոյց որ կառա-
վարիչը բարի մարդ է, նա գտաւ քեզ
համար հիանալի գործ Գերինիէում, և
յանձնեց ինձ, որ խօսեմ քեզ հետ, լաւ
մտածիր, պայմանները յարմար են, և...

— Նւ աւելի լաւ է դնալ սիրով, քան
թէ արտաքսուել, այնպէս չէ մօրեղբայր
— կոպտութեամբ պատասխանեց Շար-
լօն:

Ռուդիկը իւր խօսքն էր պնդում քեռ-
որդին չէր հնազանդվում, այս վէճի ժա-
մանակը Զինայիգան աչքը չէր հեռաց-
նում խորթ մօրից:

— Այնպէս չէ՞ մայրիկ. — ասաց նա վերջապէս, — ճշմարիտ չէ՞ որ Շարլօն պէտք է երթայ:

— Ի հարկէ, ի հարկէ, — պատասխանեց տիկին Ռուդիկը, — նա լաւ կ'անի, ընդունելով կառավարչի առաջարկութիւնը:

— Շարլօն վերկացաւ, տխուր և վերդոված:

— Շատ լաւ, — ասաց նա, — եթէ դուք բոլորեքեանդ ուրախութեամբ ցանկանում էք ինձ հեռացնել, ես մէկ շաբթից, յետոյ կը փախչեմ: Բայց այժմ թողնենք այս խօսակցութիւնը:

Նրեկոյեան Ռուդիկի մօտ եկան քաւական հիւրեր, բոլորեքեան էլ ուղում էին տեսնել Վաքասենդրին, մրոտ և յօգնած արհեստաւորները հստոտում էին սեղանի շուրջը ազատ դիրքով, կլանում էին գինու բաժակները, սրբում էին շրթները թեղանիքով, խօսում էին մեծ մասամբ Զեկին անհասկանալի բարբառով: Նոցա վերայ նայելով Զեկը շատ տխրեցաւ: ՅԱնն ևս ինչ պիտի դառ-

նամ, զարհուրանքով մտածեց նա: Ռուդիկը ներկայացրեց նրան երկաթի դորձարանի կառավարչին, պ. Լիրիսկէնին, մօրուհւոյ ցիկլոպին, որի ղեկավարութեամբ Զեկը պէտք է աշխատէր: Լիրիսկէնը կնճռոտեց երեսը, նայելով իւր ապագայ աշակերտի սպիտակ ձեռքերի վերայ և յայտնեց որ նա թոյլ է երեւում:

— Ճանապարհորդութիւնիցը յոգնած է և հագուստն էլ մերը չէ, — ասաց Ռուդիկը:

— Կլարիսա, — աւելացրեց նա, դառնալով դէպի կինը, — պատրաստիր դրա համար շապիկ: Եւ դիտես էլի ինչ, կինըս, ուղարկիր դրան քնելու, վաղը պէտք է վաղ վերկենայ: Լսում ես, այ տղայ, ճիշդ հինգ ժամին կը զարթեցնեմ քեզ:

— Լսում եմ, պ. Ռուդիկ:

Զեկը լսելով Վաքասենդրի զանազան բտրի ցանկութիւնները Զինայիդայի և նրա խորթ մօր հետ մտաւ տուն: Նրան տարան վերն Զինայիդայի սենեակը, ո-

րի կարասիքը հին ոճով էր և որտեղից ուղիղ սանդուղը տանում էր վերնատուն, որ պէտք է նրա ապաստարանը լինէր։ Զեկի համար վառեցին լապտեր, նա բարեկեց երկու կինարմատին և բարձրացաւ իւր ննջարանը։ Նա նայում էր այս ցածր առաստաղին, նայում է արհեստաւորի զգեստին, որ դրած էր անկողնի վերայ, լայն վարտիկ, չապիկ ուսերին խոշոր կոճակներով, որ չը քանդուի զօրեղ ձեռքերի շարժմունքից և զգում էր իրան ամենեկին ուրիշ կեանքի մէջ։

Նա կարծում էր, որ նրա և այս մարդոց մէջ ամբողջ անդունդ է։ Միայն մօր վերայ մտածմունքը պաշտպանում և մխիթարում էր նրան, նա մտածում էր նրա վերայ, նայելով աստղալից երկնքին և պարտիզից լըսվում էին հարբած արհեստաւորների երգերը... Ահա և առաւօտ է։

Երկաթի ահագին դարբնոցի մէջտեղում դռնվում է հսկայական երկաթէ շերտը գետնին ամրացրած և միշտ շարժ-

վում է, բացվում է իբրեւ բերան, վեր է առնում և ճմլում է կարմրած մետաղեայ շերտերն, որոնք դրանից յետոյ ընկնում են մուրճի տակ։ Այդ շերտը անուանվում է ճմլիչ։ Ամեն սկսողը ամենից առաջ ծանօթանում է դրա հետ։ Զեկը ընկաւ ճմլիչի մօտ, անկարելի է արտայայտել այն երկիւղը և յուսահատութիւնը որով լի է Զեկի սիրտը։ Ամենից առաջ զարհուրելի էին աղմուկը, զարհուրելի աղմուկը, երեք հարիւր մուրճերի խլացնող աղմուկը, որոնք միասին խփում էին սալին, փոկերի չոցը, երեք հարիւր մարդոց զօրեղ ջնհառութիւնը և ոչ մարդկային աղաղակները։ Յետոյ այս ամբողջ դարբնոցի միջով վազող շոգեկառքերը, բեռնաւորված կարմրած մետաղներով, հողմահարների շարժումը — բոլորի շուրջը ճարճատում է, որոտում է, ձայն է հանում, ուռնում է, հաչում է։ Առաստաղից իջնում են ծանր շղթաներ, սիւներից կախ են արած գործիքներ, որոնք յիշեցնում են ինկվիզիցիայի տանջանքի գործիքները՝ կեռեր, ունն լիքներ,

ագցաներ, իսկ երկաթէ դարբնոցի խոր-
քումը, մթնումը, բարձրանում է հսկայ
մուրճը, որ խփում է 30,000 կիլոգրա-
մի ուժով, որ ստանալով բոլոր դարբն-
ների երկրապագութիւնը, այս հրէջք
կարծես Բահաղն է տաճարի մէջ, որ
նուիրած է ուժի չաստծուն: Զեկը ոչնչ-
չացրած է, լուռ կատարում է նա իւր
պարտաւորութիւնը: Նրա գործն էր չար-
ժեւ այն պտուտակն, որ շարժում է վիթ-
խարի ճմլիչը: Բայց ինչպէս նա փոխվել էր, դեղ-
նած, լղարած, քրտնաթոր, թեղանիքը
վեր քաշած, կարմիր աչքերով—նրան ա-
մենին էր կարելի ճանաչել: Արհեստա-
նոցումը իւրաքանչիւր արհեստաւոր իւր
առանձին մականունը ունի: Զեկին իւր
լղարութեան պատճառաւ անուանեցին
—Ացաէկ:

— Հէյ, Ացաէկ, շտապիր, եղբայր:
Ճխափիր պտուտակը: Աւելի պինդ. — Ճըխ-
ափիր համարձակ:...

Դա էր արհեստաւոր Լիւիսկէնի ձայ-
նը: Սև հսկան, որին Ռուդիկը յանձնել

էր Զեկի սկզբնական կրթութիւնը, ժա-
մանակ առ ժամանակ կանդնում էր և
ցոյց էր տալիս, ինչպէս պէտք է բռնել
մուրճ, դժուար էին հասկանում նոքա
միմեանց. ուսուցիչը կոպիտ է, ևրևխան
ճարպիկ է: Ուսուցիչն արհամարհում է
նրա թուլութիւնը, ևրևխան վախում է
այդ ուժից: Բայց նա անում է ինչքան
կարող է, բոլոր իւր ուժով ճիւտում է
պտուտակը, բայց նրա ձեռքերը արիւ-
նաթաթախ են, բոպէ առ բոպէ նա ու-
շաթափվում է, նրան թվում է թէ նա
ինքն է սլոտտակն, այն ահագին մեքե-
նայի մէջ, որն շարժվում է գոլորչի
ուժով: Զարհուրելի կեանք:

Ամեն օր ճիշդ հինգ ժամին Ռուդիկը
ղարթեցնում էր նրան, ձեռաց նախա-
ճաշելով նոքա վաղում էին դործարանն,
ուր ամեն կողմերից հաւաքվում էին
արհեստաւորները շտապելով և բոթելով
միմեանց, որ մտնեն դրօշակը իջեցնե-
լից առաջ: Ո՛հ, ինչպէս վախենում էր
Զեկն այս դրօշակից: Նա երբէք չէր ու-
շանում, բայց մէկ անգամ ընկերները

նրա հետ չար խաղ խաղացին. նա արդէն մտնում էր արհեստանոցն և ահա յանկարծ քամին թռցրեց նրա գլխարկը, նա յետ դարձաւ որ վերառնի, բայց ընկերն, որ գալիս էր նրա ետեից, բռնեց ոտքով, նրանից յետ երկրորդն և երրորդն այնպէս որ գլխարկը գլորվում էր աւելի և աւելի հեռու և ամենքը ծիծաղում էին. Զեկը վազում էր նրա ետեից երբ լսեց իւր ետեից ծանր քայլեր— յետ նայեց և ահա Բիլիդէրը նրան հասնում էր ձեռքին բռնած չարաբաղդ գլխարկը, հանդիպումն հին ծանօթի հետ շատ ուրախացրեց Զեկին, բայց խօսելու ժամանակ չէր, նա շտապով չնորհակալութիւն արաւ և վերադարձաւ վաղելով դարբնոցը. Արհեստանոցում Զեկին չէին սիրում, նրա վերայ ծիծաղում էին, նրան հալածում էին, նա ամենքի համար օտար էր, ոչ ոք նրան պաշտպան չէր, բայց պէտք էր վերէժ հանել բարկացած ժամին որեիցէ մի մարդուց:

Միայն կիւրակէ օրերը Զեկը հանգս-

տանում էր, այս օրը վեր էր առնում արկղից մի գիրք, որ տուել էր նրան բժիշկ Ռիվալսն և դնում էր կարդալու լուարա դետի ափը: Երբ որ կարդալից ձանձրանում էր, նա խփում էր աչքերը և աշխատում էր մոռանալ ամեն ինչ. ընկզմում էր անցեալի մէջ և յիշում էր մօրը, Սիսիլին: Երբ որ սկսուեցան աշնանային անձրեւները, կիւրակէ օրերը նա անց էր կացնում Ռուդիկի ընտանիքում: Այդ բարի մարդիկը նրան շատ սիրեցին, մանաւանդ Զինայիդան, որ պաշտում էր Զեկին:

Ռուդիկները շատ զարմանալի դոյզ էին: Ամուսինը պաշտում էր կնոջը, սիրահարուած էր նրա վերայ ինչպէս երեխայ, բայց ամեն մարդ առաջին անգամ տեսնելիս կասէր որ զոքա իրար յարմար չեն: Կլարիսսան շատ ձոխ էր, շատ բարեկիրթ կոսիտ արհեստաւորի համար, իսկ բամբաստէր կանայք երբէք չէին բաժանում տիկին Ռուդիկի և Շարլոյի անունները: Նրան պաշտպանելու համար կարելի է ասել որ նա

Շարլոյին ճանաչում էր իւր ամուսնութիւնից առաջ և եթէ սա էր արեւ վաղ առաջարկութիւն, յլարիստան նրան աւելի նախագաս կը համարէր: Բայց գեղեցիկ հոպոպիկը սկսեց մանդալ նրա ետեւից միայն այն ժամանակ երբ որ նա դառաւ նրա հարսը:

Նախանձոտ արգոսը (ամենատեսը) միշտ հսկում էր երիտասարդ կնոջը Զինայիդայի միջնորդութեամբ: Զեկը կինարմատներէ հետ իրան աւելի ուրախ էր զգում քան թէ Ռուդիկի հետ, իւրաքանչիւր կիւրակէ Զեկը նոցա համար կարդում էր բարձր ձայնով գիրք, տանտէրն այդ ժամանակ քնում էր բազկաթուռի վերայ, յլարիստան նստում էր պատուհանի մօտ, իսկ Զինայիդան, միշտ դործունեայ, կարկտում էր տանեցոց սպիտակեղէնը: Զեկը ամենից յաճախ կարդում էր նոցա համար Դանտէի—Դժոխքը: Այս հոյակապ բանաստեղծութիւնը զօրեղ տպաւորութիւն էր անում ունկնդիրների սրտի վերայ:

Մէկ անգամ կարդալու ժամանակ

Զեկը լսեց փողոցում, պատուհանի տակը, ծանօթ աղաղակը. «գլխարկներ, գլխարկներ, գլխարկներ»— և նա դուրս վազեց որ խօսի իւր ծանօթի հետ: Կըլարիստան նրան առաջը կտրեց և կոխեց զրպանը մի նամակ:

Իւր մասին Բիլլիդէրը հաղորդեց Զեկին, որ առուտուրը լաւ է գնում, որ նա բնակում է այժմ Նանտումը, քրոջ մօտ, որի ժարդը հիւանդ է, իսկ իւր վաստակը ուղարկում է հօր համար: Երբ որ Զեկը վերադարձաւ, տիկին Ռուդիկը վրդոված ձայնով հարցրեց նրան. ինչո՞ւ մասին էիք խօսում նրա հետ: Նա պատասխանեց որ նրան ճանաչում է արդէն վաղուց և խօսում էր նրա գործերի մասին: Երիտասարդ կինը աղատ շունչ քաշեց, բայց ամբողջ երեկոյ սովորականից աւելի մտածմունքի մէջ էր...

Զեկի Լնդրէն տեղափոխուելուց անցել էր ամբողջ տարի, նա չարունակում է յամառութեամբ աշխատել, բայց մինչև անգամ հետքը կոչման դէպի մեքենագործութիւն նրա մէջ չէր նկատ-

վում: Մօրից նա յաճախ նամակներ էր ստանում, անսովոր ոճով էին գրած այդ նամակները, պարզ էր որ նոքա գրած էին դ'Արժանդսնի կուպիտ խորհուրդներին և խիստ յանդիմանութիւնների թելադրութեան տակ, իսկ հոգեկան շատախոսութիւնք և քնքոյշ գուրգուրանք գրած էին լինում այն ժամանակ երբ որ որ Շարլոտային յաջողում էր մնալ միայնակ:

Ինչքան որ կարելի էր նկատել նրա նամակներից նրա կեանքը թեթև կեանք չէր, յաճախ նա աղաչում էր Զեկին, որ շատ աշխատի, պատրաստէ իրան ծանր ապագայի համար, — պարզ էր որ խեղճ դոնը, աւելի քան թէ երբեիցէ տանջւում էր ծանր լծի տակ: Մօր աղաչանքները, որ երևում էին նրա խանդակաթ նամակներից մէկումը, որ գրած էր Ռուդիկի կողմից ուղղած նամակի առթիւ, որի մէջ առաջինը յայտնել էր զօրեղ կասկած, որ Զեկը կարողանայ դառնալ լաւ արհեստաւոր, չարժեքին Զեկի սիրտը: Նա վճռեց յաղթել իւր

զղուանքը դէպի ատելի արհեստը, դառնալ բարի արհեստաւոր, որ աղաթէ մօրը բռնաւորի ձեռքից, Նա սկսեց այն բանից որ պահեց իւր բոլոր գրքերն արկղում և ամուր փակեց այն, որով և ստացաւ Ռուդիկի գովասանքը:

— Ա՛յ դա շատ լաւ է, — նկատեց արհեստաւորը — գրքերից ինչ օգուտ կայ: Միայն յիմար բաներով գուլիս են լըցնում, իսկ եթէ դու ունիս սէր, եկ ինձ մօտ երեկոյեանները արհեստանոցը, կարելի է և կ'իւրակէ օրերը, ես այնտեղ աշխատում եմ նշանակած ժամերից աւելի և կը սովորացնեմ քեզ երկաթ կըռել, կարելի է ինձ աւելի կը յաջողի:

Զեկը ի հարկէ երախտագիտութեամբ ընդունեց այս առաջարկութիւնը, բայց համակրութիւն և սէր դէպի այդ գործը իր սրտումը չէր գտնում: Ի զուր էր աշխատում Ռուդիկ որ ստիպէ Զեկին զուարճանալ ահագին մեքենաների մասերով, որոնք կազմում էին յարմար գործադրութեան չորհիւ մի կատարեալ ներդաշնակ ամբողջութիւն: Զեկը տես-

նում էր մեքենաների մէջ միայն կոպիտ
ոյժ և միշտ սպառնող վտանգ։ Բայց
միայն մէկ անգամ, դործարանի մէջ
գտնուելիս, նրան յաջողեցաւ վկայ լի-
նել հանդիսին, — դա էր ճանապարհ դը-
ցելը ահագին շողմեքենայի 1000 ու-
ժով, — այս հանդէսը Ռուդիկի բացա-
ցատրութիւններէն աւելի լաւ հասկաց-
րեց նրան, որ մեքենագործութիւնն էլ
ունէ իւր տեսակ մեծութիւնն, իւր տե-
սակ գեղեցկութիւնը։

Այստեղ հեղինակն անում է այն հան-
դէսի մանրամասն նկարագրութիւնն, որ
մենք բաց ենք թողնում և անցնում վէ-
պի շարունակութեան։ Յիշատակութեան
արժանի էր այդ հանդիսում այն որ նա
վերջացաւ մի սարսափելի դէպքով, այն
է հսկայ մեքենան ճմլեց և մէջտեղից
կէս արաւ մի արհեստաւորի)։

Այդ օրը ամբողջ կղզու վերայ խըն-
ջոյք էր։ Ռուդիկի մօտ երկայն սեղանի
շուրջը հաւաքվել էին արհեստաւորներէից
ընտիրները։ Առաջ խօսեցին քամրադ-
ղութեան մասին. երեխայքը փոքր են,

չեն կարող աշխատել, կառավարիչը
խոստացաւ այրի կնոջը թոշակ, յետոյ
յաւիշտակութեամբ և սիրով խօսեցին
մեքենայի մասին. կեսնըումը առաջին
անգամն էր, որ Զեկը հետաքրքրութեամբ
լսում էր այդ խօսակցութիւնը, յետոյ
սկսեցին զինի խմել և երգեր երգել, նա
դրա էլ մասնակից եղաւ. ավստի որ
լարաստեղծը և ընկերութիւնը այս բո-
ւետիս նրա վերայ չէին նայում, — ան-
պատճառ կը դովէին։ Արեակէզ, կոշտա-
ցած ձեռքերով նա ամենին չէր դա-
նազանվում միւս արհեստաւորներէից։

Մինչև անգամ չեք ետեկէնը նկատեց
Ռուդիկին։

— Բայց քո աշակերտդ էլ այն չէ,
ինչոր էր, վարժվում է — սատանան տա-
նի դրան։

Ռուդիկի տանը այդ միջոցին պատա-
հել էին շատ նորութիւններ. Շարլոն
Սէն-Նաղար տեղափոխուելից յետ, ա-
ռանց քաշուելու, նշանակեց Կլարիսա-
յին տեսակցութիւն Լա-Բասս Լնդրէում,
ուր վարձել էր մի սենեակ այդ նպա-

տակով և վերջինը յաճախ գնում էր նրա մօտ կիսամեռ երկիւղից և ամօթից, բայց էլի գնում էր. նոցա յարաբերութիւնն ոչ ոքի համար դադարնիք չէր: Շուտով Զեկն էլ իմացաւ այս մասին, մանաւանդ վրդովում էր Զեկին այն մասնակցութիւնը որ ունէր այս դործումը Բեկիւղէրը: Թափառական վաճառականը հասցնում էր Վլարիսային Շարլոյի նամակները, սրան էլ նոցա պատասխանները:

Մի անգամ Զեկը յանդիմանեց նրան այս մասին, խեղճը նեղացաւ ասելով որ պատճառ չի գտնում հրաժարուելու աւելորդ կողէկից, լաւ էր եթէ կարելի լինէր այն վաստակել արդար աշխատանքով:

Միայն Զինայիդան ժամանակ չունէր այդ մասին մտածելու, նա էր հարսնացուն երիտասարդ գեղեցիկ Մանփէնի, որ ծառայում էր մաքսատանը:

Սա Զինայիդային արժան չը նստեցաւ, այսինքն իսկապէս նրա հօրը, որ ստիպուեցաւ 7000 զուտ դրամ օժիտ

տալու իւր աղջկան: Մանփէնը պակասով չէր համաձայնում: Ռուդիկը կամենում էր հրաժարուել. բայց կինը համազեց նրան, — Վլարիսային իբրեւ սիրահարուած կնոջ հասկանալի էր սիրոյ կիրքը: Զինայիդան բոլորովին դադարած էր հարսանիքի պատրաստութիւններով, տան մէջ կատարեալ աղճուկ էր, մէկ ընկերներն էին զալիս, մէկ հարկաւոր էր զգեստը չափել, մէկ ընծաներ ստանալ — իսկ ընծաները բաղմամբ էին, ամենքը սիրում էին բարեսիրտ աղջկան և ուրախ էին որ առիթ ունեն նրան բաւականութիւն պատճառելու: Զեկը նոյնպէս մտածում էր գնել Զինայիդայի համար մի գեղեցիկ ընծայ: Շարլոտան իմանալով օր. Զինայիդայի առաջիկայ հարսանիքն, ուղարկեց որդուն 100 ֆրանկ, որ գնէ հարսնացուի համար ընծայ և կարել տայ իւր համար հարսանեաց զգեստ, միայն ոչ ոքին չ'ասէ, որ այդ գումարը մօրիցն է ստացել: Այլ իբրեւ թէ այն իւր խնայողութեանց պետուղն է, որովհետեւ կրակից աւելի վա-

խենում էր նա, որ դ'Արժանդոնի ա-
կանջը չը համնի որդուն նուիրած զու-
մարի լուրը:

Մի ձմեռային մութը գիշեր Ջեկը տուն
դառնալիս տեսաւ Կլարիսային նախա-
սենեակում մի նամակ ձեռին—նա երե-
ւում էր կիսամեռ ցրտից և երկիւղից:
նայելով թշուառ կնոջ վերայ Ջեկը յի-
շեց, որ նախընթաց երեկոյեան նա լսել
էր արհեստանոցում, որ, իբրև թէ Շար-
լոն մեծ գումար էր տանել տուել անդ-
լիական նաւի մեքենագործներին: Երկ-
տասարդ կնոջ վրդովմունքից երևում էր
որ նամակը բովանդակում էր այդ տը-
խուր լուրը: Ճաշի ժամանակ Կլարիսան
աշխատում էր ուտել, խօսել, բայց դը-
ժուարութեամբ ծածկում էր իւր վըր-
դովմունքը: Բայց նրան հետազօտող չը
կար, Զինայիդան բացի իւր փեսայա-
ցուից ոչինչ չէր տեսնում: Վերկացան
սեղանից, Կլարիսան շրջում էր անկիւ-
նից անկիւն, կարծես իւր համար տեղ
չէր գտնում հանդստանալու:

— Աստուած իմ, ասաց նա վերջա-

պէս նայելով պատուհանից: Ինչ անպի-
տան եղանակ է, խեղճ Մանթէն, ինչպէս
դուք կ'երթաք տուն, գոնէ շտապեցէք
գնալու:

— Այո, արդէն ժամանակ է, — ասաց
փեսացուն վերկենալով տեղից: Զինայի-
դան սկսաւ հագցնել նրան, մնաս բարով
ասելով վերջապէս նա ճանապարհ ըն-
կաւ: Արդէն ուշ էր, Ջեկը ուղեց, ինչ-
պէս իւրաքանչիւր գիշեր, գնալ զուր
փակելու:

— Հարկաւոր չէ, — բացականչեց Կլա-
րիսան, ես փակեցի, դնանք վերև: Ժա-
մանակ է քնելու:

Զինայիդան քնելու ժամանակ հունէր,
նա մնաց իւր սենեակում Ջեկի հետ, և
սկսեց ցոյց տալ նրան իւր ընծաներն,
օժիտը, զգեստները, սպիտակեղէնը և
վերջապէս արկղիկը նշանաւոր 7000 ֆը-
րանկով, որ խոստանում էր նրան վար-
դագոյն յուսալի ապագայ: Նոքա շատա-
խօսում էին և ծիծաղում:

— Թոյլ տուր երեխային քնել, Զի-
նայիդա, — լսուեցաւ ներքեից Կլարիսա-

յի ձայնը — նա էքուց վաղ պէտք է
զարթի:

— Ճար չը կար, նոքա մեկնեցան:

Իսկ այդ ժամանակը ներքև Շարլոն
ծնկաշոք էր կլարիսայի առաջ և ինչ որ
խնդրում էր, կլարիսան շարժում էր
զլուխն և պնդում էր:

— Անկարելի է, անկարելի է:

— Հերիք է, կլարիսա, ինձ միայն
երկու օրով է հարկաւոր:

— Ոչ, միայն այդ ոչ: Ուղղում ես ես
փոխ կ'առնեմ քեզ համար, իմ բարեկա-
մուհիից կը խնդրեմ:

— Ինձ փողը էգուց է հարկաւոր:

— Խնդրիր կառավարչից:

— Ոնց չէ, ես յիմարացայ, որ քեզ
հետ խօսք բացարի այդ մասին, ես
պէտք է ուղղակի վերև բարձրանայի և
առնէի փողերը:

— Աստուած իմ, Զինայիդան հօմիշտ
նրանց համարում է ու հաշվում է. հէնց
այժմ նա ցոյց էր տալիս իւր արկղիկը
Ջեկին:

— Շարլոն զողաց:

— Միթէ, հօծեց նա:

— Տիկինը լսեց: Աւելի զարհուրելին
այն էր, որ նոքա սիրում էին միմեանց.
նոցա հայեցողածքները արտայայտում
էին սէր, նոցա չրթունքները այդ տը-
խուր վէճի միջանկեալ ժամանակները
միանում էին:

— Ինչ պէտք է անեմ, ամեն րոպէ
կրկնում էր անպիտանը:

Խեղճ կինը լաց էր լինում նրա հետ
միասին, բայց անձնատուր չէր լինում:

Յանկարծ Շարլոն վերկայաւ:

— Ուրեմն դու չես կամենում, լաւ.
մնաս բարով կլարիսա, ես չեմ կարող
խայտառակութեանս տանել:

Նա սպասում էր յուսահատութեան
ձայներ. բայց ոչինչ չը լսուեցաւ. կլա-
րիսան մօտեցաւ նրան:

— Դու ուղում ես մեռնել, ես էլ
նոյնը ցանկանում եմ, ինձ ձանձրացրել
է ստուրթիւնով և յանցանքներով լի
կեանքը: Գնանք:

— Ի՞նչպէս, դու ուղում ես, բայց
այդ անմտութիւն է:

Մի ոստիւնով նա սանդուղի վերայ էր, բայց կլարիսան նախազգուշացրեց նրան և սանդուղի առաջին աստիճանի վերայ կանգնած բռնեց նրա ճանապարհը:

— Ո՞ւր ես գնում:

— Թող ինձ, թող, հարկաւոր է:

Նա կակաղում էր:

Տիկինը բռնեց նրան:

— Մի գործիր այդ աղաչում եմ քեզ:

Նա ոչինչ չէր լսում:

— Զգուշացիր եթէ դու շարժուես, ես կը բղաւեմ և կը կանչեմ:

— Կանչիր ամենքն էլ կ'իմանան որ քո քեռորդին քո սիրականն է, իսկ քո սիրականդ գող է:

Տիկինն զարհուրանքով յետ քաշուեցաւ և այժմ միայն տեսաւ այդ մարդուն իւր իսկական կերպարանքով: Նա զգաց խորին ատելութիւն դէպի նա և դէպի ինքը: Շարլոն շօշափելով իջաւ սանդուղն իսկ կլարիսան ընկաւ բազմոցի վերայ գլուխը ծածկելով բարձի տակ, որ ոչինչ չը լսէ ու չը տեսնէ:

Առաւօտեան ժամը վեցը կը վնէր:

Էնդրէի գինետներից մէկում վառած վառարանի առաջ նստած էին Զեկն և Շարլոն: Հպարտ նկարիչը ցոյց էր տալիս մեր զիւցազնին անսովոր, նրա անձ-նասիրութիւնը զրաւող ուշադրութիւն, շուտ շուտ տալիս էր նրան գինի, առաջ Զեկը հրաժարւում էր, բայց խօսակցութեան ժամանակ չը նկատելով խմում էր: Շարլոն բոպէ առ բոպէ հարցնում էր. «արդեօք ոչինչ նորութիւն չունիք»: Սկզբումը Զեկը կարծում էր որ Շարլոն ուզում է նրան մի յանձնարարութիւն տալ: «Ոչ եղբայր,—կատակ ևս անում, մտածում էր երիտասարդը— «ես Բիլի-դերը չեմ»: Բայց այս անախտոթ տպաւորութիւնը շուտով անցաւ, երկրորդ չիչիցը Զեկին սկսում էր թուիլ, որ Շարլոն ամենեին վատ մարդ չէ, միայն մոլորված է, որին հեշտ է խելքի բերել, պէտք է միայն տալ նրան ընկերական խորհուրդներ, կանգնեցնել ուղիղ ճանապարհի վերայ: Յափշտակված այս մըտածմունքներից Զեկը նայեց իւր ընկերոջ աչքերին և անսխալական ձայնով ա-սաց:

— Գիտէ՞ք, Շարլօ, լսեցէ՞ք ինձ, էլ մի խաղաք, և... բարեբաղդաբար նրան այդ միջոցին ընմիջեց պանդոկապետն, որ բղաւում էր.

— Հէյ, եղբարք, զանգահարում են:

— Գնանք, ասաց Զեկը:

Նա ուզում էր վճարել երրորդ և վերջին չիլի համար, հանեց զրպանից մի ոսկի և հպարտութեամբ գցեց սեղանի վերայ: Մօտենալով Շարլոյի ականջին, Զեկը հծծեց.

— Այս փողերը Զինայիդայի ընծայի համար են պահած:

Ընկերները թեւեւ ոչ ոք չէին գիտեր, որ Զեկը չըջում էր կարծես երազում, վայր ընկնելով իւրաքանչիւր քայլափոխում և բոլոր իւր ուժով յենվում էր նկարչի ձեռքի վերայ, վերջինը աննկատելի կերպով տանում էր նրան դէպի Լուարա գետի ափը:

Յանկարծ Զեկը կանգնեցաւ, ականջ դրեց...

— Շարլօ, զանգակի ձայնը չէ՞ զալիս:

— Անկարելի է:

Նոքա յետ հայեցին, դրօշակը ցած էր թողած: Զեկը զարհուրեցաւ. երբէք նրա հետ այսպիսի բան չէր պատահել, բայց նրա վիշտն էլ չէր կարող համեմատուիլ Շարլոյի յուսահատութեան հետ:

— Ես եմ, ես եմ մեղաւորը, — չէր դադարում կրկնելուց վերջինը և երեւում էր այնպէս վրդոված, որ Զեկը սկսեց նրան մխիթարել:

— Դէ, բաւական է, հօ չեմ մեռնիլ, շատ շատ կը նշանակեն, մեծ բան է: Ամենածանրը Լեբեկէնի յիշոցները կը լինեն, իսկ այժմ միևնոյն է, ես քեզ հետ կը գամ մինչև նաւահանգիստը:

Շողենալին սպասելով նաւահանգստում, խմեցին էլի մէկ մէկ բաժակ: Վերջապէս պէտք է բաժանուէին:

Շարլօն նստեցաւ շողենաւը, իսկ Զեկը մնաց գետեզրի վերայ: Նա չէր ուզում վերադառնալ Էնդրէն, աւելի ևս գործարանը. միևնոյն է, յիշոցները պիտի տայ Լեբեկէնը, ուրեմն աւելի լաւ է, որ ազատ անցկացնեմ այս մի օրը:

«Այ լաւ յիշեցի,—մտածեց նա, կ'երթամ Նանտ և կը գնեմ Զինայիդայի համար ընծայ: Նա զգում էր մի ուրախութիւն, նա զգում էր անյաղթելի պարտաւորութիւն բղաւելու, վաղվղելու և ձեռքերը չարժելու: Նանտ, ուրեմն զէպի Նանտ: Նա անցնում է Լուարա գետը, հասնում է մինչև Լա-Բասս-Նոգրէն, և այն տեղից երկաթողու կայարանը: Նրան թվում էր թէ նա այս առաւօտ անցնում է մէկ տեղից միւս տեղ, կարծես զլսթական դաւադանի չարժմունքով:

Գնացքը գնում է 12 ժամին, ո՛հ, ինչպէս ձանձրալի է: Արդեօք ո՛ւր գնայ, հանդէպը մի գինետուն կայ — ներս կը մտնամ: Գրեթէ բոլոր սեղանների առաջ նստած էին արհեստաւորներ, այնպիսիք, որոնց համար մուրճը ծանր է, իսկ բաժակը թեթև. Զեկին իսկոյն կանչեցին:

— Հէյ, Ացտեկ, եկ այստեղ:

Սենեակի խորքումը խնջոյք էին անում երկու մարդ, և իւր քամբաղդութիւնից հէնց դրանց մօտեցաւ Զեկը: Ա-

ռաջինը Գասկոն էր, գործարանում եղած արհեստաւորը, որ արտաքսուած էր հարբեցողութեան պատճառաւ, երկրորդը անմօրուք տասնեօթ տարեկան նաւաստի: Սկսեցին խմել, ծաղեցաւ խօսակցութիւն: Նաւաստին բոլորովին դրաւեց Զեկի սիրտը: Որպիսի ճարպիկութեամբ է հազնում նա իւր գեղեցիկ զգեստը, — մտածում էր Զեկը, և ոչնչից չէ վախում, ոչ Աստուածանից և ոչ էլ ոստիկաններից. կատակ է երկու անգամ պտտել է աչիւարհը: Քիչ ժամանակից յետոյ գինին բացեց նոցա լեզուները, Գասկոնը յիշոցներ էր տալիս կառավարչին, տեսուչներին, գործարանի բոլոր վարչութեանը, հաւատացնելով, որ բոլոր այդ պարոնները նստած են ձեռները ծալած, մինչդեռ արհեստաւորները տանջվում են աշխատանքի մէջ:

Գուրալիը զովութիւնը սթափեցրեց և ստիպեց Զեկին բանալ աչքերը: Ո՛ւր է նա, Լուարա գետի ափում, այո՛ — բայց ինչպէս է նա եկել այստեղ: Նրա մօտ կանգնած է նաւաստին, նրա նոր ծանօ-

թը քունքերին սառը ջուր է քսում:

— Լաւ էս զգում քեզ:

— Այո՛, քիչ լաւ էմ,— պատասխանում է Ջեկը դողալով ցրտիցն և ծանրացած գլխով:

— Ուրեմն ճանապարհ ընկնենք:

— Ի՞նչպէս, ո՞ւր:

— Դէպի Նանտ. միթէ դու չես յիշում, որ այս րոպէիս վարձեցիր մի նաւակ այս երիտասարդից: Ահա Գասկոնն էլ վերադառնում է պաշարներով:

— Պաշարներով:

— Ահա, եղբայր, ստացիր մանրը,— դեռ հեռուից բացականչեց դարբինը, որ բերում էր մի մեծ կողով զանազանաձև չիչերով,— ճանապարհ ընկնենք, եղբայր, յաջող հողմ է, մի ժամից Նանտումը կը լինենք և այնտեղ ինչպէս պէտք է խընջոյք կ'անենք:

Նստեցան գնացին, ճանապարհին Ջեկի ընկերները խմում, երգում և յիշոցներ էին տալիս միմեանց, նա այդ բոլորը կարծես երազումն էր լսում, միայն մի բան էր նրան վրդովում,— դա նաւա-

տիրոջ պշնող և արհամարհական հայեացքըն էր:

— Խմիր, եղբայր մի բաժակ,— աղաչում էր նրան Ջեկը:

Նաւատէրը լռիկ և բացասելով շարժեց գլուխը:

— Թող դրան, առաց նաւաստին,— նա մինչև անգամ տանել էլ չէր ուզում մեղ, բայց կնիկը համոզեց: Նա ասում էր որ դու շատ փող ունես: Այժմ՝ շատ մօտիկ է— ահա երևում է և Նանտը:

Նաւատէրը փաթաթեց առագաստն և ձեռքը առաւ թիակներն, որ յաջողութեամբ անցնի նաւահանգիստը լցնող նաւերի միջով:

Բոլոր առարկաները պտտվում են Ջեկի աչքերում. Նա արդէն նաւակի մէջ չէ, բայց ինչպէս դուրս եկաւ նա այն տեղից: Երազները միշտ մութն են, Ջեկը այժմ ապրում է երազումը, նա վայր է ընկնում բամբակի կապոցների վերայ, դիպչում է արկղների քնջերին, նա շքնչում է ձիւթի, սուրճի անուշահոտութեանց հոտեր, կորցնում է իւր ընկեր-

ներին, կրկին գտնում է, կրկին կորցնում է, և ամենազարմանալին այն է, որ նա երկու է դառել, նրա մէջ երկու Ջեկ է. մինը, կարծես խելագարված, բղաւում է, ձեռքերը շարժում է: խօսում է և անում է հազար տեսակ յիմարութիւններ, միւսը — խելօք էակ է, բայց անզօր, որ դատապարտուած է տեսնելու իւր երկուորեակի տգեղութիւնը: Առաջինը դործում է, երկրորդը — նայում է և բոլորը յիշում է: Բայց խելօք Ջեկը երբեմն ննջում է, դրա պատճառաւ էլ այս անսովոր երազի մէջ կան շատ դատարկ տեղեր, որոնք կարելի չէ լրացնել յիշողութեան ոչ մի ջանքով: Ջեկը տեսնում է իւր երկուորեակին զբօսնելիս Նանտի փողոցներում, երկայն ծըխաքարչը բերնումը, նաւաստիի նոր դօտիով, որ կապած է նրա շապկի վերայ, տեսնում է նրան մի մեծ հարուստ զարդարուած պանդոկում, որտեղից նըրանց երեքին էլ արտաքսում են, տեսնում է նրան գետեզրում, նա նստած է նեղ, սահուն սանդուղի վերայ և լալիս

է, տեսնում է նրան կրկին պանդոկի մէջ, ահագին դաւաթ մսաջուր առաջը դրած երկու ընկերների հետ, և մսաջրի մէջ աւելացրած է բաւական քանակութեամբ օղի, տեսնում է վերջապէս կեղտոտ նկուղի մէջ, որտեղ պարում են զգուելի սև կանայք, հագած կարմիր չորեր: Ջեկն էլ պարում է սեղանի վերայ, և յանկարծ վայր է ընկնում այնտեղից, աղաղակների, կոտրտած ամանների զարհուրելի ձայնի միջով, Ջեկը պառկած է աթոռի վերայ, անձանօթ հրապարակում, որի մէջ տեղ կանգնած է մի եկեղեցի, նա ամենեին մենակ է, նաւաստին և Գասկոնը անհետացել են, աղաղակներից, երգերից, արտասուքից, յուսահատութիւնից և ուրախութիւնից յետոյ Ջեկը զգում է երկրի, դողդոջիւն սրտով նա լսում է ծանօթ աղաղակը.

— Գլխարկներ, գլխարկներ, գլխարկներ.

Ջեկը բարձրանում է և բղաւում.

— Բի-բի-բիլիզէր, Աշխատում է նրան

հասկացնել, որ ինքը քէֆ է արել. նա պինդ թեկն է ընկնում վաճառականի ուսին: — Ո՞ւր են նոքա, ուր են գնում: Ահա լուսաւորված գետեղրն, կայարանը, — ինչ լաւ կը լինի պառկել նստարանի վերայ:

Բայց այս ինչ է, ինչ է պատահել, նրան զարթեցնում են, շարժում են, նրան կապում են թոկերով, նա մինչև անգամ չէ ընդդիմանում, մինչև այն աստիճան քունը նրան յաղթել է: Նա քնած է երկաթուղու կառքումը, քնած է մի ինչոր նաւակումը, որտեղ շատ ցուրտ է, նրան կրկին զարթեցնում են, կրկին շարժում են, և վերջապէս նա հանգիստ քնում է յարդի վերայ, ծանր դրան կտեղծ, ամրացրած մեծ կողպէքով:

Առաւօտ Զեկը զարթեցաւ զարհուրեցիկ աղմուկից: Տխուր սթափումն խնջոյքից յետոյ: Ծարաւ, դող և ամօթ: Զեկը զգաց բոլոր այդ զգացմունքները, աչքերը բանալուց առաջ, նա կարծես երազումն էլ զգում էր խղճմտանքի խայթերը: Բայց ուր է նա:

Կրկին նոյն աղմուկն է. վահ, ժամացոյցըն է խփում, ծանօթ ձայն է. հաշնդրէումն է, բայց ոչ Ռուդիկի տանը, այլ ժամացոյցի աշտարակումն է, բանտումը, ուր փակում են յանցաւորներին: Բայց ինչո՞ւ է նա այստեղ, նա ինչ է արել, միայն այստեղ նրա երկրորդ եսը սթափեցաւ յիշեցրեց բոլորը, ինչ որ նա արել էր անցեալ օրը: Սթափած գիտակցութեանը օգնութիւն հասան և իրական ապացոյցները. նաւաստիի գըլխարկը առանց ժապաւէնի, կապոյտ գօտին, ծխաքարչի կտորները, խրաքանչիւր նոր ապացոյցից Զեկն աւելի և աւելի էր կարմրում, բայց նա մէնակ չէ, այնտեղ, անկիւնում, ով որ շարժվում է: Միթէ. անկարելի է, բայց այն նա է, այդ Բիւրեղէրն է:

— Բիւրեղէր, այդ դձեք էք:

— Այո՛, ես եմ, — խուլ ձայնով պատասխանեց վաճառականը:

— Բայց, ի սէր Աստուծոյ, ինչ եմք արել, որ մեզ փակել են, կարծես իբրև երկու աւազակների:

— Ինչ որ միւսները արել են, ես չեմ
խմանում, իսկ ես ամենին մեղաւոր
չեմ, ահա ինչ արին իմ ասորանքս:

Խեղճը յուսահատութեամբ նայում էր
իւր ճիւղած զլիարկներին: Վիշտն, որ
պատճառում էր նրան այս տեսարանը,
այնպէս մեծ էր, որ նա մոռանում էր
չղթաներն և թռկերն, որոնցով կապած
էր և մինչև անդամ իւր զժրաղղ ոտ-
նաւանները:

— Դոնէ ասացէք ամենքին, աղաչում
եմ ձեզ, որ ես ձեզ չեմ օգնել:

— Բայց ինձ ինչո՞ւմն են մեղադրում:

— Ասում են որ... ղէ՛հ ինչու համար
էք ինձ ստիպում ասելու այն, ինչոր
դուք գուշակում էք, թէ խօսում են:

— Նրդվում եմ ձեզ, չը գիտեմ:

— Ասում են, որ իբրեւ թէ դուք գո-
ղացել էք Ձինայիդայի փողերը:

— Աստուած իմ, ինչ եղեռնադործու-
թիւն է, բայց ի հարկէ դուք չէք հա-
ւատում, այնպէս չէ:

Բեկիղէրը լռեց: Լնդրէումը ամենքը
համոզված էին Ձեկի յանցաւորութեան

ժառին, միայն մի բան չէին կարող հա-
կանալ թէ ինչ է արել նա մնացած փո-
ղերը, անկարելի է որ նա ծախսել էր
վեց հազար ֆրանկ մէկ օրում: Լուսա-
ղէմին Ջեկին և Բեկիղէրին պահանջե-
ցին կառավարչի մօտ. ընդունարանումը
հաւաքված էին զանազան դինեաների
տէրերն, որոնց մէջ Ջեկը անցկացրել
էր անցեալ օրը, նաւատէրը, որ տարաւ
նոցա Նանտ, նոյնպէս այնտեղ էր: Այս
վկաների տեսարանը ծանր երազի տը:
պաւորութիւն գործեց նրա վերայ: Կա-
ռավարիչը շատ համոզում էր Ջեկին,
որ խօստովանի իւր յանցանքը, հաւա-
տացնում էր նրան, որ առ այժմ բոլորը
գաղտնիք կը մնայ նրա և Ռուդիկի մէջ,
որովհետեւ նրա, կառավարչի, պահան-
ջով քննութիւն կը լինի միայն երեք օ-
րից յետոյ: Ռուդիկը, որ ներկայ էր այս
խօսակցութեան ժամանակ, սիրով աղա-
չում էր նրան յետ տալ մնացած փողե-
րը, բայց երիտասարդը բոլոր նոցա հա-
մոզմունքներին պատասխանեց միայն.

— Ես ոչինչ ոչ ոքից չեմ գողացել:

— Բայց հրտեղից վերառաք դուք
փողերը խնջոյքի համար:

«Մայրս ուղարկել է», հէնց ուզում էր
ասել, երբ կանգնեցաւ և հծծեց:

— Դա իմ խնայողութեանս պտու-
ղն է:

Կառավարիչը վերջապէս բարկացաւ,
հրամայեց Ջեկին բաժանել Բելիդէրից,
որովհետեւ հաւատացած էր, ինչպէս և
Ռուդիկը, որ վաճառականը իւր վատ
խորհուրդներով փչացրել է նրան:

Անվերջ թվեցաւ այս օրը խեղճ բան-
դարկեալի համար: Ի՞նչպէս ապացուցա-
նէր իւր անմեղութիւնը, — ցոյց տայ մօր
նամակը, վայ թէ դ'Արժանտոնը իմա-
նայ: Երիտասարդ մարդկանց խելքումը,
ինչպէս յայտնի է, չնչին պատճառները
յաճախ աւելի կշիռ են ունենում քան
նշանաւորները. նա երևակայում էր Օլ-
նէտումը սարսափելի տեսարան, թէ
մայրը լալիս է. ոչ, նա չի խոստովանիլ
զաղանկը: Երեկոյեան նրա մօտ եկաւ
Ջինայիդան. խեղճը երեկվանից չատ և
դառը լալիս էր. նա չորած աղաչում էր

բարի և սիրելի Ջեկին, դարձնել նրա
մնացած փողերը, նա չէր կարող բոլորը
ծախսել առանց օժիտի նրան. Մածէնը
չի առնիլ, իսկ ինքը նրան շատ է սիրում:
Ջեկը լալիս էր նրա հետ միասին, բայց
կրկնում էր միևնոյնը:

— Երդվում եմ, Ջինայիդա, որ ձեր
փողերը ես չունիմ:

Մնացել էր միայն վերջին միջոց, կա-
ռավարիչը գրեց Շարլոտային նամակ,
որի մէջ յայտնում էր, որ նրա որդին
գողացել է վեց հազար ֆրանկ և երեք
օրից յետոյ եթէ նա չի ուղարկիլ այս
գումարը, յանցաւորը արդարապատու-
թեան կը յանձնվի:

— Ա՛հ, էնդրէից նամակ կայ, — բա-
ցականչեց դ'Արժանտոնը և մի կողմը
դնելով այն, վերառաւ լրագիրները:

Նա միշտ այս ձևով էր վարվում, նա
զիտէր որ Շարլոտան միայն իւր որդու
վերայ է մտածում և չէր ներում նրան
այդ բանը:

Վերջապէս չարարաղդ նամակը բաց-
վեցաւ, բանաստեղծը կարդում է և
դեղնած տալիս է Շարլոտային:

— Ինչպիսի հարուած էր, մանաւանդ որ խղճմտանքի ձայնը, որ չէր կարող խլացնել աշխարհի ոչ մի իմաստակութիւն, ասում էր, դու ես միայն մեղաւորը, ինչո՞ւ համար դու նրան հեռացրի՞ր։ Նրան պէտք է ազատել, բայց հրտեղից վերառնէր փող, նա ինքը — ոչ ինչ չունի, դ'Արժանտոնից նա չի խընդրիլ, նա մանաւանդ որ դ'Արժանտոնը ատում է Զեկին և ժլատ է։ Լաւ յիշեցի, կը դառնամ դէպի Bon-Ami-ն։ Երկիւղածութեամբ, կակաղելով իւրաքանչիւր խօսքի վերայ, նա խօսեց այդ մասին։ Նրա մեծ զարմանքի համար, դ'Արժանտոնը սիրով ընդունեց այդ դիտաւորութիւնը, յայտնեց իւր համաձայնութիւնն և մինչև անգամ առաջարկեց ուղեկից լինել նրան մինչև Տուր, ուր նա պատրաստվում էր գնալ խօսելու Bon-Ami-ի հետ և որ բնակվում էր այդ քաղաքի չրջակայքում։

— Այնտեղից ուղիղ կ'երթանք և Էնդրէն, փողերը կը տանենք։

— Էնդրէն էլ կ'ուղեկցիմ, ասաց դ'Արժանտոնը։

— Ո՛հ, ինչպէս դու բարի ես, ինչպէս բարի ես, կրկնում էր Շարլոտան համբուրելով նրա ձեռքերը, — բայց նա վախենում էր թողնել նրան Տուր, երկիւղ կրելով որ չը մնայ այնտեղ։ Բացի դրանից նա ուզում էր քիչ ճանապարհորդել։ Նոքա գնացին նոյն գիշերը երեկոյեան դնացքով, իսկ միւս օրը առաւօտեան հասան Տուր, իջնանցին հիւրանոցում, վերառան կառք և դնացին Bon-Ami-ի մօտ։ Նկատելով ծառերի միջից վերածնութեան ոճով չինուած ամրոցը, դ'Արժանտոնը զգաց զօրեղ վրդովմունք։ Վայ թէ նա այնտեղ մնայ, մտածում էր նա։ — Միթէ նա ներս կը մտնի, անհանգստութեամբ մտածում էր Շարլոտան։ Բանաստեղծը վճռեց նորա կասկածները, հրամայելով կառապանին կանգնել ամրոցի ծառուղու առջև։ Նա դնաց պարտէզ դըօսնելու, իսկ տիկինը մէնակ մտաւ տուն։ Սարսափեւի բուպէներ անցկացրեց դ'Արժանտոնը, նայելով վանդակի միջից Bon-Ami-ի թաղաւորական բնակարանին և սպասե-

լով Շարլոտայի վերադարձին: — Չո՛ւ, ա-
նիւնների ձայն է նա է: Այո՛, նա է — փայ-
լուն, բաղդաւոր: — Նիստ շուտով, աղա-
ղակով էր խեղճը իւր բանաստեղծին:
Իմ՝ բարեկամ, բացականչեց նա, հէնց
որ կառքը շարժվեցաւ, յաջողութիւնը
գերազանցեց իմ սպասածիցս, ինձ
տուին 10,000 Փրանկ, խնդրելով վճա-
րել պարտքն, իսկ մնացած փողերը բա-
նացնել օգուտով Զեկի համար, որի հա-
մար միշտ պատրաստուում էին այդ ըն-
ծան անելու:

Նոյն գիշերը նորա ճանապարհ ընկան
դէպի Էնդրէ, բայց Շարլոտան մնաց
Լա-Բաս-Էնդրումը և դ'Արժանտոնը գը-
նաց մէնակ տանելով փողերը: Մի կին-
արմատ ցոյց տուեց Ռուդիկի տան ճա-
նապարհը:

Բայց ինչքան էր նրա զարմանքն, երբ
որ տան պատուհանից նա լսեց երգերի
ձայներ և հէնց որ նա անցաւ չէմբը,
գտնուեցաւ պարողների մէջ: Առաջինն,
որին նա նկատեց, Զեկն էր, որ պարում
էր բրիտանական ժողովրդական պարը:

— Այս ինչ է պատահել:

Ահա ինչ. նշանաւոր նամակն ուղար-
կելու միւս օրը, կառավարչի գրասեն-
եակը ներս մտաւ Լլարիսան և պատմեց
նրան բոլոր ճամարտութիւնը: Նա տանջ-
վել էր այն մտքից, որ պէտք է մեղա-
դրեն անմեղին և եկաւ խոստովանելու
ճամարտութիւնը. մինչև անգամ այս
սարսափելի բոպէին խղճաց անպիտա-
նին, որին այնքան երկար ժամանակ սի-
րում էր, և յայտնեց որ նա չի վերա-
ռել փողերը, այլ ինքը նրա համար:
Ուղարկեցին Շարլոյի ետեից, սա եկաւ
և մտաւ գրասենեակը, կարծես ոչինչ
չէր պատահել, բայց երբ տեսաւ հար-
սին շատ վեղովեցաւ. բայց իսկոյն հաս-
կացաւ որ նա պահել է իւր խօսքը, ո-
րովհետև դժբաղդը մէկ օր առաջ գրել
էր նրան, խնդրելով դարձնել փողերը,
սպառնալով հակառակ դէպքում բոլո-
րը հաղորդել կառավարչին:

Անպիտանը չոքեցաւ սեղանի առաջ:

— Ներեցէք, ասում էր նա:

— Ազատեցէք մեզ այս տեսարանից,

— խստութեամբ թսաց կառավարիչը —

Ես բոլորը իմանում եմ, այս կինարմատը յափշտակել է իւր մարդուն և աղջկան ձեզ համար: Դուք խոստացել էք բերել փողերը, ո՞ւր են նոյքա:

Շարուն գցեց Կլարիսայի վերայ չընորհակալութեան հայեացք, իսկ սա մինչև անգամ չը նայեց նրա վերայ, նա շատ լաւ տնտղել էր արդէն նրան, այն նշանաւոր գիշերը:

— Ո՞ւր են փողերը — կրկնեց կառավարիչը:

— Այստեղ են:

— Բոլորն էլ,

— Պակաս է 800 ֆրանկ:

— Ես կը լրացնեմ, ես չեմ ուզում, որ Ջինայիդան մնասուի, այժմ նստեցէք գրեցէք:

Եւ նա թեւադրեց նկարչին գրել նամակ, որի մէջ սա յայտնում էր իւր յանցանքն և խոստումն այլ ևս երբէք չ'երևիլ մօրեղբոր աչքին: Այս վկայութուղթը պէտք է բացատրէր Ռուդիկին, թէ ինչպէս էին փողերն անհետացել և ինչպէս գտնուեցան: Ծերունին յուսա-

հատված էր իւր Էքսեռորդու՝ յանցանքից, Ջինայիդան թռչկոտում էր ուրախութիւնից, Ջեկը յաղթական էր, բոլոր արհեստանոցների դռներին վերայ կը պած էին յայտարարութիւններ, որոնք ծանուցանում էին նրա անմեղութիւնը, նրան ամեն տեսակ պատուում էին, գուրգուրում էին, Ռուդիկի բոլոր ընտանիքը նրանից ներողութիւն խնդրեց: Միայն մի բան էր պակաս նրա կատարեալ բաղդաւորութեան համար — Բեկի գէրը: Հէնց որ ազատեցին սրան, խեղճը շուտով փախել էր: Ջեկը նեղանում էր որ չը կարողացաւ արդարանալ բարեկամի առաջ: Այս բոլորը դ'Արժանտոնը իմացաւ Ռուդիկից, որը տօնում էր բանաստեղծի էնդրէ գալու օրը իւր աղջկայ և Մանփէնի հարսանիքն և ըստ սովորութեան կարգաց Ջեկի գլխին երկար և բարակ ճառ ու խրատ:

Բոլոր այս ճառի մէջ Ջեկին գարմացրեց միայն մի բան, դ'Արժանտոնը բերել էր փողերը, երիտասարդն երևակայեց, որ բանաստեղծը զոհել է իւր սեպ-

հականութիւնը ցանկանալով նրան ա-
ղատել և նրա սրտի մէջ առաջին ան-
գամ զարթեցաւ բարեկամական զգաց-
մունք դէպի իւր մօր բարեկամը: Նոքա
դուրս եկան տանից և թեանցուկ անցան
բոլոր էնգրէի փողոցները: Զեկը հարց
ու փորձ էր անում մօր մասին: Ասել
նրան թէ ոչ, որ մայրն այստեղ է—մը-
տածում էր զ'Արթանտոնը: Իւր քամ-
բաղդութիւնից Զեկը խօսեցաւ անկեղծ-
օրէն. որ նա չունի ամենեւին մեքենա-
գործութեան կոչումն, նրան աշխա-
տանքը չէ վախեցնում, բայց չէ կարելի
արդեօք գտնել մի ուրիշ գործ, ուր
ձեռքերը քիչ աշխատէին, իսկ զլուխն
աւելի: Ի հարկէ առիթը գտնուած էր,
—մօր հետ հանդիպումն միայն կը քըն-
քուչացնէ նրան, կը զրկէ վերջին ու-
ժից: Աւելի խոհեմ կը լիսի, եթէ նոքա
ամենեւին չը տեսնուին. կեանքը վէպ չէ,
սատանան տանի սրան, կրկնեց զ'Արթան-
տոն մտքումը իւր այս սիրեկան նախադա-
տութիւնը...

Զինայիդայի հարսանիքից յետոյ ան-

ցել էր երկու տարի: Բայց ինչ զործեց
Զեկը այս երկու տարվայ ընթացքումը.
չատ աշխատեց, սկսեց երկաթ կռել,
նրա ձեռքերը ամենեւին կոշտացան, իսկ
միտքը կարծես քնեցաւ: Իւրաքանչիւր
գիշեր տանջուած մտնում է նա անկողին,
ամուր քնում էր, իսկ առաւօտը սկը-
սում նոյն աննպատակ տխուր կեանքը:
Ռուդիկի տունը կարծես ամայացաւ Զի-
նայիդայի գնալուց յետոյ, կլարիսան ոչ
մի տեղ չէր գնում, միշտ նստած էր
վարագուրով ծածկած պատուհանի ա-
ռաջ անտարբեր և տխուր: Այսպիսի
դրութիւնը, ինչպէս յայտնի է, բարի հե-
տեանք չէ ունենում և խեղճ կլարիսան
վերջացրեց իւր կեանքն անձնասպանու-
թիւնով, ընկնելով Ղուարա գետը: Զեկն
խմացաւ այդ դէպքի մասին մի քանի
ժամանակից յետոյ, բայց մենք յիշում
ենք այստեղ նրա մասին այն պատճա-
ռաւ, որ մեր պատմութեան մէջ էլ չը
վերադառնաք դէպի Ռուդիկի ընտանի-
քը:

Այս ժամանակամիջոցում ոչ մի — ա-

ռանձին դէպք չէր պատահել, անցեալ ձմեռը շատ ծանր էր, Ղուարան հեղեղեց գրեթէ ամբողջ կղզին, որի մասը չորս ամիս ջրի տակն էր: Պէտք է խոնաութեան մէջ աշխատէին, չնչէին ճանձային արտաշնութիւնը: Զեկը շատ հաղում էր: Ժամանակ առ ժամանակ ստացվում էին նամակներ Էտիօպից, այնտեղ ամենինչ էլ առաջվայ պէս էր, միայն Մորոնվալները հաշտուել էին դ'Արժանտոնի հետ և իւրաքանչիւր կիւրակէ ճաշում էին Ունէտումը:

Մորոնվալը, Մադուն, գիմնպիօնը, այդ բոլորը շատ և շատ հեռու էին նորանից: Ի՞նչ հասարակաց կայ այն ժամանակվայ չեկ և վարդագոյն երեխայի և այժմեան արեակէղ, լղար արհեստաւորի մէջ, կարմիր բիծերով այտերի վերայ, կուզացած մէջքով, բարձր ուսերով չապիկի տակից: Նա առաջվայ պէս վատ արհեստաւոր է տանեօթ տարեկան, ուսումից զրկված, վաստակում է օրական ոչ աւելի քան երեք ֆրանկ:

— Գիտես, ի՞նչ կայ, սիրելիս—նկա-

տեց նրան մէկ անգամ Ռուդիկը — գուայստեղ քու տեղումդ չես և ոչինչի էլ չես հասնիլ. չես ուղումբաղդ փորձել—դառնալ հնոց վառող: Ահա Բլանչէն, «Յիդնայի» աւագ մեքենագործը պտրում է մարդիկ, ուղումես ես կը գրեմ նրան. գոնէ օրը վեց ֆրանկ կը վաստակես, գործը ի հարկէ թեթև չէ, բայց տանում են հօ մարդիկ այդ կեանքը—ես քեզ համար կենդանի օրինակ եմ, երկու տարի հնոց վառող էի:

— Ի՞նչ արած, ես համաձայն եմ, ասաց Զեկը:

III

ձիւղ չորս տարիից Զեկի էնդրէ գալուց յետոյ, նա թողեց գործարանը: Եղանակը դեռ ևս հիանալի էր, չողենաւի տախտակամածից, որի վերայ նստած Ռուդիկի հետ գնում էր Զեկը, հիանալի տեսարան էր: Գետը լայնանում էր իւրաքանչիւր ակնի շարժումներից, օդը զովանում էր, ծառերը փոքրանում էին, ամիսները հարթանում էին: Հեռու տեղ-տեղ փայլում էին լճերը, ջրի վերայ թռչուն էին հազարաւոր ճայ և ձկնկուլ թռչուններ, արձակելով իրանց առանձին մանկանման ձայները: Մէկ ոստիւնով չողենաւը մտաւ ծովը, և տատանվեց նրա ալիքների վերայ—այդ նոր զգացմունք էր խեղճ Զեկի համար. նա առաջին անգամն էր տեսնում ծով: Այս աղով լցուած թարմ օդը հարբեցրեց նրա սիրտը, ազդեց նրան ցանկութիւն ճանապարհորդելու: Նաւահանգս-

տի վերայ նոյն հաղորդեցին որ «Յիդնը» խարխալ բարձրացնելու է երկու կամ երեք ժամից: Շուտով, չուտով, կրկնում էր Ռուդիկը,— մենք ուշացանք: Նստեցան նաւակ և դնացին ծովածոցով ու վերջապէս նկատեցին «Յիդնը», որ կանգնած էր գոլորշի արձակելով ու սպսմում էր մակընթացութեան: Փոքրիկ, լղար մարդ, առանց բաճկոնի և ոսկեղոյն ժապաւէնով գլխարկի վերայ, ըզբօսնում էր տախտակամածի վերայ և հէնց որ նկատեց նաւակը մեր ճանապարհորդներով, բացականչեց ձեռքերը շարժելով:

— Շուտով հասէք, սատանայք: Ես կարծում էի, որ դուք խաբեցիք ինձ:

— Ես, ծերունիս եմ մեղաւորը,— պատասխանեց Ռուդիկը,— ուզում էի ուղեկից չինել սրան, իսկ երէկ ժամանակ չունէի:

— Դէ լաւ չուտով գնանք:

Բլաշէն—որովհետեւ դա նա էր—առաջինը սկսեց իջնել վանդակապատ սանդուղը, յետոյ երկրորդ, երրորդ և չոր-

որորդը: Ռուդիկը Զեկի հետ նրան հետևում էին: Մեր գիւցաղներ, որ երբէք չէր տեսած յայնկոյս ատլանտեան շողենաւ, ապշած էր նրա մեծութիւնով: Նոքա իջնում էին կարծես անդունդէ, ուր լոյսից աչքը ոչինչ չէր տեսնում: Նոցա չորջը գիշեր էր: Վերջին սանդուղն, որ նոքա իջան, տարաւ նրանց մեքենայի բաժինը, ծանր և խոնաւ տաքութիւնը, որով լի էր այդ բաժինը և ձիւթերի զօրեղ հոտը անում էին նրան ամենին անտանելի մարդկանց թոքերի համար: Մեքենադորձներն, օգնականներն և աշակերտները վազվզում էին, ուշադրութեամբ տնտղելով մեքենան, աշխատելով համողվիլ, որ մեքենայի իւրաքանչիւր մասերը զործում են կանոնաւորապէս:

Զեկը հետաքրքրութեամբ նայում էր նրա վերայ և յայտնի չէր թէ ինչու համար նա թվում էր իրան ամենից զարհուրելին բոլոր տեսած մեքենաներից, — կարելի է այն պատճառաւ, որ նա պէտք

է ծառայէր նրան և կերակրէր: Զանազան տեղերումը մեծ փայլուն լապտերների լուսով երևում էին ջերմաչափներ, թանձրաչափներ, կողմնացոյցներ: Մեքենայի բաժնի խորքումը երևում էր նեղ մուկը սենեակ:

«Այստեղ ածուխի սենեակ է» — ասաց Բլանչէն, ցոյց տալով սենեակի մէջ երևող ձեղքը: Նրա շարքումը երևում էր միւսը, որտեղ լապտերի լուսով կարելի էր նկատել մի քանի անկողիններ, կախարած շորեր:

— Այս հնոց վառողների ննջարանն է:

Զեկը դողաց. համեմատելով այս ձեղքի հետ — Մորոնվալի ննջարանն և Ռուդիկի վերնատունը երևեցան խեղճին պալատներ:

— Իսկ այստեղ հնոց վառողների բաժինն է, — ասեւայրեց Բլանչէն, բացանելով փոքրիկ դուռը:

Նրեակայեցէք ձեզ երկայն սենեակ տաքացած պատերով, ստորերկրեայ սենեակներ լուսաւորված տասը վառարանների կարմրագոյն բոցով: Ախաւերկ մարդիկ

աւելացնում էին կրակը, դրելով նրա մէջ ածուխ, պտտում էին վառարանների շուրջն, որոնք այրում էին արհեստաւորների երեսները, և որոնցից քըրտինքը թափվում էր ջրի նման: Մեքենայի բաժնումը մարդ խեղդվում է, այրվում է:

— Ահա՛ ձեզ նորեկ, — ասաց Բլանչէն աւագ հնոց վառողին ներկայացնելով Ջեկին:

— Ի՛նչ ժամանակին հասար, — նշկատեց նա գրեթէ առանց շուռ գալու, — ինձ հարկաւոր են մարդիկ:

Ջեկն ամուր սեղմելով Ռուդիկի ձեռքը հրաժարուեց նրանից և խոյն ըսկսեց կատարել իւր գործը:

Պէտք էր բոլոր մոխրամաններից աղբը ժողովել կողովների մէջ, դուրս տանել տախտակամածն և թափել ծովը... Թեթև գործ չէր. կողովները ծանր էին սանդուղներն ուղղահայեաց, պարզ օդից դժոխային օդի մէջ տեղափոխվելն անտանելի էր:

Նրբորդ անգամ բարձրանալիւ Ջեկի ոտ-

քերը ծալվեցան: Նրա ընկեր հնոց վառողներից մինը, տեսնելով նրա՝ դրուժիւնն և խղճալով նրան, տուեց մի բաժակ օղի:

— Շնորհակալ եմ, ես չեմ խմում, պատասխանեց Ջեկը:

Նա ծիծաղեց: — Կը խմես, եղբայր:

— Երբէք — և Ջեկը բարձրացրեց ուսի վերայ ծանր կողովն և գնաց վերև: Տախտակամածի վերայ նա կանգնեցաւ որ շուռն քաշի, և ակամայ նայեց մի տիկնոջ վերայ երեսան ձեռքին, որ յիջեցնում էին նրան հեռու և սիրելի անցեալը: Նա մոռացաւ ինչ է և ուր է նա և չէր կարողանում հեռացնել աչքը կինարմատից, որ յիջեցնում էր Իդա - գէ - Բարանսին և փոքր Ջեկին. զօրեղ ձեռքի հարուածը մէջքին սթափեցրեց Ջեկին մտածմունքից:

— Սատանի ձագ գնա՛ քո տեղը — բղաւեց Բլանչէն նրա ականջում: Ջեկը լռիկ իջաւ սանդուղը, այդ միջոցին շոգենաւը խարխիսը բարձրացրեց:

Հնոց վառողների բաժինը դժուար էր:

— Կանգնիր այստեղ, — բղաւեց Ջե-

կին գլխաւոր հնոց վառողը, ցոյց տալով վառարաններից մինը. խեղճը հնազանդվեց, պէտք էր անդադար կերակրել բոցը, խառնել կրակը, թափել աղբը: Ծովին անծանօթ Զեկը ամեն րոպէ այս կողմից այն կողմն էր ընկնում, նա բռնում էր ինչ որ հասնէր ձեռքին և իսկոյն թողնում էր ձեռքիցը տաքացած առարկաները: Նա աշխատեց իւր բոլոր ուժով. բայց մի ժամից յետոյ զգաց, որ խլացել է, կուրացել է և խեղդվում է արեան հոսանքից դէպի գլուխը, այն ժամանակ նա արաւ այն ինչոր միւսներն անումէին. վաղեց դէպի երկայն քաթանէ թեղանիքը որ պարզ օդի հոսարար էր: Ո՛ւֆ ինչ լաւ է, բայց իսկոյն զգաց, իբրև թէ նրա ուսերի վերայ ծածկեցին սառուցէ վերարկու:

Այս մահաբեր թափանցիկ հողմը խեղդեց նրա շնչառութիւնը:

— Օդի — աղաղակեց նա:

— Ահա ընկեր, ես իմանում էի, որ այս կը պատահի:

Կրակ դրսից, կրակ ներսից, այսպիսի է նրա այժմեան կեանքը: Երեք տարի չարունակեց՝ այս դժոխային կեանքը: Այս երեք տարվայ ընթացքումը «Յիդ. նան» չատ անգամ խարխիս էր գցել բերրի երկիրների ատերում, որտեղ երկինքը կապոյտ է, որտեղ բուսնում են արմաւենիք, երեսում էին կանաչի միջից սպիտակ տնակներ ծածկուած բամբուկով: Նա ոչինչ չէր տեսնում, ոչնչով չէր զուարճանում, նա հանգստութեան ժամանակն էլ ինչպէս և ճանապարհորդութեան միջոցին դործում էր, քնում էր և խմում: Միայն մի պայծառ գիծ կար նրա սրտի մէջ. դա էր մօր վերայ մտածմունքը: Շարլոտան յաճախ գրում էր նրան նամակներ սկզբումը խորովից, յետոյ ֆարիղից, ուր նորա տեղափոխվել էին և ուր դ՛Արժանտօնը հրատարակում էր լրագիր:

Բայց «Յիդնայի» վերջը հասել էր, Մէկ անգամ գիշերը շողենաւի վերայ սկսվեցաւ սարսափելի աղմուկ: Ընկերները զարթեցրին Զեկին. վեր է թռա-

չում և վաղում է. մերենայի բաժնում ջուր է մտել, կողմնացոյցը կոտրած է, լապտերները հանդած, բոլորեքեան վաղ-վղում բոթում էին միմեանց:

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել:

— Ամերիկացին բաղխեցաւ մեզ, «Յիդնը» ջուր է առնում, աղատուեցէք եղբայրներ:

Բայց վերեր սանդուղի վերայ երևում է Բլանշէն, ատրճառակը ձեռքին:

— Առաջինին, ով որ դուրս կ'երթայ, ես գլուխը կը ջախջախեմ: Ափը մօտիկ է, կարելի է էլի հասնենք նրան: Յետ գնացէք հնոց վառողների բաժինը:

Սկսվում է վերջին պատերազմը, վառարանները տաքանում են ցվերջին հրնար, ջուրն աւելանում և աւելանում է, ի հարկէ ջրահաններն էլ չեն գործում, ջուրը կարելի չէ հեռացնել. կրակը հանգաւ, ջուրը հասել է մինչև ուսերը և այժմ Բլանշէն իւր որոտճայնով բզաւում է.

— Աղատուեցէք, երեխայք:

Լրագիրները հաղորդեցին դժբաղդ

Ջեկի մօրը «Յիդնայի» խորտակումն Գալարի ատերի մօտ: Դ'Արժանտօնի առաջ նա չէր կարող յուսահատուիլ, նա վախում էր նրան վրդովել, խանգարել նրան իւր նոր գործի՝ լրագիր հրատարակելու մէջ, որի վերայ ստիպել էր նա նայել իբրև սուրբ գործի վերայ: Այս պատճառաւ էլ նա ուրախ էր մընալու միայնակ, որ աղատ մտածէ իւր խեղճ Ջեկի վերայ:

Տխուր և սպանուած, Շարլոտան ամեն օր ականջ էր դնում հողմի սուլելուն, որ նորան համար էլ նոյն կրգն էր երգում, ինչպէս և ամեն նաւաստիների կանանց և մայրերի համար: Բայց ինչ ձայն է լսվում սանդուղի վերայ, կարծես ով որ թոյլ ձայնով կանչում է — մայրիկ:

Իրաւի կանչում է, նա շտապով բաց է անում դուռը, մի ինչոր բարձրահասակ էակ ծանրութեամբ բարձրանում է, պատերը բռնելով:

— Ո՞վ է — հարցնում է նա, դողալով երկիւղից:

— Էս եմ, մայրիկ. ես ք'ը շատ լաւ եմ տեսնում:

Նա շտապով իջնում է մի քանի աստիճան, — այն, դա նա է, նրա Զեկը բարձրահասակ, հիւանդոտ արհեստաւոր, երկու գաւազանների վերայ յենված: Ահա նա ինչ արաւ իւր որդու հետ: Ոչ մի խօսք, ոչ մի ձայն, ոչ մի գուրգուրանք: Լռիկ նայում են նոքա միմեանց վերայ և լալիս են: Երբ որ դ'Արթանտոնը վերադարձաւ տուն, Շարլոտան հանդիպեցաւ նրան ամենեկին վրդոված:

— Կամաց, կամաց, նա քնած է:

— Ո՞վ:

— Զեկը, նա վիրաւորված է, «Յիդ-նը» խորտակվեցաւ, նրան ազատել են մի հրաշքով: Այժմ նա եկաւ Ռիօ — Ժանէյրօից, ուր անցկացրել է հիւանդանոցումը երկու ամիս: Շուտով Շարլոտայի և բանաստեղծի կեանքը ստացաւ առաջվայ սովորական կերպարանքը, նրանց շատ էր նեղացնում դժբաղդ հիւանդի ներկայութիւնը: Կաթսայի պայթելից այրուած ոտները ծանրութեամբ էին լաւանում: Կապոյտ շապիկ հագած, կոպտացած գծագրութիւնով,

կարմիր աչքերով առանց արտանունքի, արեակէղ երեսով, լղարած այտերով խեղճ Զեկը հազիւ թէ կարողանում էր անցնիլ մէկ աթոռից միւսը: Մայրը նորանից ամաչում էր, նրա կոպիտ վարմունքներից, նրա սովորութիւններից, օտարների զալիս նա շտապում էր ներկայացնելու նոցա իւր որդուն, վախեւալով լսել մի կոպիտ խօսք, կամ նկատել մի ծաղրալի ժպիտ: Մորոնվալը, Հիրշը, Լաբասէնդը, — բոլորեքեանը նայում էին նրա վերայ հպարտութեամբ բայց նա մինչև անգամ նոցա վերայ չէր էլ մտածում, նա միայն մի բան էր ցանկանում, — այդ էր հանգստութիւնը և զուարճանում էր միայն այն ժամանակ երբ որ մնում էր մօր հետ միայնակ:

Մէկ անգամ սա նրան հարցրեց.

— Արդեօք չեմ ճանապարհորդել ծովով երեխայութեանս ժամանակ:

Նա նայեցաւ նրա վերայ զարմանքով:

— Բայց ինչո՞ւ համար ես հարցնում դրա մասին:

— Երբ որ երեք տարի առաջ ես մը-

տայ չոգենաւը, ինձ թուեցաւ որ այդ բոլորը ես տեսել եմ, կարծես, երազումս։
— Ոչ Զեկ, այդ երազ չէր, դու ճիշդ երեք տարեկան էիր երբ մենք վերադարձանք Ալթիրից, ուր մեռաւ քո հայրը։

— Ի՞նչ էր իմ հօրս անունը։
— Նա տատանվում էր և չը տալով ուղիղ պատասխան սկսեց առաջվայ պէս իւր երեակայական պատմութիւնը։

— Ի՞նչ էր իմ հօրս անունը, — կըրկնեց որդին։

— Մայրը չնչաց անունը գլխակոր։

— Ինչպէս կը կամենաս, — քիչ ժամանակից յետոյ ասում էր զ'Արժանտոնը, — բայց մի բան պէտք է վճռենք, նա ինձ խանդարում է. նայիր, ինչի նման է դառել. հաւատաւ ամաչում եմ. զիտես ինչ եմ ուզում քեզ առաջարկել. ուղարկենք դրան էտիօլ, այնտեղ պարզ օդումը նա կ'առողջանայ, կը կազդուրվի և ժամանակ առ ժամանակ կ'ուղարկենք նրա համար փող։

— Շարլոտան ուրախութեամբ ընդունեց

այդ առաջարկութիւնն և միւս օրը դռնաց իւր որդու հետ Օլնէտ. Նոքա հասան Օլնէտ հիանալի աշնանային առաւօտը։ Զեկը ճանաչեց իւրաքանչիւր ծառը, իւրաքանչիւր ճանապարհը, նրա սիրտն աւելի ծանր էր բարախում, նա լսում էր մեծ մօր — բնութեան ձայնը, որ հծծում էր նրան. — Եկ ինձ մօտ, իմ խեղճ երեխայ։ Ես ունիմ բալասան բոլոր վէրքերի համար, ես կ'առողջացնեմ քեզ, Այս գիշեր առաջին անգամն էր, որ վերնագիրը տան ճակատի վերայ ասում էր ճշմարտութիւն, կարծես դա էր «Փոքրիկ տնակ, մեծ հանգստութիւն»։

Բայց Զեկը առողջութիւնը բոլորովին խանգարվել էր և կարծես բաւական էր մեզ էլ, որ վերջացնէինք նրա անձնական բաղդի նկարագրութիւնը։ Բայց այստեղ միայն սկսվում է նրա իսկական վէպը։ Օլնէտումը նա գտաւ իւր նախկին ծանօթին, բժիշկ Ռիվալսին։ Նա այրիացել էր, իսկ նրա թոռ Սեսիլը դառել էր մի գեղեցիկ օրիորդ, որը խոհեմութեամբ օգնում էր իւր մեծ հօրը նրա գիւղա-

կան դեղատանը: Այս բոլորի մէջ Զեկի համար բացուեցաւ նոր վիշտերի աղբիւր, աւելի՛ վատ, քան որպիսիք նա փորձել էր իւր բաղմատանջ կեանքումը. նա եռանդով սիրեց օրիորդին, իւր երեսայութեան ընկերոջ, և զրա հետ միասին հասկացաւ թէ ինչպիսի անդունդ է բաժանում նրանց այդ բոլորին: Ինքն է խեղճ և հիւանդոտ, ոչ միայն ֆիզիքապէս այլ և բարոյապէս, իսկ օրիորդը նրա հետ համեմատելով ֆիզիքական և բարոյական կատարելութեան տիպար է: Բայց աւելի շատ էր նեղացնում նրան այն հանգամանքն, որ ինքն — մարդ է անցեղ, անանուն, իսկ նա — պատուաւոր ընտանիքից:

Բարի Ռիվալսը, որ վեր առաւ Զեկին իւր հոգացողութեան ներքոյ, պարզ տեսնում էր, թէ ինչ էր կատարւում նրա հիւանդ սրտումը, տեսնում էր և այն, որին Զեկը չէր էլ համարձակւում հաւատալ, — նրա թոռը հաւատարիմէր մը. նացել իւր երեսայութեան ընկերոջ:

Զեկի առողջութիւնը կազդուրւում

էր: Մէկ առաւօտ նա մտաւ Ռիվալսի գրասենեակն և ասաց նրան, որ ինքը մտադիր է դնալու որեիցէ մի տեղ — պէտք է սկսել աշխատել:

Դու ճշմարիտ ես ասում, — պատասխանեց նրան ծերունին, — այժմ դու առողջ ես, պէտք է աշխատես: Բայց ոչինչ բան չունես ինձ ասելու:

— Ոչինչ, պարոն Ռիվալս:

— Իսկ ես, ճշմարիտն ասեմ, կարծում էի որ երբ մի մարդ սիրահարուած է մի օրիորդի վերայ, որ ունի մի ծերունի պապ, պէտք էր նրանից խնդրել օրիորդի ձեռքը:

Զեկը լռիկ ծածկեց երեսը ձեռքերով:

— Ինչո՞ւ ես լալիս, Զեկ, ինչպէս երևում է դործքերդ այնպէս էլ վատ չեն, երբ ես առաջինն եմ սկսում խօսել այդ բանի մասին:

— Միթէ կարելի է: Բայց ինչ եմ ես — մի խեղճ արհեստաւոր:

— Վնաս չը կայ, քո դրութիւնից դուրս գալու միջոց կայ, ես քեզ ցոյց կը տամ եթէ դու ուզում ես:

— Բայց դա բոլորը չէ, ես, ես...
— Դու անհարազատ ծնունդ ես, գիտեմ, բայց թողնաս պատմութիւնը հազիւ թէ քոնից դժբաղդ չէ: Լսիր և դատիր: Տասն և ութը տարի սրանից առաջ, ինձ կանչեցին մէկ հիւանդի մօտ, նա էր շատ գեղեցիկ երիտասարդ երեսուն տարեկան, չիկահեր, կապոյտ աչքերով պատահմամբ վիրաւորել էին որսի ժամանակ նրա ոտը շատ մանր գընդակներով: Պէտք է հանել էի բոլոր գընդակները, վիրահատութեան նա դիմացաւ գիւցաղնութեամբ և նրա վերջանալուց յետոյ շնորհակալութիւն արաւ ինձ մաքուր ֆրանսիական լեզուով. նրա անունն էր կոմս Նադին, նա ռուս էր: Իմ հիւանդը շուտ էլ կաղդուրվեցաւ, մենք բարեկամացանք, և ես յաճախ գնում էի և բերում էի նրան մեղ մօտ. նա հիանալի խօսակից էր, շատ էր տեսած. խօսում էր իբրեւ գիրք, շուտով ես և իմ կինս պարզ տեսանք, որ մեր աղջիկը, մեր Մադլէնը սիրեց այս օտարականին. սա էլ կարծես սիրեց աղջկան և

երբ վերջապէս առաջարկեց իւր ձեռքը, մենք բոլորեքեանս ուրախութիւնից չէինք իմանում, ինչ անենք: Ճշմարիտ է, այն ժամանակ ինձ չատերն ասում էին, որ անկարելի է այդպէս թեթևութեամբ մարդու տալ աղջկան, մեր տեղում Նադինին ոչ ոք չէր ճանաչում, խորհուրդ էին տալիս, որ գնամ Փարիզ և տեղեկութիւններ հաւաքեմ ռուսաց դեսպանատանը, մանաւանդ որ կինս այդ մասին շատ էր պնդում, իսկ ես օրէօր յետաձգում էի և վերջապէս հանգիստ մնացի Էտիօլում, որտեղ շուտով տօնեցինք՝ մեր աղջկայ հարսանիքը: Նոյն օրը նորապսակները գնացին ճանապարհորդելու Եւրօպայում: Ես պառաւիս հետ նորոգում, պատրաստում էի նոցա համար բնակարան ահա այնտեղ, չը վերջացրած հովանոցումը: Մադլէնի նամակները Պիղայից և Ֆլօրէնցիայից բուրում էին երջանկութեան հոտ:

Ուրեմն դատիր մեր դրութիւնը, երբ մէկ աշնանային մութը զիշեր մեղ մօտ եկաւ մեր աղջիկը միայնակ, զեղնած,

լղաբաժ, հին զգեստով, պայուսակը ձեռքին: Հարցմունքներին թէ ուր է քո ամուսինդ, դժբաղդը պատասխանեց. — «Ես ոչ ունիմ և ոչ էլ ունեցել եմ ամուսին»: Կոմս Նազկնը, ինչպէս երևեցաւ, ինքնակոչ էր, արկածախնդիր Մալարոստիացի հրէայ Ռէշ անունով. նա ունեցել էր երկու կին բացի Մաղլէնից. նրան բանդարկել էին Տուրքնումը իբրեւ Ռուսաց թղթագրամի նենդող: Մեր աղջկայ վերադառնալուց երկու ամիս յետոյ ծնաւ Սեսիլը, իսկ նրա մայրը մեռաւ: Երեխան միայ մեր ձեռքին և մենք ծածկեցինք նրանից բոլոր նրա զարհուրելի անցեալը, բայց մտածմունքն ապագայի վերայ չատ էր մեզ հոգս պատճառում: Բայց կարող էր Սեսիլն էլ սիրել մի մարդու, իսկ նրա մարդու տալու ժամանակ բոլորը պէտք է բացուի, մտածում էի ես: Եւ ճիշդ այդ ժամանակ բազմն ուղարկեց քեզ մեզ մօտ: Պառաւ Արշամբոյից, ինչպէս յիշում եմ, ես իմացայ որ մայրդ երբէք ամուսնացած չէ: Ահա ամուսին Սեսիլիս համար,

մտածեցի ես: Սրա համար էլ ինձ չատ նեղացրեց խորթ հօրդ մտածմունքը զարձնելու քեզ արհեստաւոր, ես յոյս ունէի, որ դուք կ'սիրէք միմեանց: Այժմ լսիր. դու նրան սիրում ես այնպէս ինչպէս էլ նա քեզ. պէտք է նրան զբաւել. բաժանիր քո կեանքդ երկու մասը — առաւօտն աշխատիր գործարանում, երեկոյեանները պարապիր, պատրաստվիր տալու բժշկի քննութիւն և փոխանակիր ինձ: Իւրաքանչիւր կիւրակի խնդրում եմ քեզ գալ մեր տուն, ես քեզ կը ղեկավարեմ, կը հսկեմ քո պարապմունքներին, իսկ Սեսիլի տեսակցութիւնը քեզ կը քաջալերէ: Հօ Բիւպօն և միւսները զուիս բերին այդպիսի փորձեր, — ուզում ես փորձել: Ընծայ կ'ըստանաս Սեսիլին: Զեկը լուիկ ընկաւ ծերունու գիրկն և վազեց որոնելու օրինորդին:

— Սեսիլ, — ասաց նա, — ես գնում եմ, որ կրկին սկսեմ իմ ծանր գործը, բայց այժմ կեանքս նպատակ ունի. ձեր պապըն ինձ թոյլ տուեց ասելու ձեզ, որ

ես ձեզ սիրում եմ և որ այսուհետև ես բոլոր ուժովս կ'աշխատեմ ձեր սիրտը գրաւելու:

Սեսիլը նրան լսում էր լռիկ, ուրախալից ժպիտով և արտասուալից աչերով, առանց կոտրտուելու և առանց ցոյցի: Երբ որ նա վերջացրեց, օրիորդը տուեց նրան իւր ձեռքն այս խօսքերով.

— Ես պատրաստ եմ սպասելու չորս տարի և աւելի, իմ բարեկամս, եթէ այդ հարկաւոր է:

Ձը կայ արդեօք, Բալաֆր, մի պաշտօն որեւիցէ գործարանում այս երիտասարդը, որ հնոց վառող է եղել, այժմ ուզում է գործ գտնել այստեղ:

Բալաֆրը գլխից մինչև ոտըը տնտղեց երիտասարդ արհեստաւորին, որին նրան ներկայացրին:

— Գնա Էյսենդէկի գործարանն, — ասաց նա նրան — մեծ տուն է Օբերկամպ փողոցում, ասա որ Բալաֆրն ուղարկեց, այնտեղ որոնում են արհեստաւորներ:

Ձեկը շնորհակալութիւն արաւ և պատուասիրելով իւր նոր բարեկամներին ուրախ դուրս գնաց գինետնից: ամենից հեշտ է, ինչպէս յայտնի է, արհեստաւորների համար գտնել պաշտօն գործարաններում. մէկ ժամից յետոյ նա վարձուեցաւ Էյսենդէկի մօտ, օրը վեց ֆրանկով, և գնաց իւր համար բնակարան պտրելու գործարանի մօտ: Նա ուրախ գնում էր չը զարձնելով ուշադրութիւն որ նրան ամեն կողմից բոթում էին: «Ի՞նչ հիանալի է կեանքը» մտածում էր նա, ինչպէս լաւ կ'աշխատեմ: Այսպէս մտածելով նա դիպաւ մի մեծ կողովի, որ դրած էր պատի մօտ, լիքը զլխարկներով և գնդակներով. նա դրած էր ոտ նամանների խանութի պատի մօտ: Այս կողովը յիշեցրեց Ձեկին Բելիդէրին և նա չսկամայ նայեց խանութը և մեծ զարմանքով տեսաւ իւր բարեկամին, որը հագնուած էր սւււր մաքուր և կոկիկ և որը գնում էր ոտնամաններ փոքրիկ, լղար և դեղնած հինգ տարեկան երեխայի համար: Ձեկի երեխը, կարծես, չը զարմացրեց նրան:

— Ո՛հ, դուք էք:—Ասաց նա նրան
այնպիսի սառնութեամբ, որ կարծես
նախընթաց օրն արդէն հանդիպել էին
միմեանց:

— Առողջ էք, Բելիզէր, ի՞նչ էք ա-
նում այստեղ, այս ձեր երեխան է:

— Ո՛հ, սա տիկին Վերերի որդին է,
հոգոց քաշելով պատասխանեց վաճա-
ռականը.—քսան անգամ նա հարցնում
էր երեխային. արդեօք լաւ են նրա հա-
մար նոր ոտնամանները, և համողվելով
որ նոքա լաւ են, վճարեց նոցա գինն և
բռնելով երեխայի ձեռքը դուրս գնաց
փողոց:

— Դուք որ կողմը պիտի գնաք,—
հարցրեց նա Ջեկին և նրա ձայնից ե-
րևեցաւ որ եթէ Ջեկը ասէր, թէ պէտք
է գնայ աջ, Բելիզէրը պիտի գնար
ձախ:

Ես ինքս էլ չեմ իմանում. վարձուե-
ցայ էյսենդէկի մօտ և պարում եմ բը-
նակարան գործարանին մօտիկ:

— Էյսենդէկի մօտ, այնտեղ հեշտ չէ
գործ ձարելը, պէտք է ունենալ լաւ վը-
կայաթուղթ:

Այս խօսքը հասկացրեց Ջեկին Բելի-
զէրի սառնութեան պատճառն և ինչպէս
երբեմն Ռիվալսը՝ սա էլ չարունակում
էր համարել նրան 6,000 Փրանկի գող:
Բայց երբ որ Ջեկը ցոյց տուեց իւր
վկայաթուղթը, վաճառականի ուրախու-
թեանը սահման չը կար և նրա ամբողջ
երեսը փայլեցաւ բարեսիրտ ժպիտով:

— Լսեցէք, Ջեկ, այժմ բնակարան
պտրել չատ ուշ է, գնանք ինձ մօտ, ես
բնակվում եմ առանձին, ես ընդարձակ
բնակարան ունիմ, ուր դուք էլ կարող էք
գիշերել: Այո, այո, ես մի զիտաւորու-
թիւն ունիմ, բայց այդ մասին ճաշին կը
խօսենք: Իսկ այժմ գնանք տուն: Եւ
երեքը միասին, Ջեկը, վաճառականը և
տիկին Վերերի երեխան գնացին ար-
տարձանով Պոնոայօ փողոցն, ուր բնակ-
վում էր Բելիզէրը: Ճանապարհին նա
պատմեց Ջեկին, որ նրա քոյրը այրիա-
ցել էր և նա նրա հետ միասին տեղա-
փոխուեցաւ Փարիզ: Ժամանակ առ ժա-
մանակ նա երեխային գրկում էր ասե-
լով. «յօգնեցաւ խեղճը, մանգալ սովոր

չէ, մայրը ամբողջ օրերով տանը չէ, հայ է վաճառում, շատ լաւ կինարմատ է, դրացին է նայում երեսային, ես ոտնամաններն էլ գիտութեամբ գնեցի, որ երբեմն երբեմն ինձ հետ տանեմ: Ահա մենք հասանք, Նոքա մօտն մի մեծ տուն, որը բացառապէս արհեստաւորների համար էր, հազարաւոր նեղ պատուհաններով, երկայն նեղ անցքով, ուր խեղճերը դուրս էին տանում իրանց իրերը, որոնք չէին տեղաւորվում նոցա փոքրիկ խցիկներում:

Նեղ երկար անցքում բացած դռներէնց երևում էին սենեակներ ծխով լի, լսվում էին երեսանների աղմուկ, ամառնեղէնների շխխիւց, — ճաշելու ժամ էր: Բեկիղէրի սենեակը վեցերորդ յարկումն էր անցքի ծայրին:

— Կը տեսնէք, Զեկ, ինչպէս լաւ տեղաւորուել եմ, ինչքան տեղ ունիմ: Բայց սպասեցէք, առաջ պէտք է երեսային տանեմ տիկինն Վերերի մօտ:

Նա բացեց իւր սենեակին կից դու-

ռը, վառեց մօմը, նստացրեց երեսային բարձր աթոռի վերայ, կապեց նրան և տուեց ձեռքը երկու պղնձեայ խուփեր և վերադարձաւ Զեկի մօտ:

— Այժմ շուտով փախչենք: Տիկինն Վերերը այս րոպէիս կը վերադառնայ, տեսնենք ինչ կ'ասի, երբ որ կը տեսնի նոր ոտնամանները, նա ամենեւին չի դուշակիլ որտեղից են նոքա: Այ կը ծիծաղենք:

Նա առաջուց արդէն ծիծաղում էր, բացանելով իւր սենեակի դուռը, վերնայարկի մի երկայն դահլիճի, որ երկու մասը բաժանած էր ապակեայ միջնորմով:

Գլխարկների և գնդակների կոյտը ցոյց էր տալիս վաճառականի արհեստն, իսկ տկլոր պատերը — նրա չքաւորութիւնը:

— Ուրեմն Բեկիղէր դուք այլ ևս չէք ապրում ձեր ազգականների հետ, — հարցրեց Զեկը:

— Ո՛չ, — թեթե վրդովմունքով պատասխանեց վաճառականը. — գիտէք, մեծ ընտանիքներումը հաշտ չեն ապրում: Տի-

կին վերերը գտաւ որ անկանոն է, որ ես աշխատէի միւսները փոխարէն, չը խնայելով ոչինչ ինձ համար: Նա ինձ խորհուրդ տուեց, որ բնակվեմ միայնակ, այն ժամանակից ես կարողացել եմ և՛ օգնել իմ աղքատներին և փող էլ խնայել: Ա՛հ, նա չատ խելօք կինարմատ է:

Շարունակելով խօսակցութիւնը, Բիլիդէրը վառեց լապտերը, հանեց պահարանից երկու նկարադարձ արծաթե, երկու դանակ ու պատառաքաղ, մինը երկաթեայ, միւսը փայտեայ, հաց, զինի, բողկ և մեծ աղցանաման, լի գետնախնձորով և աղի ձկներով, — շատ անուշ խորտիկ, որի վերայ թէ հիւրն և թէ տանուտէրը դարձրին առանձին ուշադրութիւն:

— Բայց դուք, Բիլիդէր, ամբողջ տընտեսութիւն ունիք:

— Այստեղ շատ իրերը իմա չեն: Տիկին վերերը փոխ է տուել առ ժամանակ մինչև...

— Մինչև... ինչ...

— Մինչև որ մենք կը պսակուենք, քաջութեամբ քայց ամօթխածութեամբ պատասխանեց խեղճ:

Եւ տեսնելով որ Զեկը նրա վերայ չէ ծիծաղում, նա շարունակեց.

— Այս բանը շատ ժամանակ է, որ վրձոված է. ինձ համար բաղդաւորութիւն է, որ նա համաձայնուեցաւ. նա դժբաղդ էր իւր առաջուայ ամուսնոյ հետ, այն սրիկան նրան ծեծում էր:

— Բայց երբ է հարսանիքը:

— Ես այս րոպէիս էլ պատրաստ եմ, բայց նա ասում է, որ պէտք է առաջ գտնել մի ընկեր, այսպէս են անում բոլոր խեղճերը, գտնում են մի այրիկամ ամուրի ընկեր, որ ծախսին մասնակից է լինում. նրան տալիս են ճաշ, բնակարան, լուսնում են նրա լուացքը սա մեծ տնտեսութիւն է ամենքի համար էլ: Բայց դժուար է գտնել մի լաւ մարդ, աշխատող և գործունեայ:

— Իսկ ես, Բիլիդէր, պէտքական եմ:

— Միթէ դուք կը համաձայնուիք, Զեկ: Եւ եթէ ձեզ չէ վախեցնում մեր

չքաւորութիւնը, դուք մեզ համար — հի-
անալի ընկեր էք. այ բաղդաւորութիւն,
որ մենք հանդիպեցանք. կամաց, լռիք,
տիկին Վեբերը գալիս է...

Սենեակ ներս մտաւ երեսային գրկած
մի բարձրահասակ, դեղեցկակազմ կին-
արմատ երեսուն կամ երեսունուհինգ
տարեկան: Նա բարձրաձայն և ուրախ
ծիծաղում էր, ասելով.

— Ո՛վ դուք ծաղրածու, կատականոց,
տեսէ՛ք ինչպիսի ոտնամաններ հագցրել
է իմ երեսային:

Բեկիզէրը նոյնպէս կրկնեց, բացական-
չելով. եկ ասա որ սատանայ չէ. հօ-
գուչակեց: Յետոյ տիկին Վեբերին ներ-
կայացրեց Ջեկին իրրեւ ապագայ ընկե-
րոջ: Սկզբումը նա ընդունեց այդ նո-
րութիւնը սառնութեամբ, բայց իմանա-
լով որ Ջեկն և Բեկիզէրը վաղուց ծա-
նօթ են միմեանց և որ նրա առաջն ա-
պուխտի պատմութեան նշանաւոր դիւ-
ցազն է կանգնած, բարեկամութեամբ ձը-
գեց իւր ձեռքը Ջեկին և բանը վեր-
ջացած էր:

Ջեկը ուրախ սրտով սկսեց աշխատել
գործարանում, բարեխղճօրէն կատարում
էր իւր պարտականութիւնը, բայց նրա
մտածմունքները շատ հեռու էին: Ըն-
կերները նկատում էին, նոքա տեսնում
էին որ նա սառնութեամբ է նայում.
նոցա վէճերի վերայ, բայց և այնպէս
թէպէտ չէին սիրում, բայց պատվում
էին նրան նրա հաստատամտութեան հա-
մար, որով նա պաշտպանվում էր նոցա
խիստ կատակներից: Երիտասարդ կա-
նայք նրանով յափշտակուած էին: Նո-
քա ամենքն էլ կարդացել էին Փարիզի
գաղտնիքն և նմանեցնում էին նրան
կոմս Ռուզովիին, որ որոնում էր իւր
Ֆլէօր-դէ-Մարիին:

Գործարանից դուրս գալով Ջեկը ըշ-
տապում էր վերադառնալ տուն, հա-
նում էր բաճկոնը և սկսում էր սովո-
րել: Երբեմն երբեմն նա նկատում էր
որ գիտէ աւելի քան կարծում էր, բայց
երբեմն էլ նրան հանդիպում էին այն-
պիսի անակնկալ դժուարութիւններ, որ
նա գրիչը դէն էր ձգում: Նրա մօտ նըս

տած Բելիզերը յարգանաց լռութեամբ կարկատում էր գլխարկները վայրենիի զարմանքով, որը յատուկ է լինում ներան ձեռնածուի դիւթական ներկայացմանց ժամանակ։ Գրչի ճռճոցը թղթի վերայ, ասեղի թեթև ձայնը լցնում էին սենեակը խաղաղ և առողջ աշխատանքի մթնոլորտով։ Երբ որ Ջեկը բարձրացնում էր գլուխը տեսնում էր լոյս, որ տալիս էին աշխատանքի լապտերները, տեսնում էր շատ մարդկանց ըստուերներ քաջութեամբ աշխատելիս՝ Փարիզի գիշերի հակապատկերն, այն բոլորը, ինչ որ փայլում է բազերի մէջ, մինչև որ ճեմելիքներում կը վառվեն հազարաւոր կրակները։ Քիչ ուշ նոցա հետ միանում էր արկին վերէրը երեսային քնեցնելից յետ։ Նա կարկատում էր իւր որդւոյ, Ջեկի և Բելիզերի շորերը։ Հարսանիքը յետաձգվեցաւ մինչև դարուն, իսկ մինչև այդ ժամանակ երկու սիրահարները հանդարտութեամբ աշխատում էին կողք կողքի նստած, երբեմնապէս մի քանի խօսք միմեանց ասելով։

Ջեկը չէր շուռգալի, վախենալով նոցա նեղացնել և մտածելով միևնոյն ժամանակը թէ ինչպէս նոքա բաղդաւոր են։ Ինքը բաղդաւոր էր միայն կիրակէօրերը, երբ գնում էր Էտիօլ։ Բոլոր տունը նրան հանդիպում էր սիրով, ըսկսած վառարանի մէջ՝ վառած կրակից մինչև Սեսիլը։ Ինչպէս վաղ նա Սեսիլի ներկայութեամբ դաս էր առնում, յետոյ նոքա միասին գնում էին զբօսնելու անտառը։ Այս դիւթական օրն ոչ բոլորէ և ոչ ժամ ունէր, ոչինչ չունէր բացի անընդհատ երջանկութիւնից։ Երբեմն այս զբօսանքների ժամանակ նոքա անցնում էին Օլնէտով, ուր Հիրլը յաճախ անում էր իւր փորձերը անուշահոտութեանց իբրև բժշկական միջոցների վերայ։

— Ահա թիւնաւորողը վերադարձաւ, նկատում էր իւր ուղեկիցներին Ռիվալսը. զգո՞ւմ էք որդի՞ք նրա սատանայական բռնանոցի հոտը։

Սեսիլը նրան զգուշացնում էր։

— Կամաց, կամաց, պապիկ, կարող է լսել։

— Թող լսէ. դու կարծում ես նը-
քանից վախենում եմ:

Եւ զորդ որ վախենալու ոչինչ չը կայ:
Դ՛Արժանտոնի և Զեկի մէջ բոլոր բան
վերջացրած էր, նոքա երբէք չէին տես-
նվում:

Զ՛ուզենալով վրդովիլ իւր հրամանա-
տարին Շարլոտան նշանակում էր Զե-
կին տեսակցելու տեղ. նոքա միմեանց
հանդիպում էին կամ պարտեզումը կամ
ևկեղեցիումը. տիկինը տխուր, յօգնած
էր երեսում. մէկ անգամ ոչ առանց վըր-
դովմունքի փոխ ուզեց որդուց փող. սա
էլ հենց նոր ստացել էր ռոճիկ և տը-
վեց բոլորը նրան: Առհասարակ Զեկի
սիրտը զուշակում էր, որ մայրն այժմ
աւելի դժբաղդ է քան թէ երբեք...

Ամարային վաղ առաւօտ էր: Բեիդէ-
րըն և Զեկն արդէն ոտքի վերայ էին.
Թէպէտև օրը նոր էր բացվում: Առաջի-
նը ման է դալիս սենեակում, տեղաւո-
րում է, աւելում է, սրբում է ոտնա-
մանները. միւսը նստած է բաց պատու-
հանի մօտ գիրքը ձեռին: Բոլորի շուրջ

խաղաղ է: Յանկարծ լսվում է ձայն.
«Հաց, հաց»: Այս Զեկի դրացիի ձայնն
է, որ սկսում է իւր վաճառումն, նա
ամբողջ լժաղի զարթեցնողն է. նրա
ձայնը պերճախօս հրաւեր է դէպի կեանք.
ահա ախ հացն, որը վաստակել շատ
դժուար է. նա հարկաւոր է հօր պարկի,
աշակերտի կողովի, առաւօտեան սուրճի
և երեկոյեան մսաջրի համար... Շուտով
ամենքը ոտքի վրայ են: Պատուհանները
բացվում են: Մէկումը երեսում է տը-
խուր կերպարանքով կինարմատ, որ նըս-
տում է կարի մեքենայի մօտ, միւսում
երիտասարդ օրիորդ, արդէն սանդղված,
և հաց է կտրում պատուհանից թեկ
ընկած, վախենալով չ՛աղբոտել նոր ա-
ւելած յատակը: Նայելով այս բոլորի
վերայ և մանաւանդ կապոյտ երկնքի
վերայ, Զեկը ընկղմեցաւ մտածմունքի
մէջ, դրան բաղխումն սթափեցրեց նը-
րան, Բեիդէրը բացեց դուռը և Շարլո-
տան ներս մտաւ սենեակին՝ ու ընկաւ որ-
դու գիրկը:

— Զեկ, Զեկ, աղատիր, պաշտպանիր

ինձ. այն անպիտանն, որին ես ամեն
ինչ գոհեցի, համարձակվեցաւ ինձ վե-
րայ ձեռք բարձրացնել: Ո՛հ, ինչքան
ես տանջուեցայ այս տասը տարում: Ո՛հ,
ինչպէս նա ինձ տանջեց: Բայց քեզ նա
ինչպէս ատում էր: Երբ որ մենք Էնդ-
րէ եկանք և փողերը բերինք, ես այն-
տեղ էի միւս ասիւմը. նա թոյլ չը
տուեց ինձ քեզ հետ տեսնուելու: Bon-
Ami-ն ինձ տուեց այն ժամանակ
10,000 Ֆրանկ քեզ համար: Անպիտանը
բոլորը ծախսեց իւր լրագրի վերայ,
չէի ուզում քեզ ասել, բայց այսօր
բոլոր բանը բացուեցաւ, ես բոլորը տա-
նում էի: Երկու գիշեր շարունակ նա
տանը չէր, երբ վերադարձաւ ես յան-
դիմանեցի, նա բարձրացրեց ինձ վե-
րայ ձեռքը: Ես հազնուեցայ ծածկեցի
գլխարկս և ասացի նրան. լաւ նայեցէք
ինձ վերայ, այլ ես դուք երբէք ինձ
չէք տեսնիլ և դուրս եկայ:

Ձեկը լռիկ նրան լսում էր: Երբ նա
վերջացրեց Ձեկը վերառաւ նրա ձեռ-
քըն և քնքունութեամբ ասաց.

— Միայն մի բան էր պակաս իմ կա-
տարեալ երջանկութեանս— դա դու էիր:
Այժմ դու այստեղ ես ինձ հետ, ես էլ
ուշինչ չեմ ցանկանում. բայց զգուշացի՛ր,
— ես քեզ այլ ես չեմ թողնիլ:

— Ես ինքս էլ չեմ գնալ այս տեղից:
Ո՛չ, իմ Ձեկ, ես յաւիտեան կը մնամ
քեզ հետ: Յիշում ես, ես քեզ յաճախ
ասում էի, որ կը գայ ժամանակ, երբ
դու ինձ հարկաւոր կը լինես: Այս ժա-
մանակը հասաւ և երգվում եմ քեզ, որ
ես չեմ աստուած: Կը տեսնես ինչպէս
լաւ կ'ապրենք, ես ազատ չունչ եմ քա-
չում, թէպէտ քո սենեակը զարհուրելի
է, բայց ինձ թվում է թէ ես արքայու-
թեան մէջ եմ:

Ձեկը վազեց որոնելու Բելիզերին,
որը համբերութեամբ զբօսնում էր նա-
խասենեակում, սպասելով խորհրդի վեր-
ջանալուն:

— Իմ մայրս ուզում է ինձ հետ ապ-
րել, — ասաց նա նրան. — բայց ինչպէս
տեղաւորուենք:

Բելիզերի գլխում իսկոյն ծնուեցաւ

միտք. սա մեզ համար ընկեր չէ, հարսանիքը էլի պէտք կը լինի յետաձգելը այց նա չը կարողացաւ ծածկել իւր յուսահատութիւնն և առաջարկեց իւր ծառայութիւնը իդա դէ-ֆարանսին, որովհետեւ Շարլոտա անուան յիշատակութիւն էլ չը կար:

— Մայրիկ, եթէ քեզ անհաճոյ չէ, երբոր տիկին Վերբերը կը վերադառնայ, նա կը պատրաստէ մեզ համար ճաշ:

— Ո՛հ, ոչ, այդ իմ գործս է: Պարոն Բեկիդէրը թո՛ղ միայն ցոյց տայ ինձ ճանապարհն, ուր ինչ պէտք է գնեմ: Ես ուզում եմ լինել քո տանտիկինն, ոչինչ չը փոխելով քո կեանքումը, կը տեսնես ինչպիսի ճաշ կը պատրաստեմ քեզ համար:

Նա սրտանց համբուրեց մօրը և դուրըս գնաց բաղլաւոր:

Ամբողջ օրը նա ուրախ էր, բայց վերադառնալիս տուն յանկարծ վախեցաւ այն մտքից, թէ վայ թէ մօրը չը գտնէ այնտեղ: Բարձրանալով սանդուղը հանգստացաւ, որովհետեւ լսեց ծանօթ ձայն որ երգում էր: Մտնելով իւր խցիկը նա

զարմացաւ, մաքրած ինչքան կարելի էր, զարդարած ձօխ անկողինով և զարդի գեղեցիկ սեղանով սենեակը բոլորովին փոխուել էր:

Ամեն տեղ երևում էին ծաղկամաններ ահագին փնջերով, իսկ սենեակի միջումը պատրաստած էր սեղան, որի վերայ դրած էին հասարակ ամաններ, սպիտակ ձիւնանման ախորժելի կարկաղակ և երկու շիշ զինի: Ինքը իդան անզուածոյ ներքնաղցեստով, բաց գոյնի բաճկոնով, թեթև գլխարկով ձօխ քրքրած մազերի վերայ ուրախ էր և աշխոյժ:

— Հա, ինչ կ'ասես, — հարցրեց իդան ընկնելով Զեկի գիրկը:

— Հիանալի է:

— Եւ ինչպէս շուտով ես ամեն բան կարգի դրի: Ինձ օգնեցին Բեկիդէրն և տիկին Վերբերը, — ինչ հիանալի մարդիկ են: Ես նոցա հրաւիրեցի ճաշի: Նայիր այս կարկանդակին, ես գնեցի այն վաճառանոցի հրապարակումը, այստեղ վաճառում են տամուհինգ սու էժան քան թէ միւս տեղերումը: Ըշմարիտ է շատ հեռու է, վերադառնալիս ես այնպէս յօգնեցայ, որ կառք նստայ:

Շատ յարմար էր նրան այսպիսի վարմունքը: Երկու ֆրանկանոց Վառք վարձել տասնուհինգ սու խնայողութիւն անելու համար:

Բայց ամեն բանից երևեցաւ, որ նա գիտէ ուր ինչ պէտք է գնել. սպիտակ հացը վիէննայի հացի գործարանիցն էր, սուրճը և քաղցրեղէնները Պալէ Ռոյալից:

Ջեկը նրան զարմանքով էր լսում, իդան նկատեց այս և պարզամտութեամբ հարցրեց.

— Կարելի է ես աւել եմ ծախսել, բայց ինչ արած, այստեղ շատ բան էր պակաս, բայց ես մտադիր եմ շատ և շատ տնտեսութիւն անելու, նայիր ես գնեցի տիկին լեվեկի խանութից յիշատակարանը, — սա անպատճառ հարկաւոր է, այս երեկոյեան եթէ ուզումես, մենք հաշիւի կը տեսնենք:

Խօսակցութիւնը ընդմիջեցաւ տիկին Վերէրի, նրա որդու և Բելիդէրի գալով, ամենքը ուրախ և ախոյոժ էին, բացի վերջինից: «Աստուած գիտէ, — մտածում

էր նա, — երբ կը լինի այժմ հարսանիքը: Բնակարանի հետ էլ պէտք է բաժանուէր, խեղճը պէտք է տեղափոխուել էր սանդուղի գլխին մի խցիկ, որովհետեւ այդ յարկումը ուրիշ սենեակ չը կար, իսկ Բելիդէրը չէր ուզում հեռանալ տիկին Վերէրից:

Հիւրերի գնալուց յետոյ Ջեկը շուտով հաւաքեց սեղանը և սկսաւ պարապել:

— Այդ ինչ է նշանակում, — հարցրեց նրա մայրը:

— Հա, դու չես իմանում, ասաց Ջեկըն, և յափշտակութեամբ ու ողորութեամբ սկսաւ պատմել իւր սիրոյ պատմութիւնը. Նա նրան լսում էր ուշադրութեամբ, բայց բոլոր պատմածից ոչինչ չը հասկացաւ. այդպիսի զգացմունքները նրան անյայտ էին...

Իդայի առաջին քայլերը ոչինչ լաւ բան չէին գուշակում, նրա ոյժերը բաւական էին միայն մի քանի օր, մինչև որ թարմէին նրա յիշողութեան մէջ նորան պատճառված նախատիքները: Մէկ կողմից ատելութիւն դէպի խեղճութիւ-

նը, իսկ միւս կողմից թուլութիւնը դէպի դ'Արժանտոն, որ սկսում էր առաջ բերել մեղմացնող հանդամանքներ յօգուտ նրա, և նորա անձնապէս երեւիլը Զեկի բնակարանում հաշտութեան նպատակով, վերջապէս նրան նամակները, — այդ բոլորը ստիպեցին իդային գրեթէ փախչել իւր որդուց իւր առաջվայ բռնաւորի մօտ: Նրա կարծատե ներկայութիւնը միայն խանդարեց Զեկի կեանքը: Բեկիզէրը տիկին Վերէրի հետ պսակվելուց յետոյ, առանձին բնակարան տեղափոխվեցաւ: Իսկ մօր վերադարձը դէպի նախկին կեանքը տուեց նրան միայն զգալի հարուած: Նա կրկին միացրեց իւր անտեսութիւնը Բեկիզէրի ընտանիքի հետ, բայց ինքն այլ ևս նոյնը չէր: Նա վճռեց խեղդել իւր վիշտը ծանր աշխատանաց մէջ և առաջուայ պէս կենդրոնացրեց իւր կեանքի նպատակը Սեսիլի վերայ: Նա շատ աշխատեց և հասաւ մինչև այն աստիճանն, որին հասնում են հնդիկ ֆախիւրները. նրա մարմինը կարծես անզգայ էր դարձել:

Քայց նրա գլխումը երբեմն այնպիսի լոյս մտքեր էին ծագում, որ ոչ մի դժուարութիւն չէր զգում. բայց արդէն նա շատ հաղում էր, նրա ձեռքերը այրվում էին կրակի պէս:

— Էամանց, կամանց, — հանդստացնում էր նրան Ռիվալսը, — պէտք է պահպանել ոյժերը:

Զեկն այդ խորհուրդներին իբրև պատասխան միայն ժպտում էր:

Ժամանակ առ ժամանակ նա զգում էր մեծ թուլութիւն, բայց նրա ցանկութիւնն այնպէս մեծ էր, որ նա անշուշտ կը հասնէր իւր նպատակին, եթէ չըպատահէր մի անակնկալ դէպք, որ տուեց վերջնական հարուած նրա խանդարուած առողջութեան:

Մէկ անգամ չարաթ օր նա ստացաւ բժշկից հեռագիր. «Վաղը մեր տուն չը գաս, մենք տանը չենք լինել»: Մանր տպաւորութիւն արեց այս լակոնական գրուածքը խեղճ սիրահարի սրտի վերայ: Իսկ էտիօլումը այդ միջոցին հրաշքներ էին պատահում:

Մէկ անգամ Սեսիլը նստելով ճաշելու

յայտնեց իւր պապին, որ հրաժարվում է մտքից դառնալու Զեկի ամուսինն, որովհետեւ համոզվել էր, որ սիրում է նրան միայն եղբայրական սիրով: Աղաչանքներն և համոզմունքները, բոլորը ի զուր էին: Երիտասարդ օրիորդն իւր խօսքն էր պնդում, բարի ծերունին յուսահատ ուղարկեց Զեկին վերոյիշեալ հեռագիրը յուսով, որ մէկ շաբաթուայ ընթացքումը իւր թուղ միտքը կը փոխէ, բայց այդ վերջին յոյսն էլ ի զուր եղաւ: Երբ որ Զեկը միւս կիրակի եկաւ Էտիօլ և աղախինն ասաց նրան. «բժիշկը ձեզ մնում է պարտեզումը», նա իսկոյն նախազգաց դժբաղդութիւնը:

— Ո՛ւր է Սեսիլը, էր նրա առաջին խօսքը:

— Նա այնտեղ մնաց, — դժուարութեամբ աղաղակեց ծերունին:

— Երևի ես նրան այլ ևս կարնոր չեմ—չնչաց խեղճը նստելով աթոռի վերայ. — մի մխիթարէք ինձ, պարոն Ռիվալս, այդ պէտք է պատահէր, նա ինձ համար չափազանց բարձր էր, ես նրան

զոյգ չեմ: Ասացէք նրան, որ չը նայելով զօրեղ հարուածին, ես յաւիտեան նրան շնորհակալ կը լինիմ այս հիանալի, զուարթ յիշատակներով լի տարիի համար. նա ստիպեց ինձ մոռանալ բոլորն, ինչ որ ծանր էր կեանքումս, ես վերածնունդայ միայն ան օր, երբ որ Սեսիլը ինձ սիրեց, և մեռնում եմ այսօր, այդ խօսքի բոլոր իսկութեամբ, բայց այս տարի ես ապրում էի նրան շնորհիւ, այս ես յաւիտեան չեմ մոռանալ: Իսկ այժմ ինձ ներեցէք:

Եւ Զեկը շուտ քայլերով հեռացաւ. նա գնում էր գլխակոր գետին ձգած աչքերը, իսկ եթէ բարձրացնէր, կը տեսնէր պատուհանի մօտ կանգնած Սեսիլին լալիս:

Խեղճ օրիորդն այն օրից սկսած թափառում էր տան մէջ իրրեւ ստուերի մեծ վիշտ և ի կատարեալ յուսահատութիւն ծեր պապին:

«Եթէ Սիսելը նրան սիրում է, — մտածում էր ծերունին, — ուրեմն ինչո՞ւ համար է մերժում: Այս հարցի պատաս-

խանը հասաւ նրան այն կողմից որտեղից Ռիվալսը ամենևին չէր սպասում: Շուտով գիշերը նրա ետեից եկաւ պառաւ Սալէն: Ըստ բերելով, որ նրա ամուսինը մեռնում է. բժիշկը խնայն նրա հետ ճանապարհ ընկաւ. հէնց որ Ռիվալսը անցաւ շեմքը, նա խնայն զգաց անոյշ բոյսերի հոտ:

— Թունաւորողն այստեղ էր, — հարցրեց նա կրնարմատին:

Նա ոչ առանց վրդովմունքի պատասխանեց, որ յիրաւի Հիրշը բժշկում էր իւր մարդուն: Այդ ժամանակ անկիւնից ցնցոտիների կոյտի տակից, ուր չոր տերեւների վերայ վերջացնում էր իւր վերջին ընկերները ծերունի գող որսորդը, լսուեցաւ ձայն որ պարզ ասում էր.

— Ասա, ասա, կի՛նս, ես ուզում եմ, որ դու ասես:

Պառաւը կեղծվեցաւ, իբրև թէ չէ լսում,

— Ասա, ասա, պնդում էր մեռնողը:

— Այո՛, ես եմ մեղաւորը, — դժուարութեամբ խօսեց դեպառաւը. — 20 ֆը-

րանկի համար ես նեղացրի խեղճ օրիորդին, պատմեցի նրան նրա ծնողների պատմութիւնը:

— Այ՛ դու անպիտան, — աղաղակեց Ռիվալսը բռնելով նրա կոկորդից:

— Ես ինքս ոչինչ չը գիտէի, ինձ Հիրշը բոլորը պատմեց, որ ես յետոյ պատմեմ օրիորդին:

Եւ ահա որտեղից խեղճը բոլորն իմացաւ, մտածում էր ծերունին, մինչև որ նստած էր մեռնողի մօտ: Լուսադէմին վերջինը մեռաւ, իսկ Ռիվալսը շուտով վերադարձաւ տուն և ուղիղ մտաւ Սեսիլի սենեակը: Սեսիլը այնտեղ չէր, բայց Մադլէնի սենեակի դուռը բաց էր և այնտեղ Սեսիլը, ամենևին հագնուած, քնած էր յատակի վերայ. երեւում էր, որ նա ամբողջ գիշերն անցկացրել էր արտասուներով և աղօթքով: Լսելով պապի քայլերը, նա բացեց աչքերն և տեսնելով որ նրան բոլորը յայտնի է, խոստովանեց, որ սիրում է Ջեկին իւր բոլոր սրտով և միայն մերժեց այն պատճառաւ, որ յանձն չէր առ-

նում գաղտնիք պահել ինչեւիցէ իւր ամուսնուց, իսկ խոստովանել մօր ամօթը նա չէր ուզում:

Պապը պատմեց նրան իւր խօսակցութիւնը Զեկի հետ: Երբ օրիորդն իմացաւ որ Զեկին բոլորը յայտնի է և որ նա էլ իւր նման չունի ազգանուն, նա զգաց տանջող դառն զղջումն, մտածելով որ լցրել էր այդ գծբազդի տանջանքները բաժակն անդգուշութեամբ, նա հեկեկալով կրկնում էր. «Զեկ, իմ սիրելի ընկեր, և յետոյ մտածելով մի րոպէ հարցրեց.

— Պապիկ, դու ոչ մի լուր չունիս նրա մասին:

— Ոչ, պատասխանեց ժպտալով ծերունին, — բայց եթէ դու ուզում ես, այսօր կ'իւրակի է, նա տանը կը լինի, — զնանք նրա մօտ և բերենք նրան այստեղ:

— Հապա չեմ ուզիլ:

Պապն և թոռը ճանապարհ ընկան:

Իսկ Զեկը անկողին էր մտած էտիօլից իւր վերջին վերադարձից և բժիշկ

Ռիվալսի բացատրութիւնից յետոյ: Նա պարկեցաւ առանց մի խօսք ասելու և այն օրից նրան դողացնում էր: Գործարանի բժշկի խօսքով, նրա դրութիւնը հետզհետէ ծանրանում էր: Բեկիզէրն ուզում էր ուղարկել Ռիվալսի ետեից, բայց Զեկը արգելեց: Նա միայն երկու անգամ ընդմիջեց իւր յամառ լռութիւնը. մէկ անգամ այս խօսակցութեան առիթով և միւս անգամ, երբ ինդրեց տիկին Բեկիզէրին դրաւ դնել ժամացոյցն և մատանին. վատ էր խեղճերի գրութիւնը: Բեկիզէրները չատ էին ծախսել հարսանիքի համար, Զեկը մօր բնակարանի կարասիքի համար, և այժմ երեքն էլ առանց կոպէկի էին և այդ միջոցին էլ հիւանդութիւնը վրայ հասաւ, երբ ամեն ինչ թանգ էր, փայտը, դեղերը: Բայց և այնպէս չը կար զոհ, որ Բեկիզէրները չը բերէին իրանց հիւանդ ընկերոջ համար: Նոքա արդէն դրաւ էին դրել շատ իրեր:

Իրաւ է. դրացիները խորհուրդ էին տալիս տանել հիւանդին հիւանդանոց.

բայց ոչ կինն և ոչ մարդը չէին համա-
ձայնում:

Վերջապէս նոցա վիճակը շատ ծան-
րացաւ, հիւանդութիւնը և կարիքը ծանրա-
նում էին հաւասարապէս: Տիկին Բելի-
զէրը ուղարկեց իւր մարդուն «հիւանդի
տիկնոջ մօտ», ինչպէս նա անուանում
էր ոչ առանց կատակի Շարլոտային:
Բելիզէրը վերադարձաւ միայնակ, նա
մինչև անգամ չէր տեսել նրան, նրան
արգելեց տեսնելու դ'Արժանտոնն ասե-
լով. այնտեղ հիւրեր կան, ժամանակ չէ:
Այս բոլորը բարի Բելիզէրը հաղորդեց
իւր կնիկան ականջում վախենալով որ
չը լսէ Ջեկն, որի ծանր չնչառութիւ-
նը և զարհուրելի հազը լսվում էին
սենեակի խորքումը:

— Այ սնպիտան, — բացականչեց Թի-
կին Բելիզէրը լսելով մարդու պատմու-
թիւնը մինչև վերջը. — Դու էլ լաւն ես.
պէտք է բռնել էիր և ուժով ներս էիր
մտել ու բղաւել էիր այն սնպիտանին.
«Ձեր որդին մեռնում է»: Եթէ ես լինէի
քո տեղը անպատճառ կը բերէի նրան

այստեղ, իսկ դու յաւիտեան կը մնաս
թրջած հաւ: Բայց ինչ անենք այժմ,
ահա խնդիրը:

— Այն պէտք է անէք. — ինչ խոր-
հուրդ տուեց բժիշկը. պէտք է տանէ
կենդրոնական դրասենեակը, այնտեղ
նրան կը տան տոմսակ հիւանդանոց
մտնելու համար, ասաց զրացի Լեվեն-
դրէնն, որ ներկայ էր այդ խօսակցու-
թեան:

— Կամաց, կամաց, — հօժում էր Բե-
լիզէրը, ցոյց տալով անկողնի վերայ,
որ հիւանդը շուռումուր էր զալի տա-
քութիւնից:

Հասաւ լռութեան րոպէն:

— Ես համոզուած եմ, որ նա բոլորը
լսեց, — նեղութեամբ ասաց վաճառակա-
նը:

— Ինչ մեծ դժբաղդութիւն է. նա ոչ
ձեր որդին է և ոչ էլ ձեր եղբայրը:

— Նա մեր ընկերն է, — ասաց Բելի-
զէրն և այդ պարզ խօսքերի մէջ երեե-
ցաւ այնպիսի անձնագոհութիւն, այնքան
զգացմունք, որ կինը բոլորովին կարմե-
ցաւ և արտասուակից աչքերով նայեց իւր
ամուսնոյ վերայ:

Ջեկը բոլորը լսում էր, նա առհասարակ լսում էր բոլորն, ինչ խոսում էին նրա շուրջը, նա քիչ էր քնում, բայց դիտմամբ երեսը դարձնում էր նրան շրջապատող կեանքից: Ամբողջ օրը նա պարկած էր երեսը դէպի պատը, լայն բացած աչերով և եթէ պատը կարողանար խօսել, ի հարկէ կը պատմէր որ այդ, իբրև լուսնոտի, սառած աչքերում կարդացվում են կրակէ տառերով գրած «կատարեալ քամրաղղութիւն... և անսահման յուսահատութիւն» խօսքերը: Բացի պատից այդ ոչոք չէր կարող լինանալ, դժբարդը երբէք չէր զանգատում: Լինում էին րոպէներ երբ նա անիծում էր իւր անգործութիւնը, բայց ում համար աշխատէր. մայրը նրան թողեց, Սեսիլը մերժեց, այս երկու կին արմատներ ի երեսները հալածում էին նրան մինչև անգամ երազում...

Այս խօսակցութիւնից յետ միւս օրը տիկին Բեւիլդէրը վերադարձաւ իւր շրջադայութիւնից, նա վախեցաւ տեսնելով մի ուրուական, որ խօսում էր իւր մարդու հետ. դա Ջեկն էր, ամենին հազնուած և ոտքի վերայ:

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ էք վեր կացել:

— Ե՛կ, խօսիր սրա հետ, ուղում է գնալ կենդրոնական գրասենեակը:

— Բայց ինչո՞ւ համար, միթէ մենք լաւ չէինք պահպանում ձեզ: Ի՞նչ է պակաս ձեզ:

— Ոչինչ, իմ բարեկամներ, դուք չատքարի հողիք էք, բայց ինձ անկարելի է այստեղ մնալ. Մի արգելէք ինձ, աղաչում եմ ձեզ:

— Բայց այդպիսի թուլութեամբ դուք ինչպէս պէտք է գնաք, իմ խեղճ բարեկամ:

— Կը յենվիմ Բեւիլդէրի ձեռքի վերայ. երբ պէտք է շարժվել, մարդս ակամայ կը շարժի:

Հնար չը կար: Ջեկը համբուրեց տիկին Բեւիլդէրին և իջնելով սանդուղը գցեց հրաժարական հայեացքն այն բնական կարանի վերայ, ուր անցկացրել էր այնքան հիանալի ժամեր: Նա դուշակում էր որ այստեղ վերադառնալու չէ: Այն ժամանակ «կենդրոնական գրասենեակը» գտնվում էր Նոտֆֆամ եկեղեցու դի

մացը, — նա էր մոխրագոյն տխուր տես-
քով շինուածք: Զեկի և Բելիզերի ճա-
նապարհը երկար էր: Նոքա յաճախ
կանգնում էին. դեկտեմբերի մուսկէ
դանակին հիւանդն աւելի լղար և զար-
հուրելի էր երևում քան անկողնի մէջ:
Նրա մազերը քրտնաթոր էին, ամեն ինչ
պտտվում էր նրա աչքերի առաջ — սև
տներն, աղբիւրներն, անցւորականների
դէմքերը...

Դեռ շատ վաղ էր, երբ նոքա հասան
«Ալեանդրոնական գրասենեակը», բայց ա-
հագին դահլճի մէջ փայտեայ բազմոց-
ների վերայ, վառած վառարանի շուր-
ջը, հաւաքուած էին շատ հիւանդներ:
Երբ Զեկը յենված Բելիզերի ձեռքի վե-
րայ մտաւ դահլիճը, նրա վերայ գցուե-
ցան շատ անհանգիստ հայեացքներ:
Ահա «էլի մինը» կարծես, ասում էին այդ
հայեացքները և այս հասկանալի էր, ո-
րովհետև չը նայելով վարչութեան բո-
լոր աշխատանքներին, Փարիզում աւելի
շատ էին հիւանդներ քան թէ նոցա հա-
մար տեղեր: Այս քաղաքը գիտէ գոյաց-

նել հիւանդութիւններ, յանցանքների և
աղքատութեան չնորհիւ:

Այս բոլոր դժբաղդները անհամբերու-
թեամբ սպասում էին բժշկի գալուն:
Վերջապէս դուռը բացուեցաւ և մի
փոքրիկ լղար մարդ մտաւ դահլիճը:

Բժիշկը գցեց հիւանդների վերայ հաս-
տատ և զննող հայեացք և յետոյ սկսաւ
զննութիւնը: Ինչպիսի ուրախութիւն էր
արտափայլում նոցա երեսների վերայ,
որոնք ստացել էին տոմսակներ և ինչ-
պիսի յուսահատութիւն նոցա երեսների
վերայ, որոնց մերժել էին:

Մօտենալով Զեկին, բժիշկն ուշադը-
րութեամբ զննեց նրան, հարցրեց քանի
տարեկան է և արդեօք շատ ժամանակ
է, որ հիւանդ է:

Զեկը դժուարութեամբ էր պատաս-
խանում, չէր ձայնով:

— Վեր կացէք, — ասաց նրան բժիշկը
մօտեցնելով սկանջը, հիւանդի թաց շա-
րին, — Միթէ դուք ոտքով էք եկել:

— Այո:

— Զեմ հասկանում, ինչպէս կարող

էիք զալ այս դրութեամբ. այժմ ձեզ կը դնեն պատգարակի վերայ: Եւ յետոյ դառնալով Ղէպի պաշտօնատարն, որն ստորագրում էր տոմսակները, բժիշկն ասաց.

— Ողորմածութեան հիւանդանոցը, սուրբ Յովհաննէսի սենեակը և առանց խօսք աւելացնելու շարունակում էր իւր զննութիւնը:

Ի՞նչ կարող է լինել այս պատգարակներին աւելի տխուր, իրանց ծածկուած գոյնգոյն ծածկոցով, որ տատանւում է երկու զօրեղ մշակների ուսերի վերայ: Աինարմատները խաչակնքում են նրանց տեսնելիս, կարծես յուզարկաւորութեան հանդիսի հանդիպելիս լինէին, ամենքն էլ հեռանում են նրանից. յաճախ մայրը, քոյրը, աղջիկը հետնում են այդ տեղափոխւող անկողին: Զեկը լսում էր Բելիզի անհաստատ քայլերը, որը ժամանակ առ ժամանակ բռնում էր Զեկի ձեռքը, ցոյց տալու համար հիւանդին, որ նրան ամենքը դեռ չեն թողել: Վերջապէս կիսաքուն, տանջուած

Զեկին ներս տարան սուրբ Յովհաննէսի սենեակը, որ գտնւում էր ողորմածութեան հիւանդանոցի երկրորդ յարկում: Դա էր տխուր սենեակ, պատուհաններով դէպի մութ բազն և խոնաւ պարտէզը, քսան միմեանց մօտիկ անկողնակալներով, երկու խորը բազկաթոռներով վառարանի մօտ, մէկ ահագին սեղանով և մէկ պահարանով, որ մարմարեայ տախտակ ունէր: Զեկին ներս բերելիս մի քանի հիւանդներ, մոյգ գիշերազգեստներով և չլիւսայ զլիսարկներով, նայեցին նրա վերայ: Այս ահագին դահլիճի մէջ միայն մի լոյս անկիւն կար, ուր նստած էր ողորմածութեան քոյրը և բարձրանում էր մի փոքր սեղան Աստուածածնայ արձանով, զարդարուած արհեստական ծաղիկներով, մանուածներով և մոմերով:

Քոյրը խօսոյն մօտեցաւ Զեկին:

— Ո՛հ, խեղճը ինչպէս թոյլ է, պէտք է շուտով պառկեցնել նրան, — արտասանեց նա բարձր և միակերպ ձայնով:

Զեկը ոչինչ չէր հասկանում, կար-

ձեռն նա լսում էր, երազում, որ Բե-
լիզերն ասում է նրան. «Յտեսութիւն»,
որ բոլոր շուրջը խօսում են մի ինչոր 11
համարի մասին, որ չատ վատ է, իսկ
խօսակցութիւնը ճիշդ նրա մասին էր,
նա արդէն Ձեկ չէր անուանւում, այլ 11
համար սուրբ Յովհաննէսի սենեակումը:

Տակաւ առ տակաւ նա սկսում էր
յիշողութիւնը կորցնել, բայց կինարմա-
տի հանդարտ և պարզ ձայնը սթափեց-
նում էր նրան:

— Աղօթք արէք, պարօններ, — ասում
էր նա:

Ձեկի ականջին հասան աղօթքի վեր-
ջին խօսքերը, որ ասում էին. «Օրհնիր,
սվ Տէր, բարեկամներին, թշնամիներին,
բանտարկեալներին, հիւանդներին և
մեռնողներին»: Յետոյ նա քնեցաւ տեւ.
դային քնով, նրան երազում երևում էին
բանտարկեալներ, սրունք ազատւում էին
իրանց շղթաներից, ճանապարհորդներ,
որոնք յամրութեամբ շարժւում էին ճա-
նապարհի վերայ, որի վերջը չէր երե-
ւում...

№ 11, զարթեցէք, բժիշկն է, բարձ-
րացէք, թոյլ տուէք որ ձեզ տնտղեմ—
մհ, ինչպէս թոյլ էք:

Բժիշկն էր դեռ չատ երիտասարդ
մարդ, չեկ մորուքով և խելօք հայեաց-
քով: Նա առաջարկում է հիւանդին մի
քանի հարցեր.

— Ձեր արհեստը:

— Մեքենագործ:

— Գուք խմում էք:

— Խմում էի, այժմ թողեցի:

Լսութիւն, «Բայց ինչպիսի կեանք է-
իր վարում մինչև այժմ, կարծես ինքն
իրան ասում էր բժիշկը: Կարեկցութիւ-
նից որ արտայայտւում էր նրա երեսի
վերայ, Ձեկը զուլակում է որ իսկապէս
իւր դրութիւնը վատ է, այդ կասկածը
զառնում է հաւաստիք, երբ որ բժիշկի
գնալից յետ հիւանդին մօտենում է ո-
ղորմածութեան քոյրն և քնքուշութեամբ
ու զուրգուրանքով հարցնում է. «արդեօք
ունի ընտանիք, չէ սպասում այսօր հիւ-
րերի: — Ահա նրա ընտանիքը, այս եր-
կաւ մարդիկն են, այր և կին, պարզ և

բարի երեսներով. նորա ժպտում են նորան: Ուրիշ ազգականներ և բարեկամներ նա չունի:— Ի՞նչպէս ես, լաւ եւ զգում քեզ, հարցնում է Բելիզը, մինչդեռ նրա կինը դնում է Ջեկի սընարի մօտ սեղանի վերայ երկունարինջ, որ բերել էր հիւանդի համար ընծայ: Յետոյ երկունսն էլ նստում են Ջեկի անկողնի մօտ: Ջեկը լուռ է: Ինչո՞ւ վերայ է մտածում: Մայրական սիրտը դու շակեց նրա միտքը: Ջեկ, — հօժում է նորա ականջին տիկին Բելիզէրը, — ես կը բերեմ այստեղ ձեր մօրը: Նրա հանգած հայեացքը, չնորհակալութեան արտայայտութեամբ ընկնում է բարեսիրտ կինարմատի վերայ: Այո, այն բոպէից, երբ նա իմացաւ որ մահը մօտենում է, նա մոռացաւ բոլոր չարիքն, որ հասցրեց նրան մայրը, նա ցանկանում է նրան տեսնել իւր մօտ և պինդ սրտին ճմլել: Բայց Բելիզէրը չէ թողնում իւր կնոջը: Նա ինքն է գնում Շարլոտայի ետեւից: Նրա կինը մնում է մեռնողի մօտ: Ժամանակը անցնում է. Բելիզէրը դեռ

չէ գալիս, իսկ հիւանդը մեծ յուզման մէջ է: Իւրաքանչիւր բոպէ դուռը բացվում է, այցելուները շարքով անցնում են Ջեկի անկողնի մօտով, բայց մայրը չէ երևում, Նրան էլ ինչպէս և բոլոր մեռնողներին պատկերանում է երեխայութիւնը. ահա նա կրկին երեխայ է, փոքրիկ, չիկահեր Ջեկը, որ սպասում է իւր մօրը— Իդա-դէ-Բարանսին: Յայտնի բան է նա չի գալ, խուլ ձայնով կըրկնում է հիւանդը: Տիկին Բելիզէրը վեր է կենում տեղից:

— Մի լաւ, որդեակ, ես կը բերեմ մօրդ:

— Նա չի գալ, չի գալ, կրկնում է դժբաղդը:

Ողորմածութեան քոյրը թեկ է ընկնում նրա վերայ:

— Բաւական է, որդեակ, հանգստացէ՛ք:

— Ես ձեզ ասում եմ, որ նա չի գալ. դուք նրան չէք ճանաչում, նա վատ մայր է, բոլոր իմ տանջանքներս կեանքիս մէջ նրանիցն են, իմ սիրտս ամբողջ վէրք է: Երբ նա (դ'Արժանտոնը) կեղծվեցաւ, որ հիւանդ է, մայրս խոկոյն

ընկաւ նրա գիրկն,—ես մեռնում եմ,
բայց նա չէ գալիս, նա ինձ սպանեց:
Նա թուլութեամբ ընկնում է բարձի
վերայ, ողորմածութեան քոյրը թեքվում
է նրա վերայ աշխատելով մխիթարել,
իսկ մառախլապատ ձմերային օրը տակաւ
առ տակաւ աղօթանում է:

Շարլոտան դ'Արժանտոնի հետ վերա-
դառնում էին երաժշտական երեկոյթից:
Ջեկի մայրը թաւշի և մանուածքի մէջ
փայլում էր ուրախութեամբ և զեղեց-
կութեամբ: Նա հէնց զուրս եկաւ կառ-
քից, նրա ձեռքիցը բռնեց մի կինար-
մատ, որ կանգնած էր նրա տան դրանը:

— Գնանք ինձ հետ այս բոպէիս, ձեր
որդին մեռնում է և կանչում է ձեզ:

— Այդ բոլորը յիմարութիւն է, Շար-
լոտայ, այդտեղ մի թակարդ կը լինի—
կրկնում էր դ'Արժանտոնը, աշխատելով
տանել նրան տուն:

— Ձեր որդին մեռնում է, Աստուած
իմ, միթէ կան այդպիսի մայրեր:

Շարլոտան չը համբերեց. Գնանք—
բացականչեց նա և երկու կինարմատնե-
րը վազելով ճանապարհ ընկան:

Իսկ Ջեկի անկողնի մօտ այդ միջո-
ցին թեկն ընկած էր մի զեղեցիկ զը-
լուխ:

— Ջեկ, ես եմ, քո Սեսիլը:

Հիւանդը բաց է անում և խփում աչ-
քերն, որ համոզվի, թէ երազում չէ:
Ոչ. Սեսիլը այստեղ է, նա լսում է նո-
րա ձայնը: Սեսիլը խնդրում է նորանից
ներողութիւն, բացատրում է թէ ինչու
համար է նրան վշտացրել. Գանի որ նա
խօսում է—աստուածային հանգստութիւն
իջնում է Ջեկի սրտի վերայ:

— Ուրեմն դուք ինձ առաջվայ պէս
սիրում էք:

— Ես ոչորքին, բացի ձեզ, չեմ սիրել
և ոչ սքին բացի ձեզ չեմ սիրիլ, Ջեկ:

Նա ճմլեց նրա ձեռքն իւր այտին և
հծծում է հազիւ լսելի ձայնով...

— Բոլորն, ինչ պակաս էր ինձ կեան-
քիս մէջ—դուք ինձ փոխարինեցիք,
դուք ինձ համար էիք ընկեր, քոյր, կին,
մայր: Այժմ մահն էլ զարհուրելի չէ,
ես կը մեռնեմ ձեզ մօտ, մենք հաշտվե-
ցանք:

Յանկարծ Ջեկը բարձրանում է, լայն

բանալով աչքերը. — Լսեցէք, լսեցէք, ով
որ գալիս է, նա է, մայրս, — և ընկնում
է բարձի վերայ:

Նա չ'սխալվեց, երկու կանայք բարձ-
րանում էին սանդուղի վերայ:

— Ես վախենում եմ, — չձգում է Շար-
լոտան:

— Ղէ լաւ, եկէք, — բռնում է նրան
տիկին Բելիզերը, — ձեզ նման կանայք
յիբաւի որդի էլ չը պէտք է ունենան:

Ռիվալսը յետ նայեցաւ. — Կամայ, —
ասաց նա. ամենքն լսեցին, սենեակումը
լավում է միայն սուլումն, յետոյ — խորը
հոգոց:

Աստուած իմ, միթէ այս նրա Զեկն
է, — այս մեռած երեսը, այս ձգած ձեռ-
քերը, այս անշարժ մարմինը:

— Զեկ, ես եմ, — ես եմ այստեղ, —

Ոչ մի չարժանի:

— Մեռան, — զարհուրանքով աղաղա-
կում է մայրը:

— Ո՛չ, աղ ատ ու եցաւ, — պատասխա-
նում է ծերունի Ռիվալսը խիստ ձայնով:

Վ Ե Ր Զ



404

404

in D

1010

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

9-155 1 40 40454

1010

1952

2013

